

2499

Հ. ՆՍՁԱՐԼԻ

# ՊԱՏՄՎԱԾԲՆԵՐ

894.365

Ն - 15

Ն Տ Ձ Ր Ա Տ  
Ե Ր Ե Վ Ա Ն 1931

894.362  
2-15

26 NOV 2011

Հ. ՆԱԶԱՐԷԻ

# ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

11491

Թարգմ. 'բարեհեղինակ' Գ. ՄԱՆՈՍՅԱՆ

2499

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊՐԻՆՏԻՆԳՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ  
1931  
ՀԱՅԿ-ՍՏՄԵՆ  
ՍՏԱՄԵՆԻ ԿԵՆՏՐՈՆ

ՅԵՐԵՎԱՆ

10 9 JUL 2013

73 802

Պետերատի տպարան  
Իրանեպ. № 6414 (բ)  
Պատվեր № 2550  
Հրատ. № 1639  
Տիրամ 3000



25478-60

## ԿԱՇԱՌՎ ԱԾԸ

I.

5 թվի հեղափոխության հորդ ու կատաղի ալիքներն, անցնելով Վուզա գետի վրայից՝ քերում ելին կասպից ծովի գորշ ու միգապատ ափերն ու աչնաեղից ել հասնում, արձագանգում ելին կովկասյան լեռների հարավային փեշերի տակ կծկված փոքրիկ գյուղերն ու ավանները:

Այգիներով շրջապատված փոքրիկ ավանը — գավառային կենտրոնը-վորջան լուռ ու անըուն, աչնըտն ել անտեղյակ եր շրջապատի անց ու դարձերից՝ Ափրիկեյի ամենամութ ու խոր ընկած ավաղուանների նման:

Որերն անցնում ելին: Դրսից վոչ վոք չեր գալիս, նոր դեմքեր չեյին լերևում, նոր լուրեր չեյին լսվում: Միայն բամբակի գործարանի ծխնելուղից միշտ լսվող «լնկ, լնկ» միահնչուն ձայնը, կարծես, որոր ե կարգում անկողիններում քնած մարդկանց, հասկացնում, վոր այստեղ ել շնչավորներ են ապրում:

Գործարանում աշխատանքը լեռում ե: Այս-

տեղ կարելի չե տեսնել զիշեր-ցերեկ հերթափո-  
խությամբ աշխատող՝ ցերեկ ժամանակ՝ քրտնա-  
թոր, իսկ իրիկունն ըր՝ աշխուժ շարժվող բան-  
վորների գեմքերն ու սավերները:

Այստեղ աշխատում են 7—8 փութ կշռող  
բամբակի ծանր բեռների տակ տնքացող համ-  
բախներ: Բայց ուն համար և ինչո՞ւ... — իրենք  
եւ չզիտեն: «Զբավորներ»-են, «աշխատանք եւ  
անում», «հալալ քրտինքով հաց են ձեռք բե-  
րում, ընտանիք պահում»:

Աստվածն եւ այդպես ե հրամայել...

Իրիկունները յերբեմն գործարան ե գալիս  
հաստափոր, կարճահասակ, փոքր ու փայտեն  
աչքերով թավ հոնքերով մի մարդ — գործարա-  
նատերը: Նա մտանում ե մեխանիկին, տալիս ե  
մի բանի հանձնարարություններ, իսկ ընդունո-  
ղին (премиер) անհրաժեշտ կարգադրություն-  
ներ ու ցուցմունքներ տալուց հետո՝ թողնում,  
գնում ե:

Բանվորները նրան տեսնելիս խոնարհաբար  
զլուխ են տալիս, դեպի նա առանձին հարգանք  
են տածում: Վորովհետեւ նա գործարանի տեր  
ե, իրենց «բարերարը»: Յեթե չիին նրա այդ  
գործարանը, իրենք սոված կմնան:

Բանվորներից միայն մեկը կա, վոր չի սի-  
րում գործարանի ախրոջը: Սա լուրջ նայվածքով

նիհար, բայց գեղեցկադեմ մի յերիտասարդ ե:  
Յերեք տարուց ավելի յե, ինչ նա գործարանում  
մեխանիկի ոգնականի պաշտոն ե վարում:

Յերիտասարդը բանվորներին, համբախներին  
չատ ե սիրում նրանցից փոխադարձ համակրանք  
ե վաչելում: Նա մտիկ եր տալիս մեքենաներին,  
իսկ ուրիշ անգամներ ոգնում եր նաև համբալ-  
ներին, խղճում եր նրանց չարքաշ վիճակին:

25—27 տարեկան յերիտասարդ Մուհար-  
րամի վորտեղացի լինելը հայտնի չե: Կարիք ել  
չկա խմանալու: Մուհարրամը բարեխիղճ ու լավ  
մարդ ե: Բանվորներին ել այդ ե հարկավոր:

Մուհարրամն, ամեն անգամ, գործարանա-  
տիրոջը տեսնելիս՝ կարծում եր, վոր մի սարդ  
ե յեկել, կանգնել իր առաջ: Հավատացած ե,  
վոր գործարանատերը սարդի նման միշտ ձձում  
ե մոծակները — բանվորների արյունը:

Յեվ այդ հավատը Մուհարրամի մեջ հան-  
կարծակի չեր առաջացել: Այդ սարդի խնդիրն  
ուրի իր համառոտ պատմությունը:

Մուհարրամը, ամեն անգամ, աշխատանքից  
հետո, գնում ե բազարում գտնված թեյարանը՝  
ճաշելու: Յերկաթուղու կայարանից դեպի քա-  
ղաք յերկարող խճուղու վրա գտնված այս թե-  
յարանն ամեն որ ընդունում եր զանազան վայ-  
րերից յեկած հյուրեր:

Մուհարրամին միակ հետաքրքրող վայրն  
այս թեյարանն էր, վորտեղ նա հնարավորու-  
թյուն ուներ նորանոր լուրեր լսելու:

Մի որ այստեղ հյուր չեկավ սև գլխարկով,  
փոքրիկ ու սև մորուքով, սև շորեր հագած մի  
մարդ:

Այս հյուրը չերեք որ մնաց թեյարանում:  
Նա առևտրականի նման չեր: Յեթե առևտրա-  
կան լիներ, մյուս հյուրերի նման նա չել կզը-  
նար քաղաքի կշեռքի հրապարակն ու առևտուր  
կաներ:

Մա ձեռքին ուներ կաշուց պատրաստած  
մի փոքրիկ պալուսակ, վորը չերբեք գետին չեր  
դնում: Ի՞նչ կար այդ պալուսակում: Թանկազին  
իրեր կամ փող չեր կարող լինել, վորովհետև  
նման բաներ պալուսակի տիրոջը սաղ չեյին  
գալիս:

Հյուրի ծանր շարժվածքը, նիստ ու կացն  
ու քիչ խոսելը գրավել էյին Մուհարրամի ու շա-  
ղրությունը:

Յեվ հաջորդ ուրը թեյարան գնալիս, Մու-  
հարրամը ճանապարհին մտածում էր նույն այդ  
հյուրի ով լինելու մասին, — «Ջարմանալի մարդ  
է նա, — մտածում էր Մուհարրամը, — վնչ վա-  
ճառականի չե նման, վոչ ծառայողի և վոչ էլ  
բանավորի: Ով էլ վոր լինի, ծանր մարդ է: Այ-

սոր նրա հետ պիտի խոսեմ, նրա ով լինելը պի-  
տի իմանամ»:

Մուհարրամը թեյարան հասնելիս հենց  
հանդիպեց հյուրին: Թեյարանը լիքն էր մոտա-  
կա գուլգերի, յեկած գուլգացիներով:

Յերը Մուհարրամը նստելու համար տեղ  
եր փնտրում, հյուրը կարեկցարար նայելով նը-  
րան՝ տեղից շարժվեց ու ցույց տվեց ազատ  
աթոռը:

Մուհարրամն այս դեպքից շատ ուրախա-  
ցավ: Գնաց նրա մոտ, ցած ձախով բարեկեց և  
նախ քան նստելը հարցրեց:

— Դուք դեռ այստեղ եք:

Հյուրը, առանց զարմանալու, իրեն տրված  
հարցին պատասխանեց ժպտալով:

— Վնչ դեռ այստեղ եմ:

Մուհարրամն զգալով վոր տված հարցն  
անտեղի չեր, մի յերկրորդ հարց էլ տվեց.

— Ուրեմն յերեկոյան կամ առավոտյան  
գնում եք:

— Ուզում եմ յերեկոյան գնալ:

— Վերջացրի՞ք ձեր գործը:

— Ի՞նչ գործ:

Մուհարրամն զգաց իրեն բավական ծանր  
ու ծիծաղելի դրության մեջ: Մտկան՝

— Այստեղ վորեւ գործ չունե՞լի՞ք, — կրկին  
հարցեց նա:

Մուհարրամն ինչո՞ւ լիք տալիս այդ հարցե-  
րը: Ի՞նչ կապ ունեւր նրա գործերի հետը:

Այս անգամ հյուսիս սկսեց հարցնել Մու-  
հարրամին:

— Դուք այտեղ ինչո՞վ եք գրադվում:

— Բանվոր եմ, — պատասխանեց Մուհար-

րամը:

— Վճրե՞ս եր:

— Բամբակի գործարանում:

— Ուրե՞նք դուք բանվոր եք... Ձեր բա-  
ղաքն ինձ շատ դուր յեկավ: Ուրախ քաղաք է:  
Աժանութիւնն է:

Թեյարանում գանվող մարդկանց շնչից,  
կերակրի և թեյի շողիներէից ազականովել եր-  
ողը, շնչելն անկարելի լիք դարձել:

Հյուրը շարունակեց:

— Այո, ձեր քաղաքն ինձ շատ դուր յե-  
կավ: Ափսոս չկարողացա շատ սեղեր ման գալ:  
Այտեղ պետք է, վոր դեղեցիկ ու պողպեքեր  
ազդիներ վնեն:

— Հաւանական է, վոր ձեզ ցույց տվող  
չի յեղել, ասաց Մուհարրամը:

— Իհարկէ: Ո՞վ պիտի ցույց տա: Յես այտ-  
եղ ծանոթներ չունեմ:

Այս մարդու լուրջ ու խոհուն դեմքը, իր  
բոլոր գաղտնիքներով, Մուհարրամի աչքի առաջ

սկսում եր մեծանալ: — «Ուրե՞նք նա այտեղ  
վնչ մի ծանոթ չունի: Բա ինչո՞ւ չի յեկել այտ-  
եղ»: — Մտածում եր Մուհարրամը: Ուզում  
եր այդ մարդու ո՞վ լինելը անպարման իմանալ,  
գաղտնիքները հասկանալ:

— Այսոր իմ հանգստւան օրն է, չեմ աշխա-  
տում, — ավելացրեց Մուհարրամը, — թույլ ավեք  
ծանոթացնել ձեզ ձեր ցանկացած տեղերի հետ:

— Շատ ուրախ կլինեմ: Ժամի 12-ն է  
արդեն: Լավ ժամանակն է: Նեղութիւնն չաչեք,  
գնանք:

Սոսակցութեան միջոցին, Մուհարրամն ար-  
դեն նախաճաշն արել, վերջացրել եր: Թեյը խը-  
մելուց հետո վեր կացավ: Հյուսիսն էլ պաշտօսակն  
առնելով «գնանք» ասաց: Ու յերկուսն էլ թե-  
յարանից դուրս յեկան:

Մուհարրամը զիմացիներն ամբողջութեամբ  
ճանաչելու, համար, շատ ժամանակ չվատնեց:  
Ճանապարհին, ընկերով հետ ունեցած զրույցը  
բացել եր նրա աչքերը: Մուհարրամի, մինչ այդ  
վարագուշրով ծածկված աչքերի առջևից, կինո  
նկարի նման, գալիս, անցնում ելին բոլոր յեր-  
կրների տանջվող, արշուճ-քրտինք թափող բան-  
վորները, սրանց ճնշող, շարժարող ժանդարմնե-  
րը, հաստափոր, բանվորները դառն աշխատան-  
քը շահագործող գործարանատերերն ու կալվա-

ծառերերը: Գործադուլներ, համազարկեր, ապստամբություններ և այդ բոլորից հետո՝ բանվորական իշխանություն, աշխատանքի քաղաքացիություն...

Հյուրն, ահաքան պարզ ու հասկանալի լեզվով եր խոսում, վոր Մուհարրամը կասկածեց նրա մի ուրիշ լեզվից գալու, արտասովոր մի մարդ լինելու մասին:

— Յես բանվորական կուսակցության ներկայացուցիչն եմ, — ասաց հյուրը, — այստեղ դալու նպատակս քեզ նման բանվորների գանել և նրանց միջոցով ուրիշ բանվորներին գործի դըրության հետ ծանոթացնելն է: Վատան եմ, վոր դու ինձնից հետո, բոլոր ասածներս կհասկացնես ընկերներիդ: Հանձնարարություններս մի մոռանա: Ա՛ռ, քեզ հարկ լեղած գրքեր ու թերթեր ել տամ:

Նրանք արդեն հասել էլին քաղաքի ծայրում ընկած մուլթ ու ընդարձակ մի այգի: Նրստեցին կանաչ խոտերի վրա:

Հյուրը, պայուսակը բաց անելով, Մուհարրամին մի քանի գրքեր հանձնեց: Գրքերից մեկի վրա գրված եր «Սարդ ու Մոծակ»: Մի քանի ուրիշ գրքեր ևս հանձնելով՝ ասաց Մուհարրամին.

— Ինձ հետ միշտ կապ ունեցիր, նամակ

գրիր: ձեր դրության մասին ինձ տեղյակ պահիր: Ահա, քեզ տալիս եմ և իմ հասցեն: Չափազանց զգույշ և լուրջ լեղիր: Գրքերը գաղտնի տեղ պետք է պահես:

Մուհարրամն այդ իրիկուն բոլորովին չկարողացավ քնել: Մանավանդ, «Սարդ ու Մոծակ» գիրքը կարդալուց հետո, գործարանատեր Սելիմբեկի սև ու հաստ պատկերը սարդի նման արձանացավ նրա աչքի տուալ:

Առավոտյան կանուխ, Մուհարրամը հյուրին ձանապարհեց դեպի կայարան:

## II.

Ռուս-Ճապոնական պատերազմի ծանր հետևանքներից, Ռուսաստանի բոլոր ծայրամասերում առաջացած գործադուլներից ու հեղափոխության ալիքներից չկարողացավ գերծ մնալ նաև այս փոքրիկ քաղաքի գործարանը:

Սելիմբեկը, գործարանից ստացած լեկամուսները չպակասեցնելու նպատակով, սկսեց կրճատել բանվորների աշխատավարձը:

Դժգոհ էլին բանվորները: Մակայն, նրանք գործարանատիրոջից վոչինչ ավել չկարողացան վերցնել, վորովհետև, մի կողմից՝ իրերի դրությունից վոչինչ չելին հասկանում, մյուս կողմից՝ գյուղերից քաղաք թափվող չքավորները չե-

յին խուսափում աժան գներով աշխատելուց:—  
«Ի՞նչ անի Սելիմ-բեկը, ապրանքները չեն ծախ-  
վում, դրանից առաջացած վնասներն սեփեց պի-  
տի հանի,—ասում էյին նորեկ բանվորները:

Սելիմ-բեկը յերկրորդ անգամ վորոշեց պա-  
կասեցնել բանվորների աշխատավարձը և, հա-  
ջորդ որն իսկ, հայտարարեց այդ մասին:

Հայտարարութունը գալըացրեց բանվորնե-  
րին, վորոնք հավաքվելով գործարանի բակում՝  
սկսեցին աղմկել, հարայ-հրոց բարցրացնել:

Մուհարրամն ել այդպիսի առիթ եր փնտ-  
րում: Նա բարձրացավ աստիճանների վրա և  
սկսեց բարձր ձայնով ասել՝

— Ընկերներ...

Այս ձայնը թնդանոթի գնդակի նման պայ-  
թեց բանվորների սկանչներում: Բոլորն ել լուռ  
ուշադրությամբ լսում էյին յերիտասարդ Մու-  
հարրամին:

Մուհարրամի կարճ ու ազդու ճառից վո-  
զկորված՝ բանվորները նոր իմացան աշխատան-  
քի և շահագործման նշանակութունը: Յերիտա-  
սարդ հեղափոխականի արժեքը հեազհետե բարձ-  
րանում եր նրանց աչքին:

Ճառից հետո բանվորները, շրջապատելով  
Մուհարրամին, նոր-նոր հարցեր էյին տալիս և

ստանում այնպիսի պատասխաններ, վորոնց  
մինչ այդ բոլորովին անձանոթ էյին:

...Բազմում բանվորները գործադուլ են  
հայտարարել: Մանածագործարանը գործադու-  
լավորների ձեռքն է անցել: Յուլյերի ժամա-  
նակ պատուել են Նիկալայի նկարն ու գցել վոտ-  
քերի տակ... Ամբողջ վոստիկանութունն ոգ-  
նում է հարուսաներին, գործարանատերերին—  
այս յերկու դաշնակիցներին, վորոնք ձեռք-  
ձեխքի 'տված' ճնշում են բանվորներին ու աշ-  
խատավորներին:

Մի քանի հարց ու պատասխաններից հետո  
նորից սկսվեց աղմուկն ու հարայ-հրոցը: Վորոշ-  
վեց գործադուլ հայտարարել:

Այդ միջոցին գործարանի բակը մտավ Սե-  
լիմ-բեկն ու սկսեց պոռալ հրամայողական տո-  
նով:

— Այս ի՞նչ հարայ-հրոց ե: Ի՞նչու գործը  
թողել հավաքվել եք այստեղ ու գորտերի նման  
ձեն-ձենի ավել:

Բանվորները «Մարդ» ին տեանելիս լռե-  
ցին: Կարճեա, գորտերի լճակը քար գցին:  
Միայն Մուհարրամը, կժու ժպիտը լերեսին,  
պատասխանեց.

— Ավելացրեք մեր աշխատավարձը, պա-



կասեցրեք աշխատանքի ժամերը: Ահա այս են պահանջում բանվորները:

— Ձեզ ո՞վ սովորեցրեց այդ բոլորը, — ասաց Սելիմ-բեկը քահ, քահ ծիծաղելով: Դուք գիտե՞լ եք... Դուք գիտե՞ք, վոր գործերն այժմ ի՞նչ վիճակում են:

— Մեզ հարկավոր չեն այդ խոսքերը: Թանգությունը ծռել է բանվորների մեջքը, ապրելը հնարավոր չէ... — ավելացրեց Մուհարրամը:

Սելիմ-բեկն ել չխոսեց, վորովհետև Մուհարրամի խոսքերից վոզևորված՝ մյուս բանվորները ևս համարձակորեն սկսեցին նույն պահանջներն առաջադրել:

Բեկը վերադարձավ տուն:

Բանվորները հավաքված խոսում էին: Գործարանը ևս աշխատում էր աղմկալի:

Այս հավաքույթին չէր մասնակցում միայն գլխավոր մեխանիկը: Վերջինս, չերբ աշխատում էր իր մեքենայի վրա, հանկարծ դարձավ ունայեց Մուհարրամի չերեսին:

— Բեզ ասում եմ, անցիր մեքենայիդ գլուխը, — ասաց նա, — սատանայություն մի անի և ուրիշներին ել գործից մի հանի:

— Յեթե առանց ինձ չես կարող բանեցնել մեքենան, կարող ես կանգնեցնել, — պատասխա-

նեց Մուհարրամը նույն բարկությամբ:

— Արի, ասում եմ, գործիդ մտիկ արա...

— Ձի կարելի աշխատել, — ասաց Մուհարրամն ու դեպի բանվորները դառնալով՝

— Ընկերներ, — հարցրեց նա, — ուզում ե՞ք վոր մեքեքան աշխատի:

— Վոչ, վոչ — ձայն ավին բոլոր բանվորները:

Գլխավոր մեխանիկը կատաղել էր: Նա չէր տեսնում իր առաջի սարի նման կանգնած բանվորներին: Ձեռքի մեծ գլխանի մուրճով ուզեց հարձակվել Մուհարրամի վրա: Իսկ բանվորները, իրենց զեկավարին պաշտպանելու համար, վազեցին դեպի մեքենայի կողմը:

Այժմ մեխանիկը մտածում էր պաշտպանել մեքենան: Բայց համբալ կուրբանի ուժեղ ձեռքերը վաղուց նրանից խլել էին մուրճն ու դեն շարտել:

Բանվորները մեխանիկին մեծ դժվարությամբ հեռացրին մեքենայի վրայից: Մուհարրամը կանգնեցրեց մեքենան:

Գործարանի չերկար ու հաստ խողովակը վերջին անգամ շունչ առնելով՝ անձնատուր չեղավ այս փոքրիկ բանակին:

Գազազած մեխանիկը, բանվորների վրա

սպանական մի հայացք զցելով թողեց ու հե-  
ռացավ:

Մեծ էր բանվորների փոզերությունը:  
Այժմ գործարանն իր հողթված գրուխը ծռել էր  
բանվորների առաջ:

III.

Յերեք հոգուց բազկացած մի հանձնաժո-  
ղով — Մուհարրամի ղեկավարութեամբ — կանգնել  
էր Սելիմ-բեկի դռան առաջ: Հանձնաժողովը  
լեկել էր բեկի հետ բանակցութուններ վարելու:

Բեկի ծառան դուռը բացեց: Հանձնաժո-  
ղովը մտավ հատակը թանկագին գորգով պա-  
տած մի փոքրիկ սենյակ:

Մի բանի ըոպելից հետո ծառան վերադար-  
ձավ ու հրավիրեց հանձնաժողովը բեկի մոտ:

Մուհարրամն ու ընկերները ներս մտնելիս  
տեսան, Վոր Սելիմ-բեկը, փափուկ բազկաթուփն  
հենված՝ խոսում էր իր դեմ ու դեմը, զբասե-  
ղանի մոտ նստած քաղաքի պրիստավին հետ:

Դրութունը լուրջ էր ու լերկուղային:

Սելիմ-բեկը, հանձնաժողովը տեսնելիս՝ լուց  
և, անմիջապես փոխելով խոսակցութեան նյութը,  
Մուհարրամին ասաց՝

— Գիտե՞մ ինչու չեք լեկել: Լավ չեղավ, վոր

բեկն էլ (պրիստավը) սրտեղ գտնվեց: Խնդրե՛մ  
խոսեցեք:

Յեվ ապա դիմելով պրիստավին՝ ասաց.

— Ի՛նչե՛ր էք, արգյոք, վոր բանվորներս  
աշխատավարձի ավերացման պահանջ են դրել,  
ուզեցել են գործադուլ հայտարարել: Երանց ղե-  
կավարել ես ամենախելոք համարվող Մուհարրամը:

Պրիստավը, վոր իբր թե բանից անզեկու-  
թյուն չուներ, դարձացած նախեց և նախ՝ բան-  
վորներին զննելուց ապա՝ բեխերը փոխելուց  
հետո՝ ասաց.

— Զարմանում եմ: Մի՞թե զբանք իրերի  
ներկա դրությանը ճանոթ չեն:

— Ինչ վորե, նրանք այդպես են ցանկա-  
նում, — պատասխանեց Սելիմ-բեկը:


— Ուրեմն ուզում են գործադուլ անել: Կա-  
րելի չէ սրանք չզիտեն, թե գործադուլափորնե-  
րին ինչպիսի պատիժ ե սպանում... Չե, յես...

Սելիմ-բեկը, ընդհատելով պրիստավի վեր-  
ջին խոսքերը, ասաց կեղծ ժպիտով՝

— Մրանք գործադուլափորներ չեն: Ներում  
եմ սրանց: Հույս ունեմ, վոր ձերդ մեծութունն  
ել ներողամիտ կլինի:

Մուհարրամի ընկերները լինելով ազեա ու  
միամիտ բանվորներ, շուտ համոզվեցին Սելիմ-  
բեկի և պրիստավի խոսքերից: Իսկ Մուհարրամը,

1542  
2848-60



բաջ գիտենալով, վոր այդ բոլոր խոսքերն ու սպառնալիքները նախապես ծրագրված, շինծոյ բաներ են, ասաց՝

— Մենք պահանջում ենք, վոր ավելացվի մեր աշխատավարձը, պակասեցվեն աշխատանքի ժամերը: Յեթե ընդունում եք մեր այս առաջարկութեանները, այն դեպքում պատրաստ ենք վերսկսել աշխատանքները:

Պրիստավը մի կերպ գտաւ իր բարկութիւնը, Սելիմ բեկը շատ վարպետներն կրկնեց իր նախկին կեղծ ժպիտները: Մի քանի վայրկյան արեց խոր լուսթշուն:

Պրիստավը վտոքի կանգնելով՝ աշխատում եր թազնեղ իր կարմրած աչքերում բուն դրած բարկութիւնն ու ատելութիւնը:

— Սա գործադուլ ե, իսկ գործադուլավորների տեղը Միբիրն ե: Այս խոսքերն արտասանելիս, շարժվում ելին նրա լաջն—ճակատի յերակներն այնպես, ինչպես շարժվում են հոտած մտի մեջ բուն դրած վորդերը:

Իսկ Սելիմ-բեկը, պրիստավին հանգստացնելու համար, ասում եր.

— Յես խնդրում եմ, վոր բեկն այս անգամ ների: Խոսք եմ տալիս, վոր բանվորներս ել ուրիշ անգամ նման...

— Մենք վնչ մի հանցանք չենք գործել, վոր

մեզ ներեք,—ընդհատեց Մուհարրամը բեկի խոսակցութիւնը:

Պրիստավը ավելի կատաղեց: Նա չերբեք չեր սպասում, վոր բանվորն այսքան համարձակութիւն ունենա: Նրա բռունցքները պատրաստ ելին շարդելու նման «ըմբոստ» ու «անամոթ» բանվորների ատամները:

Սելիմ-բեկը, տեսնելով չերկրի խառնակ դրութիւնը, վտոքի յելով և ձեռքը դնելով պրիստավի վոսկեգոծ ուսադիրներին, առաջվա կեղծ ժպիտը յերեսին առաց.

— Բոլորովին հանգիստ յեղեք, բեկ, իսկ ինքը դառնալով բանվորներին՝

— Լավ: Գնացեք, աշխատեցեք,—ասաց նա,— յես կմտածեմ և վաղը ձեզ կպատասխանեմ: Միայն թե կարիք չկա գործերը դադարեցնել և բանվորների մեջ հուզում առաջ բերել:

— Գործադուլի դեմ մենք ունենք սուղաթներ,—ավելացրեց պրիստավը ջղայնացած: Բայց մենք ձեզ հետ կվարվենք բեկի ասածի նման...

Մուհարրամն ուզեց պատասխանել: Բայց Սելիմ բեկը նրան մոտենալով՝ ասաց.

— Գնա, Մուհարրամ, յես կմտածեմ ձեր մասին և մի ճար կանեմ:

Մուհարրամը չեր ուզում գնալ: Իսկ ընկերներն արդեն կակղել ելին:

Բանվորները գնալուց հետո, պրիստավը ու Սելիմ բեկը մի բոպե անթարթ իրար ելին նայում: Սենյակում լուսթյուն էր տիրում:

Սելիմ-բեկը, այդ աղվեսի նման խորամանկ ու «հնարագետ» մարդը, չէր ուզում, վոր բանվորներին ինքը նեղություն տված լինի կամ բանտարկի: Չէր ուզում, մանավանդ, վոր պրիստավը, իր տան մեջ, գեպի բանվորները կոշտ ու կոպիտ վերաբերմունք ցույց տա:

Տեղյակ լինելով, վոր փոստիկանական պաշտոնյաները հիմար ու աղետ մարդիկ են, Սելիմ բեկը մտածում էր այդ «կատղած» բանվորներին, մասնավորապես Մուհարրամին, ժանդարմերիայի և կառավարության բազուկներով պատժել տալ:

Յե՛վ դրա համար ել Սելիմ-բեկը պրիստավին հրավիրել էր իր տունը, լցրել էր նրա դատարկ ուղեղը զանազան կեղծ ու շինծու լուրերով, անհրաժեշտ հրահանգներ տվել: Նա հասկացել էր, վոր Մուհարրամը հեղափոխական մարդ էր, ուստի և ֆրասակար, հարկավոր էր նրան հեռացնել քաղաքից:

Պրիստավը, վոր մինչ այդ լուռ էր, վերկացավ ու պապիրոսը վառելուց հետո ասաց.

— Յես այդ մարդու հախիցը կգամ:

— Ի՞նչ պիտի անենք, — հարցրեց Սելիմ-բեկը:

— Նա անշուշտ կենտրոնի հետ կապ ունի, — ավելացրեց պրիստավը: — Վաղն անմիջապես կխուզարկեմ նրա տունը, կգտնեմ կասկածելի փաստաթղթեր, վորից հետո նրան աքսորելը հեշտ կլինի:

Այդ միջոցին ներս մտավ ծառան ու հայտնեց, վոր մեխանիկ Սալմանն ուզում է բեկին տեսնել:

Ծառան գնալուց հետո, Սելիմ-բեկն ասաց պրիստավին.

— Հավատս, ուզեցել են մեխանիկին ծեծել: Անպարման նա լեկել է մի նոր տեղեկություն տալու:

Դեպի Մուհարրամն առանձին քենով ու վրեժխնդրությամբ լցված՝ Սալմանը ներս մտավ: Սկսվեց յերկար ու բարակ խոսակցությունը...

Գործարանի բանվորներն անհամբեր սպասում էին հանձնաժողովի գալուն:

Վերջապես վերադարձավ հանձնաժողովը: Բանվորներն սկսեցին զանազան հարցեր տալ, վորոնց Մուհարրամը պտտասխանեց հեակալ կերպով. — «վնչ վոք չպիտի աշխատի: Պետք է սպասել Սելիմ բեկի պատասխանին»:

Բանվորները վորոշեցին չաշխատել:

Այժմ Մուհարրամն այս անգե՛ն բանակի գըլ-  
խավոր հրամանատարն էր համարվում: Այդ որը  
նրա փոքրիկ բնակարանը լցվում-գտցարկվում  
էր գործարանի բանվորներով: Նրա բոլոր ասած-  
ները բանվորների համար անմոռանալի սուա-  
շարկություններ էին:

Մուհարրամը վորոշեց յերկրի գրության մա-  
սին հայտնել նաև Բագվի կազմակերպությանը  
և վերջում հայանեց բանվորությանը, վոր մին-  
չև պատասխան ստանալը վոչ վոք աշխատանքի  
չպիտի անցնի:

Իրիկունն էր: Աշնան ամիսներին հատուկ հո-  
գեմաշ մի ծանրություն շրջապատել էր քաղաքը:  
Ամեն կողմ լուռթյուն ու անշարժություն էր  
տիրում:

Մուհարրամը տանը նստած մտածում էր  
այդ որվա յերկար ու բարակ և կյանքում առա-  
ջին անգամ պատահող դեպքերի մասին: Հեռո՛ւ,  
ամեն տեղից հեռու գտնվող մի բուն բանվոր-  
ների սկսած այս մեծ գործը, այս առաջին քայլը,  
նվ գիտե մինչև ո՛ւր պիտի հասնեք... կառավա-  
րությունն ի՛նչ միջոցների պիտի գիմեք...

Պրիստավի կրակոտ ու զգվանքով լի աչքե-  
րը, յերկաթե բուռնցքները կենդանացան Մու-  
հարրամի աչքերի առաջ: Հնչում էր ականջին  
պրիստավի հաստ ու խուպոտ ձայնը:

Մուհարրամը վերցրեց գրիչն ու սկսեց  
«հյուր»-ին նամակ գրել: Գրում էր նա սկսված  
գործադուլի, բանվորների հաստատակամության  
և կառավարության ձեռք տուած միջոցների մա-  
սին:

Վերջում ավելացրեց, վոր «հարյուր հազա-  
բավոր բանվոր յեղբայրներին, այս հեռավոր ու  
խուլ անկյունում պայքարող մարտիկներին մի  
մոռանաք, ուղիներ ցույց տվեք... Մարդը լարել  
է իր ցանցն ու պատրաստ վիճակումն է գրա-  
նրվում»...

Մուհարրամը նամակն ստորագրեց ու գրեց  
ծրարի մեջ: Առավոտյան մի բանվորի միջոցով  
պիտի ուղարկեք Բագու:

Մուհարրամը զգույշ էր: Նա գիտեր պրիս-  
տավի և Սելիմ բեկի չար մտքերը: Ուստի բոլոր  
կասկածելի համարվող գրքերն ու թղթերը պա-  
հելուց հետո, նամակն էլ, մինչև Բագու ուղար-  
կելը, թագցրեց ներքնակի մեջ:

Մուհարրամն իր կյանքում յերբեք այդքան  
հուզված չէր: Նա կարծում էր, վոր տան չորս  
պատերը, նույնիսկ պատից քաշ արած և տիրող  
խոր լուռթյունը խանդարող հին ժանդուսած ժա-  
մացուլցի ծուլ-ծուլ շարժվող ճոճանակն էլ լըր-  
տեսում, հետապնդում էյին իր բոլոր շարժում-  
ները:

Յերբ Մուհարրամը, նամակը թագցնելու հետևանքով քանդած ներքնակն երկարում, հայնկարձ լսեց պատուհանին կպցրած թղթի շխրտոցը: Նա խսկույն նայեց դեպի պատուհանը, փորովհետև լուսնյակ դիշեր եր, աստով մի սովեր շտապ անցնում է պատուհանի տակից:

Ասեղը ձեռքից ցած գրեց, վերցրեց սան մի անկյունում դրած ծանր մուրճն ու դուռը բաց անելով՝ կանգնեց մի կողմ:

Տան առաջ մի փոքրիկ ծառաստան կար: Մեզմ փշոզ քամուց որորվում, վայր ելին թափվում ծառերի թռչնած տերևներն ու վախ սոզ դող շխրտոցներ առաջացնում:

Մուհարրամը վախեց, ամբողջ մարմնով դուրում եր: հենվեց պատին, և շունչը ներս քաշելով՝ նայեց չորս կողմը: Վոչինչ չնկատեց:

— Պատուհանի թուղթը շարժեցնողը քամին է յեղել, — ասաց Մուհարրամը չորովի և ծիծաղեց:

— Բա սովերը...

— Աչքիս այդպես է յերևացել, — պատասխանեց ինքն իրեն:

Փամը 12-ն եր արդեն: Մուհարրամը ճրագն հանդցրեց ու մտավ անկողին:

Բայց ընեց արդյոք...

Բուրժուական և բռնավոր կառավարութչունից բավականաչափ ոտճիկ ստացող Մասնագետները, վարպետները և չինովնիկները մեծագույն մասն ընդհանրապես հեղափոխութչյան ժամանակ առանձին դեր են խաղում: Չնականալով, վոր իրենք ևս շահագործվում են, բայց և այնպես ծառայում են իրենց գլխավորներին, մեծերին և, իրենց հերթին, վաճառում են իրենցից ցած աստիճան ունեցող չքավոր ու աշխատավոր մասսաները:

Այդ ախպի մարդկանցից եր և Գործարանի ախպ մեխանիկ Սարմանը: Նա բավականաչափ ոտճիկ եր սասնում: Բացի դրանից, գործարանատիրոջ մոտ իր առանձին տեղն ունեեր:

Սարմանն իր հետ միասին աշխատող բանվորների գրութչյան մասին չեր մտածում, գործարանատիրոջից դժգոհ համբալներին «սարսախ» եր անվանում: Հաակապես յերեկվա գործադուլի ժամանակ, համբալ կուրբանի վրա կատարած անհաջող հարձակումից Չղաջնացած՝ Սարմանի սիրտը դեպի «աղ ու հաց մոռացող», «ապերախտ» բանվորները լցված եր սաստիկ բիհով ու վրեժխընդրութչյան զգացումներով:

Սարմանը շատ լավ գիտեր, վոր բանվորների

մեջ գործադուլի գաղափարներն արծարծողը, նրանց ապստամբեցնողը Մուհարրամն էր: Ուստի յերեկ, հանձնաժողովը Մելիմ-բեկի անից վերագառնալուց հետո, զնացել էր անտեղ և բոլոր յեղեղութունը մանրամասնորեն պատմել էր պրիստավին:

Պրիստավի կեզծ ու խաբեբա ծիծաղը Մալմանին — «պետական լրտես»-ի տիտղոսն ստացողին — շատ զոհ էր թողել: Վոգեկորված այդ կոչումից, նա հանձն էր առել Մուհարրամին լրտեսելու ստոր պարտականութունը:

Յեվ նույն գիշերը Մուհարրամի պատուհանի առջևից անցնողը՝ Մալմանի, այդ ստոր անրաբաժի, սովերն էր եղել:

Աշնան անձրևային մի սուսվտու Ծառերն, անձրևից պաշտպանվելու համար կծկվել էին շվաքի տակ, պատերի ճեղքերում: Հավերը վզերը ներս քաշած՝ փակել էին իրենց աչքերը: Ծառերի գեղին տերևների վրա ցանցնվող անձրևի կաթիլները՝ աշնանային նորածագ արևի շողքերի տակ՝ փայլ էլին տալիս ադամանդի հատիկների նման:

Հանկարծ լավեցին գեանի վրա փռված տերևների խշրտոց և փոսի ձախեր: Մուհարրամը սարսափահար վեր կացավ անկողնից, հաշնվեց

Ս,յդ միջոցին դուռը ծեծեցին: Լավեց պրե

տավի հաստ ու խոպոտ ձախը: Կաշձես մի ուժեղ հարված իջեցրին Մուհարրամի գլխին:

— Շրջապատեցեք սունը, — լավեց պրիստավի հրամանը:

Մի քանի գարադավոյները հեռ պրիստավը ներս մտավ և ուղիղ Մուհարրամի անկողնին մտանալով հրամայեց գարադավոյին:

— Քանզիք այս ներքնակը:

Յերկրորդ գարադավոյը բռնեց Մուհարրամին ու քաշեց:

Գարադավոյները ներքնակը քանդեցին, բուրդը դես ու դեն թափեցին:

Սաստիկ բարկութունից Մուհարրամի ամբողջ մարմինը զոդում էր: Կատարված գազանության հանդեսը նա կրճատացնում էր իր ստամենը, կրճում շրթունքները:

Նամակը գանվեց: Յերկար խուզարկութունից հետո՝ պատի մեջ թաղցրած արկղից գրքերը հանեցին:

— Հը՛րմ... Սոցխալիստութուն... Յես քեզ ցույց կտամ, — ստաց պրիստավը քմծիծաղով:

Գարադավոյները, Մուհարրամին շրջապատելով, անից դուրս հանեցին:

Մուհարրամն զգաց գալիք փտանգը: Փակեց տան դուռը: Յեվ յերը հսկողության տակ գնում էր, յետ դարձավ նա ու վերջին մի հայացք գցեց

ձանք ու դժբաղա կյանքի անբաժան իր ընկերոջ—  
փոքրիկ խրճիթի վրա:

Տեսնելով այդ իրիկուն պատուհանի առջևից  
անցնող մեխանիկ Սալմանին. Մուհարրամը հու-  
սահատ շղայնությամբ դողաց և բռունցքը թափ  
տալով՝ պնուց.

— Դավաճան...

Սալմանը խոշոր ատամները ցույց տալով՝  
ծիժադուժ եր հեգնական:

Մուհարրամին ուղիղ տարան բռնա ու զցե-  
ցին մի առանձին կամերա, ավելի ճիշտն ասած՝  
նեղ, խոնավ ու մութ մի տեղ:

Այդ որն ու զիշերը Մուհարրամի համար վսեմ  
անցան:

Իր մասին այնքան չէր մտածում նա, փոր-  
քան գործադուլի արդյունքների մասին: Մտա-  
ծելիս, նրա ամբողջ մարմինը պատում եր մի  
տաքութուն, բարկութունից կրճատացնում եր  
ատամները:

Մուհարրամը համոզված եր, վոր իրենից հե-  
տո գործադուլը վտանգի պիտի լինի արկվի:

Յե՛վ իրոք այդպես ել յեղավ:

Մյուս որն առափոտյան, արևի լույսը բան-  
տի դռան վրայի լեկաթե փոքր պատուհանից  
բանտի խոնավ պատերին ընկնելիս, գործարանի

«գեպի աշխատանք» կանչող շշակի ձայնն սկսեց  
զիւ-զիւ հնչել:

Այս ձայնը Մուհարրամի համար բայուռի  
ձայնից ավելի դառն եր ու զզվելի:

— Վնյ... հաղթվեցին... ասաց նա ու ա-  
նրդա ընկալ հատակին:

Մի ժամից հետո ներս մտավ պրիստավը:

— Բացի ձեզանից գործադուլին մասնակ-  
ցող ուրիշ ընկերներ ունե՞ք, — հարցրեց պրիստավը:

— Վոչ:

— Ի՞նչ կուտակցության եք պատկանում:

— Վոչ մի կուտակցության:

— Ի՞նչ կապ ունեք Բագվում գտնված  
մարդկանց հետ

— Վոչ մի կապ:

Պրիստավն ձեռքը դրպանը տանելով՝ հանեց  
մի ծրար ու Մուհարրամին ցույց տալով «հյու-  
րին» գրված նամակը՝ ասաց.

— Սա ի՞նչ նամակ է: Ո՞ւմ ելիք գրում,  
անասունի զավակ: Ապա ավելացրեց.

— Քեզ Սիբիր ուղարկելու համար այս  
փաստաթուղթն ել բավական է, — սպառնաց նա  
ու Մուհարրամի յերեսին մի ուժեղ ապտակ լիջե-  
ցրեց:

Մուհարրամն ուզեց պատասխանել պրիս-



տավի ապտակին, բայց մոտիկ կանգնած գարա-  
դավոյները չթողեցին:

Ապտակի ծանր հարվածից Մուհարրամի բեր-  
նից գեանի վրա կաթեցին արյան միքանի փայլուն  
բծեր: Մուհարրամը սուկեց վերին առամնաշա-  
րից կախված առամն ու դրեց գրպանը: Պրիս-  
տավի ձեռքում զսնված թղթի վրա յերևցին  
այրան մի քանի բծեր:

\* \*  
\*

Մի ամսից հետո, Մուհարրամը հասուկ  
սլահակախմբի հսկողութեան տակ՝ դնում եր կա-  
յարան:

Դեպի յերկաթուղու կայարանը տանող խճու-  
ղու վրա սպասող ընկերները, համբայներն ու  
բանվորներն անկեղծ ու ախուր բարեններով դի-  
մավորեցին Մուհարրամին: Ծերունի համբալ  
կուրբանի վշտոտ ու հուսահատ աչքերից գլոր-  
վեցին արցունքի յերկու տաք կաթիլներ: Այդ  
կաթիլներից մեկը յերիտասարդ, տաքարյուն  
ու բանվորներին սիրող Մուհարրամի, իսկ մյուսը՝  
ծանր բեռան տակ անքացող, մազոլոտ ձեռքերով,  
արյուն-քրահնք թափող բանվորների համար եր:

Այս խուլ ու հեռավոր գավառալին կենտ-  
րոնում հանգան հեղափոխութեան առաջին կա-  
ծերը:

Սելիմ-բեկի բամբակի գործարանն ամբողջ  
12-տարի հաջող կերպով աշխատեց:

Բանվորները անխնա շահագործվում էին:  
Վնչ վոք նրանց վիճակին չեր խղճում:

Վորովհետև... Մուհարրամը չկար և նրա  
վնասեղ լինելը հայանի չեր

VI.

Անցան 12 յերկար ու ձիգ տարիներ:

Այս յերկար ժամանակամիջոցում հազարա-  
վոր Մուհարրամներ վոչնչացան:

Սև ու սարսափելի հեղաշրջումը մի շարք  
արյունոտ ու վրիժառու դեպքեր առաջացրեց:

Մեծ Ռուսաստանի ամեն կողմից սկսվող  
գործադուլների, ապստամբութունների բոցավառ  
ալիքները հանգցվեցին հեղափոխական բանվոր-  
ների ու գյուղաղացիների արյունով:

Բայց հարստահարվածների արյունով ներկ-  
ված յերկգլխանի արծիվը շատ յերկար դիմանալ  
չեր կարող:

Պարզ եր, վոր հեղափոխութեան կաշծերից  
բոցեր պիտի սռաջան:

Այդպես ել յեղավ:

Մի որ փետրվարյան, մյուս որը հոկտեմ-  
բերյան հորիզոնների վրա ծածանվեցին կարմիր  
դրոշակները:

Մեն՝ փոքերու թիւով լցված՝ ժողովրդի չքովոր խմբերը ապապել ելին ցարերի գահը, վառքերի տակ փշեղ ելին զենքաւորների, կալվածատերերի, իշխանների գլխները:

Բայց «Մուհարրամների նմաններին՝ ծնող» հարավային այս վայրերում տակալին տնքում ելին համբալ կուրբանների մարնմիները: Չքավորութիւն ու շահագործման ծանր բեռների տակ գալարվում ելին նրանց կոնակները:

Յե՛վ այս դրութիւնը շարունակվեց 2-ից ալիլի տարիներ:

Ներքին պայքարը հետզհետեւ ուժեղանում եր: Վերջապէս... հյուսիսից բարձրացող հոկտեմբերյան դրոշակն իր վտակեցո՞ծ թևերը տարածեց հովհաստան լեռներից դեպի հարավ:

Մեր նկարագրած փոքրիկ քաղաքն ելի նույնն եր մնացեր, նորից լավում ելին միլիոնի հախկանների հարայհրոցը, գոմեշների ու յեզների համրաքայլ սայլերի ճոխնչները...

Իսկ քաղաքը, աշնանային սրտամաշ միզով պատած այդ քաղաքը, թողնած տերևների խշրրտոցների փոխարեն՝ այժմ գարգարված եր գարնան կարմրաւուն արևի լույսի տակ փայլող կանաչ ու չերիտասարգ ծառերով, վորոնք սրբվում ելին թեթև փշոյ գեփյուռից: Ամենուրեք լավում

ելին սոխակների ու ծիծեռնակների բաղցը, փոքեպարար դալլայները:

Ամեն բանում զգացվում եր մի նորութիւն: Շրջապատն ամբողջութիւն փոխվել, նոր կենդանութիւն եր ստացել:

Միայն այս բոլոր փոքերութիւնների, այս բոլոր նորութիւնների մեջ չեր լավում գործարանի թախծոտ ու աղմկալից ձայնը:

Այսոր կայանալու չեր արտակարգ հանձնաժողովի նիստը:

Կարմիր սիւնոցով ծածկված սեղանի շուրջը նստած ելին 7 հոգի: Սրանք Հեղեճի անդամներն ելին, վորոնք հազել ելին շատ պարզ, չերևում ելին լուրջ ու աշխույժ:

Որակարգում դրված եր մի լուրջ խնդիր: Արտակարգ հանձնաժողովը մի շարք «անձնավորութիւնների» պատիժը պիտի հաստատեր: Սրանք հեղափոխութիւնը չհավատացող և ապստամբութիւն տարին\*) աշխատավորութիւնը դավաճանող մարդիկ ելին:

\*) Մենք 1917—1920 թվականները ևս ապստամբութիւն տարիներ ենք համարում, վորովհետև այս տարիներն, Աղբրեջանի բանվորների և գյուղացիների համար խսկի չեղ ցարական բանավորութիւն շրջանից լավ չեն յեղել:

Ծանօր. Հեղինակի

Մուհարրամը փոքրիկ զանգակը հնչեցրեց:  
Սենյակում տիրեց խոր լուռություն:

Քարտուղարը կարգաց մի շարք անուններ:  
Սրանցից շատերը Մուհարրամի 14 տարի առաջ  
գիտեցած անուններն են:

Ամենից վերջը կարգացվեց հետևյալ անու-  
նը—Սարման Մուրադով:

Այս անունը Մուհարրամին հիշեցրեց 15  
տարի առաջ կրած ծանր ու սոսկալի իր որերը:

Բայց նա սկսեց մտածել: Ուրիշից անձնա-  
կան հողի վրա վրեժխնդիր լինելու բնավորու-  
թյուն չունեիր նա: Ուզում եր, վոր նմաններին  
սլոյտեառական արգարտագատությունը դատա-  
պարտի, արժանի պատիժը տա:

Հինգ բոպելից հետո դատավորությունն  
սկսվեց:

Դատապարտյալները խոսում ելին առան-  
ձին-առանձին:

Բուրբից հետո ներս բերին Սալմանին:  
Վերջինս Մուհարրամին տեսնելիս՝ այլապվեց և  
գուր տեղը ճգնում եր թագցնել իր հուզմունքը:

Մուհարրամն այլևս չուզեց ճնշել այդ մար-  
դուն, վորն արդեն հաղթված, անկարող եր իրեն  
պաշտպանել: Նա անմիջապես սկսեց խոսեցնել  
Սալմանին:

Հոգեպես տանջվող Սալամը արված հարցերին

կեղծ ու հնարավի պատասխաններ եր տալիս:  
Հայտարարում եր, վոր, իբր թե ինքը 10 տարի  
առաջ հեղափոխական ե լեղել, վոր Մուհարրամն  
իրեն լավ ե ճանաչում:

Մուհարրամը հանկարծ մի բան հիշեց: Գրպա-  
նից հանեց փողի քսակը և նրա մեջից հին շորի  
մեջ փաթաթած մի բան:

15 տարի առաջ սլոյտավի ապտակից կո-  
արված առամն եր այդ:

Մուհարրամը կանչեց քարտուղարին և կար-  
գազրեց նրան բերել վերոհիշյալ խնդրի հետ  
առնչություն ունեցող գործը:

Մի ժամից հետո վերադարձավ քարտու-  
ղարը, հեաը բերելով դեղնած ու փոշակալած  
թղթերի մի կապոց:

Այս թղթերը հանված ելին նախկին գավա-  
ռային ուսըրավալի գաղտնի արխիվից:

Թղթերի շապկի վրա գրված եր. — «1905թ.  
Մուհարրամ Կաչալ ողլու գործը»:

Մուհարրամը մեկ առ մեկ աչքի անցկաց-  
րեց գործը: Թղթերից մեկը գրավեց նրա ուշա-  
գրությունը: Թղթի վրա նկատեց կարմիր և գոր-  
շագույն բծեր:

Մուհարրամն այդ թուղթը կարդալիս դողում  
եր ամբողջ մարմնով:

Այս թուղթը, նույն թվականին սլոյտավի

բառնոցքներից ճգմված՝ շրթունքների արյունով  
ներկված նամակն էր:

Հոգնած էր Մուհարրամը. Փռվեց թիկնա-  
թոռի վրա և զլուխն առավ ձեռքերի մեջ: Հեռո  
մի քանի ըոպե նալեց թղթին:

Ամբողջ 10 տարի, Միբիրի սառցապատ դաշ-  
տերում անցկացրած ծանր ու առժանակիր  
կյանքը մանրամասնորեն, կինոնկարի նման, յե-  
կավ, անցավ նրա աչքերի առաջևից:

Այս նամակը նրա արտորավալրում քաշած  
տանջանքների պատճառը յեղող առաջին «փաս-  
տաթուղթն» էր.

Արևը մայր էր մտել: Բանտը շրջապատված  
էր թանձր խավարով:

Մարմանը, առանձին կամերում նստած՝  
մտածում էր այդ սրված խոսակցությունների և  
բախտի իրեն ինչ ճանապարհով տանելու մասին:

Չարագործ մարդ էր նա: Շարունակ բան-  
վորներիին ճնշելուց և գործարանատիրոջն ու  
նմաններին ոգուտ ցուլց տալուց առանձին հա-  
ճույթ էր զգում:

Իսկ այժմ իր արածների պատիժը պետք է  
կրեր:

Հանկարծ լավեցին վոաքի ձայներ: Կամերայի  
դռան առջև մի քանի մարդիկ կանգնեցին: Դու-

ռը բացվեց և ազոտ մի լույս լուսավորեց Սալ-  
մանի հոգնած ու մտածկոտ զեմքը:

Յեկողներից մեկը մտավ կամերան, իսկ  
մյուս յերկուսը փակեցին դուռն ու կանգնեցին  
դրսի կողմը:

— Գիտե՞ս ինչու եմ յեկել:

Մարմանը ճանաչեց այդ ձայնը: 15 տարի  
առաջվա լսած ձայնն էր, վորը հիմա ավելի լուրջ  
ու լշխող էր դարձել: Մուհարրամն էր:

Մուհարրամը ձեռքի լապտերը ցած դնելով  
ավելացրեց, — յես յեկել եմ անձամբ քեզ հետ հա-  
շիվ տեսնելու... Կարգն այս թուղթը... հը հի-  
շեցի՞ր... Մբանք այն գործերն են, վորոնք պատ-  
ճառ յեղան իմ արտորին: Հիմա, Մարման, այս  
թղթերը թերթիք և վկա յեղիր թե իմ կրած  
տանջանքների և բանվորների գործադուլի սկզբ-  
ընապատճառն սիլ է յեղել:

Մուհարրամը խոսում էր բավական սառ-  
նարյուն: Մի թուղթ ևս հանեց նա ու Սալմանին  
տալով ասաց.

— Հիմա սոս կարգա: Տեսնում ե՞ս քո ստու-  
րագրությունը: «Նորին Մեծություն» պրիստա-  
վին տեղեկացրել ես, վոր յես կասկածելի մարդ-  
կանց հետ գրավոր կապ եմ ունեցել... Այդպէս  
է: Այժմ սբան նալիր այս արյունոտ թղթին: Իմ  
ներքնակում թագցրած նամակն է: Գիշերը յե-

կար, տեսար ինձ և զնացիր պրիստավին լուր  
տալու, վորի հիման վրա՝ պրիստավը հաստատեց,  
վոր յես ապատամը ու կասկածելի մարդ եմ յի-  
դել... Այժմ Ստրման, այս բոլորին ինչ պիտի  
պատասխանես...

Ստրմանը լուռ եր: Գլուխը կախ՝ վոչինչ չեր  
խոսում: Նա տանջվում եր: Նրա մեջ նկատվում  
եր վախի և կեղծ գղջումի արտահայտութունս  
Մուհարրամն զգում եր այդ բոլորը: Նա շարու-  
նակեց —

— Տեսնում եմ, վոր վախենում ես... վոչ  
մի վախենա: Յես իմ անհատականության հա-  
մար վրեժ առնող չեմ: Այդ բանը բանվորներին  
վաչել չե: Յես այս թղթերը պատում եմ, դե՛ն  
եմ դցում: Առանց այն եր, բանվորները քեզ լավ  
են ճանաչում: Վոչ թե յես, այլ պրոլետարական  
արդարագատությունը կպատժի քեզ...

Մուհարրամը պատեց թղթերն ու լապա-  
քի մոմի վրա բռնրլով ալրեց: 15 տարվա հիշու-  
թյուններն իրենց մեջ պարունակող այդ դեղ-  
նած ու մաշված թղթերը այրվեցին, փոշի դար-  
ձան:

— Ինձանից չերբեք մի վախենա, — ասաց  
Մուհարրամը, — այս թղթերի կտորների հետ միա-  
սին մոռացա այն բոլորը, ինչ վոր արել ելիր  
ինձ: Առանց ինձ ել արտակարգ հանձնաժողովն

իր խոսքը կախի: Բայց ուզում եմ քեզ մի խոս-  
քով նեղացնել, ներքի — Դու պրովակատոր ելիր:  
Քեզ պիտի դատեն հենց այդ անվան համար:

Պրովակատոր... այս բառը տաս տարվա  
դառնությունը, տաս տարվա ընթացքում սրտում,  
հոգում, մարմնում կուտակված վրեժը մի կողմ  
զցող ամենաժանր մի բառ եր:

Այս բառը սրբեց, մաքրեց վրեժխնդրության  
այն բիծը, վոր տասնյակ յերկար տարիներ ծան-  
րացել եր Մուհարրամի հայելու նման մաքուր  
հատակ սրտի վրա:

Մի քանի ըոպե լուսթյուն տիրեց: Բանախ  
դուռը բացվեց և Մուհարրամն իր լապտերի հետ  
թողեց, հեռացավ:

## ՅԵՐԵՔ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԻ ԱՐԽԻՎԸ

### I.

Յեթե կամենայիք մտնել Ազրբեջանի Ս... դա-  
վառի գործադիր կոմիտեի դիվանատան ամենա-  
ցած ու կիսամութ սենյակը, այնտեղ դուք կտես-  
նեիք մի քանի սլահարաններ, մի սեղան և աթոռ,  
իսկ սեղանի յետևը ձեր աչքին կդիպչեր մի մարդ,  
վոր նստած՝ ամենայն ուշադրությամբ կարում եր  
զանազան տեսակ թղթերի կտորներ:

Այդ մարդը ձեր բոլորի գիտեցած, ճանաչած  
Չափար ամին եր:

Կարճահասակ, մեծ քթով, փոս ընկած փո-  
շեգուշն աչքերով այս մարդու փոքրիկ և սեխի  
նման յերկարաձև գլխի մեջտեղն ամբողջութեամբ  
լերկ եր և կռնակի կողմից միշտ քրտինքից մի-  
միջանց կպած սպիտակ մազերը թափվել ելին  
վրի վրա:

Նա միշտ ակնոց չէր գործածում: Միայն,  
յերբեմն, թղթերի բովանդակութեան հետ ծանո-  
թանալու համար, ճակատի վրա տեղավորված  
ակնոցները քթին հագցնելով՝ բարձր ու հեզելով  
կարգում եր գրութուններն այնպես, վոր նրա  
ձայնը միայն կողքին կանգնողներն ելին յուռ:

Չափար ամին ծիծաղելի տեսք ուներ: Նրա  
վտաքերը՝ մարմնի հետ համեմատած՝ ավելի կարճ  
խակ թիակի վտակորները բնականից ավելի կոշտ  
ու աճե եր ստեղծել բնությունը: Սակայն, հա-  
կառակ այդ բոլորի, նրա մեջ կբռնելիք աշխա-  
տանքի յեռանդ ու կարողութուն:

1901 թվից սկսած՝ Չափար ամին գավառա-  
լին վարչական բաժնի ղեկմանի վարիչն եր: Այս-  
տեղ ել՝ նրա սենյակը:

— Չափար ամի, նաչայնիկի ոգնականը  
(Կ...» գլուղի 1904 թ. գյուղապետի ընտրութեան  
առթիվ կազմված արձանագրութեան պատճենն

ուզում ե,—ասաց հերթապահ գարադավոյն ու՝  
առանց սպասելու՝ դարձավ գնաց:

Չափար ամին յերկրորդ պահարանից հանեց  
բանալինների կապոցը, գնաց արխիվը և այնտեղ՝  
առանց այս ու այն կողմն ընկնելու՝ բաց արեց  
դարակը, վերցրեց մեկ-յերկու դեղնած, բորբոս-  
նած թղթեր ու գնաց ոգնականի մոտ:

Չափար ամին ղեկմանատան մեջ բոլորի հետ  
քաղցր եր վարվում, բոլորի յերեսին ծիծաղում,  
բոլորի համար ել աշխատում եր: Նրա կյանքը  
բաղկացած եր պահեստի թղթերն այս ու այն  
կողմը շուռ տալուց, նրանց վրայի փոշիները  
մաքրելուց:

17 տարի չէր, ինչ նա աշխատում եր այն-  
տեղ և մինչև կյանքի վերջին բոպեն չէր ուզում  
բաժանվել:

Իգուր չէ, վոր մենք Չափարին Չափար  
ամի անունն ենք տալիս: Նա թե քաղաքում և  
թե գավառում բոլորի «Ամին» եր: Նույնիսկ,  
1905 թվին, յերբ նահանգապետը գավառն այցե-  
լելու ժամանակ գործադիր կոմիտեի ղեկմանա-  
տան գործերի և ծառայողների հետ ծանոթանա-  
լու համար ման եր յեկել բոլոր սենյակները,  
մոտեցել եր նաև գուռը բաց և կիսախավար մի  
սենյակի և, տեսնելով դռան առաջ չորացած ծա-

ոի նման կանգնած Ջաֆար ամուսն, դավառապետից հարցրել էր.

— Ո՞ր է սա:

— Ջաֆար ամին է, — պատասխանել էր դավառապետը:

Նահանգապետը տեսնելով Ջաֆար ամուսնանգած աչքերը, փորձեց «Ջաֆար ամի» կոչումից ուրախությամբ փայլեցին, հարցնում է նրան ժպտալով:

— Ի՞նչ սով էր:

Я портной канцелярии, Ваше Воеводство (Յես գրասենյակի դերձակն եմ, ձեր գրարեձնություն), — պատասխանել էր Ջաֆար ամին զինվորի նման բարձրաձայն և ծիծաղեցրել էր բոլորին:

Բայց Ջաֆար ամուսն պատակը բոլորին ծիծաղեցնել չէր: Ընդամենը վոր այդ ծիծաղներից բախկան դիվանը էր յեղել նա: Նա ճիշտ էր տեսել, վոր ինքը դերձակ էր, բայց կարում էր վոչ թե հանդերձներ, այլ թղթեր: Իրանում վոչ մի տարբերություն չէր Ջաֆար ամին էլ, նահանգապետի առաջ կորցնելով իրեն, այդ խոսքն էր ասել, հավատալով վոր ճիշտ է ասել:

## II.

Ջաֆար ամին չնայած վոր քիչ ոտճիկ էր ստանում, սակայն ապրում էր խնայողաբար և, շնորհիվ դրան, բյուջեն միշտ կայուն էր: Չեր ծխում, զինի չէր խմում, վրան-գլուխը չէր գարգարում, ավելորդ ծախսերից զգուշանում էր:

Բացի ամենուրյա շորերից, ունեւր նաև մի ձեռք տոնական — սև մահուկից կարած չուխա, մախմուրի մահուկից վաւրտիկ, նեղ ու իրար ազուցված արծաթե գոտի և մի հատ ել՝ ամիրական սև փափախ:

Ջաֆար ամին աշխարհում ամենից ավելի լերկուս հոգու յեր սիրում, նրանց համար ծառայում. — փոքրիկ աղջկան — Յեմենիկին և փոքրիկ կատվին: Իրիկունները Ջաֆար ամուսն ամենից շատ սպասողներն այս լերկուսն էին:

Կես ժամից ավելի դուստն սպասող փոքրիկ Յեմենիկը հորը տեսնելիս, ուրախ կանչով դիմավորում էր նրան ու վզովը փաթաթվելով՝ ձեռքը տանում էր գրպանն ու հանում իր յերթադրած մեկ-լերկուս կանգեսը, մի ճանկ լերկերից և ապա բան քան ծիծաղելով՝ բարձրանում էր պատշգամբն ու՝

— Թարլան, հայրիկը յեկավ, — հայանում էր ընկերոջը — կատվին:

Բակում լալում ելին Ջաֆար ամու սուլոցն ու ծանր-ծանր քայլերի ձայնը: Իսկ Թարլանը, նստած կոճղի վրայից, վիզը ծռելով՝ անմիջապես վազում և վզից կախած բոժոժները գնդաբացնելով՝ նստում էր Ջաֆար ամու ուսի վրա:

Պատշգամբում, սովերի տակ փոփած սեղանի շուրջը նստել էլին յերեք հոգի—Ջաֆար ամին, Յաննիկն ու Թարլանը: Իսկ Յաննիկի մայրը—Սելիմեն գեռ խոհանոցում էր:

\* \* \*

Մինչև 1914 թ. այսպես էր անցնում Ջաֆար ամու կյանքը: Յերբեմն նա մտածում էր զալիք որերի մասին:—Մեռնելուց հետո իր Յաննիկն ու Սելիմեն ի՞նչ պիտի անեն, վհնց պիտի ապրեն. Վորովհետև նրանց համար վոչինչ չէ պահել: Առաջիկա խնայողության շնորհիվ մի կերպ յուր չեն գնում:

Համաշխարհային պատերազմը չեկավ խախտելու նաև Ջաֆար ամու բյուջեն:

Այժմ մարդ ու կին ամեն որ կրկնում էին՝ «խնայողութուն պետք է անել» խոսքը: Առանց այդ էլ, այս փոքրիկ ընտանիքը խնայելու վոչինչ չուներ: Միայն նրանք բյուջեից կրճատեցին Եաննիկի կանֆեսան ու լերբեքն և Թար-

լանի համար ամեն որ գնելիք մի կտոր սև թոբը:

Յեվ այդ պատահական կերպով չեղավ: Յաննիկն ինքն էլ վոչինչ չասաց: Ամեն իրիկուն նա սպասում էր դռան առաջ, և յերբ հայրը վերադառնում էր աշխատանքից, վազում էր նրա գլրկը, բայց այլևս իր ձեռքը չէր տանում Ջաֆար ամու չեզերքները կեղտոտած զրպաններն ու վոչինչ չէր փնտրում, առաջվա պես չէր ծիծաղում չէր թոչկոտում... Նույն վիճակումն էր նաև Թարլանը: Նա չէլ տեղից չէր շարժվում, թևերը չէր թափահարում:

Մի խոսքով, գավառային վարչական բաժնի արխիվսրիուսի, այդ «մասնագետ դերձակի»—Ջաֆար ամու տան նախկին ուրախությունը հարզհետու մարում էր:

\* \* \*

16-թվականի վերջերին, ամբողջ չեզկրում ծայր սոված խառնակչութուններից զերծ չմնաց նաև այս հեռավոր անկյունում գտնվող գավառային կենտրոնը: Այն տարբերությամբ միայն, վոր յերբեմն, իրիկնապահին, Ջաֆար ամու տանը մոտիկ հարևան մրգավաճառի խանութի առաջ հավաքվում էին աղ-սակկաները, թաղի յերիտասարդներն ու սկսում էլին խոսել՝



— Ծանր ժամանակի հասանք, հա՛ն.— Աստ-  
ված վերջը բարին կատարի:

— Մինչև պատերազմը չվերջանա, գործե-  
լը չեն դրստվի...

— Այս պատերազմը շուտ վերջացող փոյ-  
ձանք չե: Դեռ Ամերիկան նոր է պատերազմում:

— Ինչքան ել պատրաստվի, դոչաղ գերա-  
նիան բոլորի պատասխանը կտա:

Այս բոլոր խոսակցութիւններէց միայ՛ մի  
խոսքը դիպավ Ջաֆար ամու սրտին:

Ուսուցիչ Միրզա հասանն ասել էր.

— Այս բոլորի առաջը միայն հեղափոխու-  
թիւնը կարող է առնել: Ռուսական գահին նըս-  
տած թագավորի հետ հաշիվ մաքրողը միայն հե-  
ղափոխութիւնը կլինի:

Հեղափոխութիւն... թագավոր... բառերը,  
Ջաֆար ամու մագերը բիզ-բիզ կանգնեցին:

— Վտանգավոր խոսքեր են սրա՛ք,—ա-  
սում եր նա,— վոր նաչալնիլը լսի, աստված գի-  
տի նրանց մորթագերծ կանի, մորթերի մեջ հարդ  
կցնի: Չե, պետք է հեռանալ այս տեղից

Յե՛վ իրոք, Ջաֆար ամին այլևս բակալի  
եանութի առջև տեղի ունեցող զրուցներն չը-  
խառնվեց:

17 թվականի սկզբից մինչև 20 թիվը շա-  
րունակվող ռեակցիայի, անիշխանութեան շրջանը  
Ջաֆար ամու վրա հետևյալ ազդեցութիւնն էր  
թողել: Թեպետ և նա ամեն տեղ չէր խոսում,  
սակայն շարունակ ինքն իրեն մտածելով ասում  
էր չհարկավոր է մի ուժեղ կառավարութիւն  
և ունք: Յեթե գործերն այսպես գնան, ժողո-  
վուրը կորսվա՛ւ:

Ջաֆար ամին, 17 թ. հեղափոխութեան հե-  
տևանով, ժամանակավոր կռիւտէին իր տեղը  
հանձնող ու հրաժարական տվող զավառապետին  
ճանապարհ գցելու ժամանակ մի քիչ լաց էր  
լեզե: Թե ինչու, ինքն ել չգիտեր:

Բայց յեթե քննենք նրա միտքն ու զգաց-  
մունքները, հետևյալ յեղրակացութեան կհանգենք  
— Ջաֆար ամին կարճ ժամանակի ընթացքում  
բոլորին վարժվող և, հետևաբար, նրանցից բա-  
ժանդլիս՝ սրտում մի ծանրութիւն զգացող տի-  
պերի է: Նա սիրում էր ազատութիւնը, գաղ-  
տնի լանկանում էր այն: Ինչու՞:

Իրպեսզի կարողանար բոլորիցն իր ոճիքը  
ազատել, ընտանիքի ապագան ապահովելու շափ-  
ոռճիկատանալ, իսկ ծերանալու ժամանակ, ար-  
խիվը անձնելուց հետո, ողի մեջ կախված չմը-  
նար:

Յե՛վ այսպէս, գա՛վառապեաից բաժանվելու  
ժամանակ, Ջաֆար ամու թորշոճած ալտեի  
վրա հույսի վազու՛ն նշույլներ յերևացին, ի՛նչ  
քթի ծայրից մինչև շրթունքները հասող յեկու  
կաթիլ արցունքի միջև մի հույս եր թափնված:  
Գնաց գա՛վառապեար և նրա հետ մխասին՝ չբա-  
ցան նաև անցկացրած կյանքի ծանր ու դժվար  
տարիները: Այժմ թերևս, ազատութիան շնոր-  
հիվ, գործերը կանոնավորվեն, ոռճիկներն յվե-  
լանան, աժանութիուն լինի և Յմենիկի համար  
— կանճե՛տ ու լեբլե՛ի, իսկ թառախին ել՝ ա թոր  
առե՛ելը հնարավոր լինի . . . . .

Բայց, ա՛վաղ... Գործերը չկանոնավորվեցին,  
ավելի վատացան:

Ջաֆար ամու՛ն ավելի շղայնացնողը յեկու  
տարվա «յերկար» շրջանում շարունակվող Բու-  
սավաթական իշխանութիունն եր (թերևս այդ  
շղայնութիունը վնչ վորի չէր հարտում):

Վերջիվերջո հայանեց իր կնիկան:

— Չգիտեմ ու՛մ եմ ծառայում,— ասց  
Ջաֆար ամին.— Ալին գնում, Վալին<sup>ն</sup> և Բալիս:  
Շարաթվա մեջ մի նաշայնիկ ե փոխվում:

Այս խոսքերը նա շատ զգուշութեամբ եր  
արտասանում:

— Շանվորդիքն ա՛վազակներ են: ամն նոր

յեկող աշխատում ե իր գրպանը լցնել: Գյուղա-  
ցիները տները բանգլեցին, կաշառք տարով վը-  
շացան: Թանգութիւնն ել՝ մյուս կողմից: Շու-  
կալում հացի ֆունար 3 ուրբի չի: Վնց պեա-  
քե ապրել...

— Ջաֆար ամու այս վախը կնոջն ել նայ-  
տնի յեղավ: Վերջինս ել նույն զգուշութեամբ  
հարցրեց՝

— Բն վնց կլինի:

— Չգիտեմ,— պատասխանեց Ջաֆար ամին  
ուսերը վեր բարձրացնելով: Ապա ավելացրեց.

— Ան գիտեմ, վոր այս լոթիներից իշխա-  
նութիուն չի լինի: Հարկավոր ե մի ուժեղ կա-  
ռավարութիուն: Քյասիր-քյուսրները ձեռքից  
զնացին...

#### IV

Ջաֆար ամու ցանկացած կառավարութիւ-  
թիունն արդեն հաստատվել եր:

1920 թ. դարնանալին պայծառ մի ուսովոս,  
գա՛վառային փոքրիկ կենտրոնական քաղաքը լեռ  
ու գետի մեջ եր:

Բայրեհիկները յեկել ելին:

Արխիվարիւս Ջաֆարի համար հույսի, լույ-  
սի մի նոր արև եր բացվել:

— Մրանք պետք է, վոր խղճով մարդիկ ինչին,—ասում եր նա: Վորքան վոր սրանց դեմքերը յերկյուղ են ազդում, կառավարական շարդկանց նման չեն, բայց և այնպես սրանց խոսքերից փրկության հոս է գալիս:

Ջաֆար ամին ուրախանում եր:

Սակախ այս ուրախությունը յերկար չտևեց:

Նախկին կառավարության բոլոր պաշտոնյաների հետ միասին՝ Ջաֆար ամին իրեն ել գլտավ բանտի մեջ: Մի սենյակում բանտարկված ելին 10 - 15 հոգի: Գավառապետ... Բեյն ել այդտեղ եր: Բոլորն ել զարմացած իրար ելին մտիկ անում:

— Մեռանք, կորանք,—ասում եր բեկը խոր հառաչանքով:

Քաղաքի լերեկի վաճառական Հաջի խուղուչը, սենյակի այս ու այն կողմը պտտելով՝ ասում եր շղայնացած.

— Դժոգք է այստեղ, չեմ կարող բնել: Խանութս փակ մնաց: Հաճախորդները պիտի կատողեն:

Ամենից շատ կատաղած եր պրիստավ Մուրսալ բեկը: Սա ահանջը խաղաղ մի կայվածատեր եր: Յերկու ամիս առաջ նաչաչիկին մի ձի յեր բաշխել ու պրիստավություն ձեռք բերել: Իսկ այժմ զղջացել եր իր արածների համար և, շղայ-

նացած վիճակում կանգնել եր սենյակի վորքրիկ պատուհանի առաջն ու չալ բեխերը կրծելով՝ ինքնիրեն մրթմրթում եր:

— Յես՝ դժբախտս՝ վոտքիս կացին խփեցի: Ի՞նչ գործ ունեյի պրիստավության հետ, վոր այս թակարդն ընկնեմ...

Իսկ ծերունի արխիվարիուսը մի անկյունում կծկված՝ խոր մտածում եր: Չգիտեր, թե ինչու լե բանտարկվել:

Յեվ, իրոք, ավելի ծայրը սրան ևս մյուս զիր-զիբիների հետ միասին դիպել ու այստեղ եր բերել:

Յերկու որից հետո բանտ լեկան յերեք անձանոթ մարդ: Մրանք շատ պարզ հագնված բանվորների նման ելին:

Ամենից առաջներս մտնողն սպիտակ, խուզած գլխով, փոնթփնթված դեմքով, խոր ու լուրջ նայվածքով մի մարդ եր: Յերկուորդն ուսուցիչ Միրզա Հասանն եր, վորի դեմքը Ջաֆար ամուն այլ կերպ թվաց: ուսուցչին հատուկ ուրախ ժըպտուն, բայց հոգնած դեմքն այս անգամ յերեվում եր շատ լուրջ ու աշխուժ: Ջաֆար ամուն ավելի հիացնողն ուսուցչի ճերմակ բլուզի տակից յերևացող ատրճանակի փողն եր:

Կարճահասակ մարդը, նախ՝ բոլոր բանապրկայներին աչքի անցկացրեց: Այս խոսքն ուզողով Միրզա Հասանին՝ ասաց.

— Ընկ. Հասան, սրանցից ո՞վ ե գա՛լտապետը: Միրզա Հասանը ցույց ավեց բեկին:

Յե՛վ ապա դառնալով գլխին կոմունարկա ծածկած ընկերոջը՝ պարզ ու սառնարյուն ասաց.

— Կուղարկեք, վոր գնա: Իսկ մյուսներն առայժմ թող մնան:

Այդ միջոցին Հաջի Խուզուշը պատի տակով մոտեցավ Միրզա Հասանին ու ցած ձայնով ասաց՝

— Այ Միրզա Հասան, Հաջին լամեն ցավդ տանի: Բա, իմ գործը վոնց կլինի: Բա, յես ի՞նչ մեղք ունիմ: Իսեր աստծու...

Կարճահասակ մարդը նայեց Հաջի Խուզուշին:

— Ո՞վ ե սա:

— Վաճառական Հաջի Խուզուշն ե,— պատասխանեց Միրզա Հասանը: Յե՛վ յերբ նոր եր վերջացրել իր խոսքը, Հաջի Խուզուշն ընդմիջեց

— Հա՛, հա՛, Կուպեց ավթարոյի գիլդի..

Ձեռքնի չալավեկ..

Կարճահասակ մարդն սկսեց ծիծաղել: Յե՛վ յերբ պատրաստվում եր դուրս գալ, Ջաֆար ամին, վոր յերկու որ եր ինչ լուս ու մունջ նրատած մտածում եր, վաղեց նրա առաջ, ու բարեի կանգնելով՝ ասաց.

— Աղա՛, բա յե՛ս: Յես ի՛նչ հանցանք ունիմ:

— Սրա մասին յես ձեզ ասել եմ, ասաց Միրզա Հասանը,— սա մեր արխիվարիուս Ջաֆարն ե: Չգիտեմ սրան ինչո՞ւ յեն բռնել:

— Այժմ «աղա» չկա, «ընկեր» կա, «ընկեր»,— ասաց կարճահասակ մարդն ու սկսեց ուշի-ուշով գննել Ջաֆար ամուն:

Ծերունի արխիվարիուսը հիացմունքից և ուրախությունից ուզում եր լաց լինել, պարզել նրա առաջ իր անմեղությունը հաստատող բոլոր ապացույցները:

— Կտեսնենք...,— ասաց կարճահասակ մարդն ու ընկերների հետ բանտից դուրս յեկավ:

V.

Ջաֆար Ամին այժմ դարձյալ իր սիրած պաշտոնն եր վարում, և ինչպես ինքն եր ասել, — «Իերձակություն» — եր անում, արխիվը պահում:

\* \* \*

Ջաֆար Ամու անձնական և ընտանեկան կյանքի մեջ նոր փոփոխություններ ելին առաջացել: Բյուջեն կանոնավորված եր:— Յե՛մենիկի կանֆեսն ու Թաւյանի համար սև թոքը

ժամանակին առնվում ելին... Սրանք մի կողմից՝  
Իսկ մյուս կողմից՝ ընտանիքի յուրաքանչյուր  
անդամն իր Առանձին աշխատանքն ունեւր։ Սե-  
լիմեն աշխատում եր կանանց ակումբում։ Փոք-  
րիկ Յեմենիկը, վզին կարմիր լերիզ կապած՝  
դպրոցից վերադառնալուց հետո պիտներական  
խմբակն եր հաճախում։ Իսկ Ջաֆար Ամին, աշ-  
խատանքից հետո, մի ժամ ավելի աշխատում եր  
տեղական կոմիտեյում։

Յեվ այսպես՝ ամեն իրիկուն Ջաֆար Ամու-  
տանն սկսվում եր քաղցր խոսակցութիւնն, ա-  
մեն մեկն որվա աշխատանքի ընթացքում տե-  
սած, լսած նորութիւնների մասին եր պատ-  
մում։

Մի որ Յեմենիկն ասաց.

— Հայրիկ, լես կոմսոմոլ պիտի գրվեմ։  
Հարկավոր ե մեկը, վոր ինձ լերաշխավորի, ան-  
կետաս ստորագրի։

Ջաֆար ամին վոչինչ չասաց։

Մյուս որն առավոտան, աշխատանքի գը-  
նալու ժամանակ, նա դգուշութիւմբ նայեց նա-  
խագահի կարինետին, տեսավ, վոր նա աջնտեղ  
եր։ ներս մտավ։

— Հը, ինչ կա, Ջաֆար ամի,— հարցրեց  
նախագահը ծիծաղելով։

Ամութիւնաձութիւննից կարմրեցին Ջաֆար ա-

մու քիթն ու կնճռոտած դեմքը։ Վերջապես ցած  
ձայնով ասաց՝

— Մեր Յեմենիկն ուզում ե կոմսոմոլ դառ-  
նալ։ Անկետան ստորագրելու համար...

— Յերաշխավորութիւնն ե ուզում։ Տվեր։  
Ջաֆար ամին նախապես պատրաստած ան-  
կետան դրեց սեղանի վրա։

Անկետայում այսպես եր գրված.—

«Յեմենիկ Ջաֆար կըզուն, կոմսոմոլի շար-  
քերն ընդունվելու համար, լերաշխավորում եմ»։

Գործկոմի նախագահն ստորագրեց անկե-  
տան և վերադարձրեց Ջաֆար ամուն։

\* \* \*

Մի շաբաթից հետո Յեմենիկն արդեն կոմ-  
սոմոլ եր։

Ջաֆար ամին իրիկունը տուն վերադառնա-  
լիս, Յեմենիկին տեսավ տասը տարի առաջ ու-  
նեցած ուրան նայվածքով, թուրուն։

Յեմենիկն այս անգամ ավելի ուրախ քալ-  
լերով մտեցավ հորը և վզը փաթաթվելով՝ ըս-  
կեց համբուրել նրա գունատ ու սառն այտերը։

— Հայրիկ, — ասաց նա, — առանց մի խոսքի  
ինձ ընդունեցին կոմսոմոլի շարքերը։

Այս գիշեր չգիտեմ ինչու, ծերունի Արխի-  
վարիուսի սրտում ուրախութեամբ խառն, անհաս-  
կանալի մի տխրութիւնն կար, բաժանման հալի-  
տենական բաժանման մի ծանր զգացում:

Հանկարծ լերեսը դարձնելով լամպի լուսի  
տակ ընթերցանութեամբ զբաղվող Յեմենիկին՝  
ասաց.

— Աղջիկս, լես ծերացել եմ: Յեթե հան-  
կարծ մեռնեմ, ի՞նչ պիտի անես: Բեզ ո՞վ պիտի  
պահի:

Ամուսնու այս անսպասելի հարցը դարձա-  
մացրեց կնոջն ու աղջկան:

Սելիմեն ձեռքի դուրպան վայր դնելով,  
աչքերը հառեց ամուսնու յերեսին: Նրո ղեմքի  
վրա նկատվում էր վշտի և բաժանման արտա-  
հայտութիւն: Փոքրիկ աչքերն ավելի փոսացել,  
սպիտակ հոնքերն աչքերի վրա՝ վերջալուսին հա-  
տուկ մի սովեր ելին արձակել:

Ջաֆարի այս տեսքը Սելիմելի կանացի սրը-  
տում գթութեան զգացմունք առաջացրեց: Նա  
ուզում էր ձգել իրեն ամուսնու վրա, փաթաթ-  
վել նրա վզովն ու ասել. «վոչ, մի մեռնի: Թույլ  
չեմ տա, վոր մեռնես: Դու դեռ լերիտասարդ  
ես»:

Յեմենիկը հոր սված հարցերը կատակի տեղ

ընդունելով՝ զերբը վայր դրեց ու ինքն էլ կո-  
տակով պատասխանեց.

— Մայրս աշխատում և ակումբում, փող է  
վաստակում, իսկ լես էլ յերկու տարուց հետո  
ուսուցչուհի կդառնամ: Մի՞թե չենք կարող մեզ  
պահել:

Մինչ այդ, ծերունի Ջաֆարի ուղեղը զբա-  
ղեցնող ծանր մտքերը ցրվեցին: Ուրեմն, իր մեռ-  
նելուց հետո, ընտանիքի ապրուստն ապահովված  
է: Ե՛լ չեր խոսում Ապահովադրական գրամարկ-  
դից նպատակ ստանալու խնդրի մասին:

Կես գիշեր էր: Տան մեջ տիրում իր խոր  
լուութիւն:

Այդ գիշեր Սելիմեն չեր ուզում ամուսնուց  
հեռանալ, նրան միաջակ թողնել:

\*  
\*  
\*

Աշնանային գաղջ արևոտ մի ուր էր: Փողո-  
ցի յերկու կողմերի վրա կարգով տնկված սոճի-  
ներից թափվող դեղին տերևները խշրատում ելին  
կամաց-կամաց, առաջացող հուզարկավորողնե-  
րի վտաքերի տակ:

Սև մահուղե չուխալով ծածկված մի դագաղ  
ծանր-ծանր շարժվում էր մարդկանց ուսերի  
վրա:

Դագաղի յետևից գնում ելին վիղը կարմիր

յերից կապած 16 տարեկան մի աղջիկ և մագերը  
ճերմակած, յերկարահասակ մի կին:

Դադադի վրա փոփած սև չուխան տեսնելիս  
ճանաչեցի: Ջաֆար ամին էր:

Բայց ուշադրութիւնս գրավեց այն, վոր փոշ  
Սելիմեյի մեջ էր նկատվում վորքեայրի կանանց  
հատուկ սուգը և փոշ էլ Յեմենիկի մեջ՝ վորք ու  
անտեր մնացած յերեխաների վիշան ու տրամու-  
թիւնը:

Չէ՞ վոր «Մայրս աշխատում ե ակումբում,  
փող ե վաստակում, իսկ յես ել յերկու տարուց  
հետո ուսուցչուհի պիտի դառնամ, չպիտի կա-  
րողանամք ապրել»:

Յեմենիկի անցյալ գիշեր հորն ասած վերո-  
հիշյալ խոսքերը բոլոր հոգսերը վերացրել ելին:

### ՆՇԱՆԱԾԻ ԱԶՔԵՐԸ

Արևը մայր մտնելու ժամանակ, զորակայանի  
կողմից գնդի հրամանատարներին, վերջիններս  
կողմից ել ավելի կրտսերներին տրված հրամանը,  
ուսումնական ամբողջ յերկարութեան վրա որե-  
րով քնած և ապարդիւն հրաձգութիւններից  
ձանձրացած կարմիր բանակալիներին մեջ մեծ  
վոզկորութիւն էր առաջացրել:

Յուրաքանչյուր զորամասում մի առանձին

չարժում, պատրաստութիւն կար: Բոլորի սր-  
տերը բարախում ելին հաղթութեան տենչով: Ս-  
մեն ըստ ավելանում էր կյանքի շափ յերկար  
թվացող ճակատի կոիվերից շուտ ազատվելու  
բուռն ցանկութիւնը:

Այն, վաղն սկսվելու յեր վերջին, որհասա-  
կան հարձակումը...

Այս հրամանը, մի քանի ըստելում, տարած-  
վել էր ամբողջ ճակատում:

Վաղը, ինչ գնով ել վոր լիներ, մեր ձեռքը  
պիտի անցներ զիվիլիայի համար տաքտիկական  
խոշոր նշանակութիւն ունեցող գլուղը, վոր  
բաղկացած էր 40—50 տնից: Վորոշումը վերջ-  
նական էր: Հիշյալ գլուղի գրավումով վերջ պի-  
տի տրվեր մի ամսից ի վեր յերկաթի նման դի-  
մադրող թշնամու ուղմական տենչերին:

— «Արդոք վաղվա հարձակումը կարելի յե  
համարել հնարավոր և վերջնական», — այսպես ելին  
մտածում բոլորը: Գլխավոր հրամանատարներից  
սկսած մինչև կրտսերները, բոլորն ել գիտելին,  
հաստատում ելին այդ բանը:

Վերը հիշված անշուք գլուղի առաջ քսան  
որից ի վեր կարկտի նման տեղացող գնդակնե-  
րին, կալծակի նման վորտացող թնդանոթներին  
կրճքով դիմադրող, տանջվող մի սիրտ կար, վոր  
մտածում էր թե՛ բանակի ձեռք բերած խոշոր

հաղթութիւնները և թե մի րոպե առաջ հարձակում սկսելու, հաղթելու և որ առաջ իրեն նպաստող աչքերին տեսնելու մասին:

Այո, յերկու տարի առաջ այդ գլուղում թողած նրա ճամբեն սպասող, նրա հուլտոյն ու սիրովը տանջվող յերկու աչքեր կային:

Նշանածի աչքերը:

1919 թվին, կարմիր բանակն այս տեղերից նահանջելու ժամարակ, նա միանալով գլուղի շրջավոր յերիտասարդներին՝ զենք եր վերցրել և կարմիր զորամասերի հետ միասին թողել եր գլուղը:

Ահա այդ որվանից նա հրաժեշտ եր ասել իր միակ հուլսը յեղող նշանածին—Նազլուն, թողել եր նրան արցունքոտ աչքերով:

Անցնելով Ռուսաստանի ճշունածածկ անտառները, Միբիրի սառցապատ ասփատանները՝ նա մասնակցել եր մի շարք հաղթական կռիվների: Իսկ այժմ Ուրալյան հարավային ճակատներն անցնելուց հետո յերեսն ուղղել եր Կովկասյան լեռների արևոտ ու գունագեղ ստորոտները:

Մի ամիս է, ինչ նա կանգնած եր սիրածի գլուղի առաջն ու հարձակման հրամանին եր ըսպասում անհամբեր:

Բայց ինչո՞ւ այստեղի զորամասերը լուրջ կը-

ոխները չեն անցնում: Համբերութիւնը հասնում է .. Հրամանատարը հրաման չի արձակում...

Վերջապես այս իրիկուն «հարձակումն ըսկավում է»—ուրախառիթ լուրը հասավ:

Վաղը վերջնական հարձակում է:

Այդ գիշեր սպասող աչքերը քնեցին արդրք: Միայն սպիտակների անվերջ տանջանքներից հուսահատված՝ Նազլին եր, վոր իր յերևակայական թևերը սլարգած աղաչում եր— «Արի, ապատիր ինձ»:

\*  
\*  
\*

Լուսնյակը թագնված է ամպերի յետևը: Մարտկոցների ամբողջ յերկարութիւն վրա շրջում են մի քանի սովերներ՝ լուռ ու մունջ: Սանիտարները զինվորներին վիրակապեր են բաժանում: Յերկարահասակ, շիկագեմ, կապտաչա հրամանատարը զինվորներին փամփուշտներ է մատակարարում:

— Ընկեր, վաղվա հարձակումը վո՞ր ժամին է սկսվելու:

— Կարող ենք իմանալ մեր այդ հրետանիների առաջին կրակներից: Նախ մեր թնդանոթները կսկսեն կրակել, — ասաց հրամանատարն ու անցավ հարևան խրամատները:

— Վո՞չ, Այսպես ձեռնառու չէ, — մտածեց Ա-



լին: Ո՞վ գիտե, կարելի չե թնդանոթածիւները  
չուզեցին կրակել: Չգնան արդյոք թնդանոթա-  
ծիւնների հրամանատարի մոտ խնդրելու, վոր մի  
րոպե առաջ սկսեն կրակելը: Կարելի չե նա՛ ել  
սպասում ե գորակաւանի հրամանին... Իսկ յեթե  
գորակաւանն ել հանկարծ իր հրամանը փոխի...

Ինքնիրեն խոսում եր Ալին ու Ղդաջանում:  
Քսակը հանեց, մախորկայից մի պապիրոս փաթա-  
թեց և խրամատի խոնավ պատին հենվելով՝ աշ-  
քերն ուղղեց ամպերի յետևից նոր դուրս չեկող  
լուսնին ու սկսեց ծխել:

Չորս կողմը լուռ եր: Թեթև քամին որորում  
եր ամպերը՝ ջինջ ու կապուտակ ծովի վրա տա-  
րուբերվող նավակների նման: Գլուղի մոտ գանը-  
վող լճակը լուսնի շողերի տակ արծաթի նման  
փայլում եր:

Չորս տարի առաջ, ամուսն աշտպիսի մի յե-  
րեկո, տոնի պատճառով հավաքվել ելին այտեղ,  
կազամախիների տակ, գլուղի հարսներն ու աղ-  
ջիկները և նվագի ու սրնգի հնչուղներով պա-  
րում ելին ու թռչկոտում:

Նազլին ել այտեղ եր: Բաց նա վոչ վոքի  
մոտ չեք գնում, մի ծառի հենված՝ նայում եր  
լուսնին: Նրա աչքերեց վշտի ու թախծի ար-  
ցունքներ ելին կաթում:

Ալին այն ժամանակ դեռ զինվոր չեր—մո-

տեցավ Նազլուն ու ձեռքն ուսի վրա զնելով՝  
ասաց.

— Նազլի: Ի՞նչ ե պատահել, վոր այդքան  
տխուր ես յերևում:

Նազլին չպատասխանեց: Նա ամբողջ մար-  
մնով դողում եր:

— Գուցե մի ցավ ունես,—հարցրեց Ալին:  
Նազլին, առանց խոսելու թափահարեց  
գլուխը և մի րոպե կանգնեց: Ապա հանկարծ  
լուսնի լույսի տակ, փղոսկրի նման սպիտակին  
ավող թևերով գրկեց յերիտասարդի գլուխն ու  
աչքերից հոսող տաք արցունքներով թրջեց նրա  
բաց կուրծքը:

— Նազլի՛, ինչո՞ւ յես այդպես անում: Ինչո՞ւ  
յես լաց լինում:

Ալու տված հարցերի փոխարեն նազլին խոր  
հառաչեց ու կրկին փաթաթվեց նրա վզով...

Յե՛վ այդ որվանից Նազլին Ալու սիրելին եր:

\*  
\*  
\*

Հորիզոնը, ճանապարհի աջ կողմի վրա գրա-  
նված սեպանման ժայռերի յետևից, սկսում եր  
բացվել: Ամեն կողմից լուռ եր: Միայն հեռու-  
ներից լսվում ելին անասունների և մարդկանց  
դիակների վրա հավաքված շնագալների վոռնո-  
ցի ձայները:

Գծի լերկարության վրա սլափող սավերնե-  
րն այլևս չքացել եյին: Այժմ լավում եյին ողի  
մեջ ճախրող սև ագռավների և կատաղած շների  
աղանջ խլացնող ձայները:

— Ա՛խ, յերբ պիտի սկսի այս չարագուշակ  
ձայները լռեցնող թնդանոթի սուռչին կրակը:

Ողակի հրամանատարները, զլիսավոր հրա-  
մանատարների հանձնարարության համաձայն  
բոլոր շարքավին զինվորներին ուղղություններ  
եյին ցույց տալիս:

Այն զորամասը, վորտեղ Ալին եր գտնվում,  
պեսաք ե ցած իջներ և մտներ գյուղը, վորտեղ  
սլափ սպասեյին նաև ուրիշ զորամասերը:

— Բ՛ն՛ ու՛ մ՛մ... Բ՛ն՛ ու՛ մ՛մ...

Սկսեց առաջին հրետանին:

Ահռելի ձայներից ողը թնդացնող թնդանո-  
թի գնդակներն ուղղակի ընկնելով թշնամու թի-  
կունքը՝ սոսկում եյին առաջացնում: Չորս կողմը  
ըրջապատված եր թանձր ծխով:

Թնդանոթին հաջորդեցին գնդացիներն ու  
հրացանները:

Թշնամու գնդակները սուլելով անցնում եյին  
մեր գլխի վրայով և կարկառի նման խրվում հո-  
ղի մեջ:

Այդ բոլորից ավելի գերազանց եյին հրա-

մանատարների սիրտ դողացնող հրամանները:

Այս գրությունը լերկար չտեսց:

Հանկարծ ամեն կողմից տրվեցին «Վոտք ի»,  
«Իե՛ պի առաջ» հրամանները:

Սկսվեց հարձակումը: Վազող, թռչող, սողա-  
ցող մարդկանց գանգավածները հետևում եյին ի-  
րարու: Վայր ընկնողները մնում, վիրավորներն  
ընկնում, մեռածները վտաքի տակ ձխլուվում եյին:

Մի ժամ առաջ, լեքկաթե սեպի նման գետ-  
նին ցցված թշնամու զորամասերը այժմ ավելի  
քան շարժվում, ծոփի ալիքների պես միմյանց  
խառնվում, հակահարձակման եյին գիմում:  
Իրար գեմ կանգնած եյին յերկու բանակ-  
ներ...

Սվինամարան սկսվեց:

Թնդանոթների և գնդացիներե ձայները լը-  
ռեցին:

— «Ու՛ ու՛ ա՛, ու՛ ու՛ ա՛»...

Յերկինքը սարսեցնող այս ահռելի ժխտից  
դողում եր բնությունը: Ճակատ-ձակատի աված  
մարդկային այս գանգավածները վեր են կենում,  
ընկնում, վիրավորվում, մեռնում, մեռցնում...

Ժայռերից սուռջացող կայծերից բոցեր եյին  
բարձրանում, իսկ այդ բոցերը հանգցնելու հա-  
մար մարդկանց լեքակներից արյուն եր հոսում:  
Վո՛չ մի կանաչ խոտ, վո՛չ մի ծիլ:

Քիչ առաջ գորգուսացող ձախերը լուեցին։ Այժմ լավում ելին միայն տնքոցներ, նվաճոցներ և լերքեմն ել՝ աքլորի կանչերի նշան լերկարող, հազիվ լավող, հատ ու կենա «տոռա»-ի ձախերը։

Կավի դաշան ապրում եր սոսկալի, արհավրալից բողբոջներ։ Նրա կրծքից բարձրացող կրակոտ գորգուսների փոխարեն, այժմ լավում ելին խոխոսցի ձախեր։ Կարծես մեռնում եր լերկբաղունդը, հանդուժում ելին հրաբուրդները, լերկբաղարժներն ու ջրհեղեղները...

Հրամանատարների սրերը փայլում ելին ուղի մեջ և «խնձ մոտ յեկեք» ազդանշանով իրենց մոտ ելին կանչում ցրված զինվորներին։

Թշնամին նահանջում եր դեպի գյուղի կողմը։ Բայց կարծիք եր հոգին ազատել։ Գնդացիներից կարկառի նման տեղացող գնդակները հրնձում ելին թշնամուն։

Ալին ընկերների հետ միասին դեպի գյուղն եր առաջանում։ Մի բողբոջ առաջ գյուղը մըտնելու համար թռչում եր բազեյի նման։

Ահա, գետի քարերից շինված, պատերն ըսպիսակ ցեխով սվաղած մի տուն։ Մի քիչ աջն աջն կողմը՝ հարևան Սեֆդարի տնակը։ Իսկ նրբան շատ մոտիկ՝ Նազլուի ապրած բնակարանը։

վորի պատերը սպիտակ իսկ պատշգամբը կարմիր գույնով և ներկված։

— Այո՛, նրան տեսնելու համար, հարյուր բայլ առաջ պիտի գնամ,— մտածում եր Ալին ու առաջանում։

Բայց, պատերի լետեք թագնված, ծառերին սեղմված «սալտակները» լերկյուղալի չեյին։ Յեթե ձախ կողմի պարսպի վրալից կրակող թըռնամու զինվորը հեռացվի, նպատակին հասնելը դուրին կլինի։

Ալին ընկավ լերեսի վրա ու առվի միջից սկսեց կրակել։

Պարսպից այլևս կրակող չկար։ Թշնամին չբացել եր։ Վաշար փախչող թշնամուն եր հետապնդում։

Այդ միջոցին, սակայն, մի անսպասելի դեպք պատահեց։

Գյուղի հյուսիսային կողմը թագնված թըռնամու հեծելազորը հանկարծակի հարձակվեց։ Կոխվե նորից տաքացավ։ Սվիններն ու սրերն իրար ելին բաղխվում։ Գլխավոր հրամանատարը մի քիչ բարձր քարի վրա կանդնած՝ կանչում եր զինվորներին և հրամայում, վեր շարվեն։

Թշնամու հեծելազորից սև արխալուղով մի զինվոր վերափորեց հրամանատարին։

Հրամանատարին ընկած սեղը թողնելն անկա-

ըելի յեր: Թշնամու հեծելազորի վոտքերի տակ  
կիչսնար նրա մարմինը:

Ալին վագեց ու հառնելով ընկած հարչուրա-  
պետի մոտ՝ շալակեց նրան: Նա գիտեր, թե ինչ  
պետք է անի: Հարկավոր էր հարչուրապետին  
թաղցնել առվի մեջ—խորունկ մի տեղ:

Մի քանի գնդակ, վզլալով անցան Ալու ա-  
կանջի տակից, և կրծքի աջ կողմին դիպչող ու-  
ժեղ մի բան նրան ևս հրամանատարի հետ միա-  
սին փռեց գետին:

Ալին առաջին անգամ ցավ զգաց ու սկսեց  
մտածել.

— Ե՛լ սրծքով... կմեռնեմ: Պետք է մոտե-  
նալ տանը: Բայց հրամանատարին ի՞նչ պետք է  
անել: Ալին ուժ չունեք նրան մի կողմ քաշել ու  
թագցնել:

Վոտքի յելավ: Ձեռքը պարսպին դնելով մինչև  
դարբասը սողաց: Բայց վորովհետև սառուիկ  
արյունահոսությունից թուլացել էր արդեն, ըն-  
կավ դարբասի շեմքի վրա և ամբողջ ուժով ըս-  
կսեց պոռալ՝

— Նազլի...

Ուղեց նորից կանչել, բայց չկարողա-  
ցավ:

Ցեթե արգ միջոցին կարողանալ նազլուն  
տեսնել, թերևս հնարավոր լիներ հրամանատարին  
ազնառել...

\* \* \*

Գիշեր:

Նավթի լապտերի աղոտ լույսով լուսավոր-  
ված շրջիկ հիվանդանոցի սենյակներից մեկում,  
թախտերի վրա, պառկած ելին փրավորները:

Անկյունի պատի մոտ, թախտի վրա պառ-  
կած էր մի հիվանդ, վոր աչքերը գոցած՝ ծանր-  
ծանր շնչում էր:

Հիվանդի մոտ նստած էր լերիաասարգ մի  
մի աղջիկ: Նա իր մտածկոտ ու սև աչքերն ուղ-  
ղելով նրա սփրթնած ու դժգուհի դեմքին՝ զրույց  
էր անում հիվանդին այցելող բժշկի հետ:

Վերջինս հիվանդի գարկերակը քննելով ա-  
սում էր:

— Կարծում եմ, վոր ել վախենալու փոչինչ  
չկա: Այժմ նրա սիրտը կանոնավոր ու արագ է  
խփում:

— Բա ինչո՞ւ նա այդպես խնամած է լերե-  
վում: Չպիտի գարթնի:

— Հոգ մի՛ անեք: Կարելի չէ հենց հիմա լել  
գարթնի:

— Խնդրո՞ւմ եմ, բժիշկ...

— Վստահ չեղեք, վոր նա շուտով ու շքի կգա:  
Մանվան չեղկուղն անցել է: Բայց դուք նրա  
մտտից չհեռանաք: լերբ գարթնի, կանչեցեք,

ինձ, — ասաց բժիշկին ու շարունակեց քննել մյուս հիվանդներին:

Աղջիկն առաջվա պես իր աչքերը հիվանդից չեր հեռացնում, առաջվա պես նրա փափուկ մազերն էր շոյում:

Հիվանդ զինվորը խոր շնչեց:

Աղջիկն իր լերեսը մի քիչ մոտեցնելով նրա բարձր ուշադրությամբ նայեց:

Հիվանդը բացել էր աչքերն ու խելագարի նման դեռ ու դեռ նայում: Հանկարծ տեսավ իր յերեսին մոտեցող աչքերը: Արմունկներն անկողնին հենած՝ ուղուժ էր վեր կենար բաց թուրությունից ընկավ կոնսակի վրա:

— Ո՞ք... Այսքան տանջանքներից հետո դարձյալ դժվար է նրան մոտենալ, — ասաց հիվանդը:

— Ո՞ւմ ես ուղում մոտենալ:

— Նրան, այն աչքերին... Նազըն:

Նազըն իրեն չկարողացավ զսպել:

— Այի, — կանչեց ու գրկեց նրա վիզը:

Նազըն ճանաչող հիվանդ զինվորը խսկոք մտաբերեց իր հրամանատարին ու չորս կողմը նայելով՝ հարգրեց՝

— Ո՞ւր է հրամանատարը: Նրան ազատեցի՞ն արդյոք:

— Վճիռ հրամանատարը, վաշտի՞: Նա այստե՞

պառկած է, լավ է, — ասաց Նազըն, ցույց տալով յերկու քալ ա՛յն կողմը պառկած հիվանդին:

Հիվանդ հրամանատարն անկողնում նստած՝ պապիրոս էր ծխում ու ժպտալով ասում՝

— Ուշքի յեկավ արդյոք:

### ԿԱՐԱԹԵԼ

Սեղանի շուրջը նստած ելին յերկու հոգի: Սրանցից հիսուն տարեկանի մոտ, ալեխառն, դնդամ մորուքավոր Նազիրը թանձր չրթունքների մեջ տեղավորած ծխախոտի յերկար ծխամորձը ծծելով-ծծելով ասում էր,

— Յերևում է, Ասլանի զրույցը յերկար է տևելու: Մութը կոխեց, խի նա գեռ չկա:

Նազրի դեմուդեմ նստած էր Չինմազը և դուրյալ յեր հյուսում: Աչքերի վրա թափված ալեխառն ծամերն ականջի յետևը ձգելով՝ նա հարցրեց.

— Ելի, ի՞նչ զրույց է, տեսնես:

— Տոնի պատրաստություններ են տեսնում, — պատասխանեց Նազիրը ու ծխախոտի թանձր ու դառը ծուխը ողի մեջ փչելով, շարունակեց.

Մոտ որերս մեծ տոն է լինելու: Կար-

միր զինվորների տոնը: Յերեկ խոսում ելին ա-  
կումբում:

— Կարմիր զինվորների տոն.

— Այո, Կարմիր բանակի...

\* \* \*

Դուռը բացվեց ու ձեռքին պայուսակ բը-  
նած, կարճ, սևագույն վերարկու հագած, գլխին  
կարմիր թաշկինակ կապած՝ 14 - 15 տարեկան մի  
աղջիկ ներս մտավ:

— Սաստիկ ցուրտ է, ձեռքերս սառեցին,  
ասաց նա:

Չինմազը, աչքերը ձեռքի գուլպաների  
վրայից չհեռացնելով, ասաց.

— Քեզ չստացի՞, վոր ձեռնոցներդ վերցրու...  
Դեռ վերարկուդ ել չելիր ուզում հագնել:

Աղջիկն առանց պատասխանելու պայուսակ  
կախեց պատից և կծկվեց անկյունում գազո-  
վառվող վառարանի մոտ:

— Յեղորդ չտեսար: Չգիտես նա վորտե-  
մուտք, — հարցրեց Նադիրը:

Դպրոցից դուրս գալու ժամանակս նրան  
դեռ ժողովուրդն ելին: Հիմա կվերջացնեն.

— Վոր այդպես է, սամավարը տաքացրու  
աղջիկս: Յես ել մի բոպե կոոպերատիվից ծը-

խախտա առնեմ ու վերադառնամ, — ասաց Նա-  
դիրն ու վերարկուն հագնելով դուրս գնաց:

Աղջիկը մտավ խոհանոցն ու սկսեց սամա-  
վարը տաքացնել:

Չինմազն արգեն ձեռքի գուլպան վերջա-  
ցրել էր: ձեզ չերբ ձեռքի բողջան կապելով եր  
դբազվում, հանկարծ այնտեղից հանեց մի քանի  
հնացած, դեղնած թղթի կտորներ և սկսեց ի-  
րար տալ:

Այս թղթերը տեղնելիս, Չինմազը, կարծես,  
վերհիշեց անցյալի հին հիշողությունները: Ու-  
շաղբու թխամբ նայելով թղթերին՝ սրտաց.

— Կարաթել:

— Ինձ կանչեցիր, մալրիկ, — ձայն ավեց  
վերխասարդ աղջիկը խոհանոցից:

Մալրը ձեռքին բռնած թղթերը փոսց  
աղջկա առջին ու ասաց՝

— Իսկի չգիտեմ, թա այս թղթերը վնոր-  
վանից են մնացել: Կարծես, Ասլանի գինվոր  
գնալու ժամանակ գրած նամակները լինեն. Ա. ու  
տեղնեմ կարող ես կարգալ:

Կարաթելը վերցրեց թղթերից մեկը, ուշա-  
դրութեամբ այս ու այն կողմը շուռ տվեց և մորը  
վերադեռնելով՝ ասաց.

— Ե՛հ, հին, արաբերեն տառերով է գրված,  
չեմ կարող կարգալ:

Չինմազը, նամակները քրքրելիս՝ հառաչելով ասաց.

— Այս թղթերը հիշեցնում են ինձ անցյալի սև որերը: Ասլանս, կռվում լեզած ժամանակն է գրել: Չեկավ, վոր նրան կարգալ տալի այս թղթերը: Այս կարճ նամակը, այնպես գիտեմ, վոր վիրավորված ժամանակն է գրել: Տեսնում ես, գրել է, բայց չի վերջացրել:

Կարաթելն առավ նամակը, նայեց, բայց վոչինչ չհասկանալով՝ վերադարձրեց մորը. Ասլան վազեց խոհանոցն ու սամավազը բերելով՝ սեղանը պատրաստեց:

Տան մեջ տիրեց մի թեթև լուռություն. Մամավարն սկսեց իրեն հատուկ «մուգիկան»:

\* \*

Հայր ու տղա միասին մտան տուն. Ասլանը վերադարձն հանելուց հետո ասաց.

— Տոնի որը պիտի գնամ գործանոցները:

— Ինչո՞ւ, — հարցրեց հայրը:

— Կարմիր բանակալիները սոնը շնորհավորելու, զավուդից ներկայացուցիչ եմ ընտրվել: Դեռ մի շաբա նվերներ պիտի տանեմ նրանց:

— Տոնը լե՞րբ է:

— Յերեք որից հետո, փետրվարի 23 ինչ, Կարմիր բանակի տարեգարձին<sup>8</sup>

Ասլանը հանվեց ու մոտեցավ սեղանին: Մայրը նորից քրքրեց նամակները և հետո կապոցը դնելով Ասլանի առաջ՝ ասաց.

— Այ Ասլան, սրանք կարծեմ, քո գրած նամակներն են, վաղուց է, ինչ պահում եմ. Կարգա տեսնեմ, ի՞նչ ես գրել:

Ասլանը մեկառմեկ բաց անելով թղթերը՝ նայեց և անցած որերն հիշելով, ուրախությունը ցվեցին նրա աչքերը:

— Սրանք հետաքրքրական թղթեր են, — ասաց նա. Կովի դաշտից եմ գրել... ի՞նչ լավ ես պահել: Բոլորն էլ այստեղ են: Տես, վիրավոր լեզած ժամանակ գրած նամակն էլ այստեղ է:

Ծերունի Նադիրն էլ խառնվեց դրանց խոսակցությանը:

— Կարգա տեսնենք, ի՞նչ ես գրել, — հարցրեց հայրը: Վաղուցվա բան է, մոռացել եմ:

— Սպասեցեք, ուրեմն հերթով կարդամ, — Ասաց Ասլանն ու թղթերից մեկը վերցնելով՝ սկսեց բացատրել:

— Թագմական ճակատ հասնելու որն եմ գրել սա, — 10 հուլիսի, 1921 թվին:

Կարաթելը կատվի ձագի նման կծկվել էր մոր կողքին ու մտիկ էր անում: Նադիրը պապիլոսի վերջին ծուխն ողի մեջ փչելով՝ լուրջ

կերպարանք ստացավ: Իսկ Չինմազը ձեռքի կապոցը մի կողմ գնելով՝ ապշահար նայում էր աղաչի յերեսին:

— Մտիկ արե՞ք, — ասաց Աղանն ու սկսեց կարդալ Լին նամակը:

— «Միրելի հայրիկ, վագոնում և ամսակից ել՝ հիսուն վերստ դեպի ճակատը գնալու ժամանակ տեսածներին ու անցկացրածներին մասին չպիտի գրեմ: Այսօր, տոաջին անգամ քնում եմ դիրքերում: Խաղաղ գիշեր է: Արևը ծագելու հետ թշնամու թնդանոթներն սկսեցին նամակս գրում եմ ամս վալրից, վորտեղ մի ժամ տոաջ սփռվում էին թնդանոթների գնդակները՝ դժոխքի նկան բոցեր և կայծակներ:

Չինմազը հառաչեց: Կարաթելը սմբած կծկվեց ու ավելի կիպ մոտեցավ մորը, նազիրն անհամբերությամբ՝

— Շարունակութունը կարդա, — ասաց:

... «Մեր գիրքերը, շղթայի նման շարված են լեռան գագաթին: Չգիտեմ մերոնք ինչու չեն շարժվում: Մեր թնդանոթները ծանր-ծանր են պատասխանում: Թշնամու բանակը դաշտերում փռված՝ առաջանում է թռչունների յերամի նման: Գլխիս վերև հրացանի գնդակներ են սուլում և անցնում... Թշնամին միտին 500 քալ հեռավորության վրա լե գտնվում: Նորից առա-

ջանում ե: Ոհ, չգիտեմ, մեր վաշտի հրամանատարը պողպատից է ստեղծված: Նա ամբարն սառնասիրտ է, վոր չի թողնում շատ գնդակ փչոցներ...»

«Ինձանից 10 քալ հեռու, աջ կողմում, սոսկալի մի ճիչ լավեց: Գորշ մի սավերի, հողի վրայից բարձրանլով՝ նորից գեանին փռվեց: Ընկերոջս լսվել էյին: Յերկու սանիտար նրան տանում էյին և նա ծանր-ծանր տնջում էր...»

«Մեր և թշնամու միջև լերեք հարյուր քալ հեռավորութուն է մնացել: Նրանք լեռան ստորոտումն են: Ուզում են դեպի վեր մագլցել: Պառկում են, կանգնում, առաջանում: Սակայն մեր կարմիր գնդակներից զո՛հ գնացողներն էլ քիչ չեն:

«Արևը հեռագետե բարձրանում է: Մի կողմից՝ ձեռքիս տաքացած հրացանը, մյուս կողմից ել՝ բոցավառվող արևի սաստիկ ջերմութունը այրում են ինձ, ուղեղս կարծես լեփ է գալիս:

«Շարքերը խտացրած թշնամին «ուռան» կանչելով՝ առաջանում է, հորձանք է տալիս ծովի ալիքների նման... Աշխարհանցում է... Չորս կողմից լսվում են՝ աղմուկ, աղաղակ և ընկնողների, սպանվողների սուր ու որհասական տրնբոցները: Չորս կողմը պատել է թանձր ծուխ:



Մեր ումբացիզները գործի յեն անցել: Ամեն կողմից լսվում են արագիլների նման կապկապող դրնդացիքների ձայները: Թշնամին կորել է ծխի և փոշու մեջ: Յերբեմն յերևում են մեկ յերկուսը նրանցից և անհետանում պայթող ուռմբների ծխի հեղեղների մեջ...

«Հրացանս տաքացել է, ել բլթակը չի աշխատում: Վերցնում եմ վիրավոր ընկած ընկերոջս հրացանը: Կրակում եմ... Մի քանի ըոպեյից հետո, մեր գլխի վրայից սուրացող գնդակների ծուխը նոսրացել էր արդեն... Թշնամին, վիրավորներին ու մեռածներին թողնելով՝ անհետացել էր...

... «Կուրբերի հալածան, վաղը մերոնք հարձակում պիտի սկսեն: Վողջ մնամ՝ նորից կրգրեմ: Բարեներ մորս: Իմ փոխարեն Կարաթելի աչքերը հազար անգամ համբուրիր...»:

Կարաթելի աչքերը թրջվել էին: Այդ արցունքների մեջ կար և՛ վիշտ և՛ ուրախություն:

— Այս նամակը վերջացավ, — ասաց Սալանը Հիմն կարգում եմ յերկուրդ նամակը: Սա չի նույն ամսի 14 ին է գրված:

— «Սիրելի հայրիկ, անշուշտ, վիրավորվելուս մասին մորս և Կարաթելին շես հայտնում: Յերբորդ որն է, ինչ պառկած եմ մի գյուղում պատրաստված շրջիկ հիվանդանոցում: Սրանից յերեք

որ առաջ գրել էյի, վոր հարձակման պիտի անցնենք: Հարձակումն սկսվեց և վերջացավ մեծ հաջողությամբ...»:

Յերեք ունկնդիրները, հանկարծ շարժվեցին և, կարգացածները լավ հասկանալու համար, գլուխները յերկարացրին:

... «Այդ գիշերը, հողնածուխյունից աչքան խորն էյի քնել, վոր առավոտյան մեր կողմից արձակվող թնդանոթների գրդուոցից հարիվ կարողացա աչքերս բաց անել... Մեր բանակում չտեսնված, չլսված շարժում կար: Վաշտերը, ողակները, աջ ու ձախ ուղարկվեցին ձախառի բոլոր ուղղությունը: Թշնամու կողմից ել մի առանձին շարժում ու աշխուժություն եր նկատվում: Նա յել մեր դիրքերը վողողում էր թնդանոթների գնդակների տարափով:

«Այսոր հարձակվելու, արցան ծովերի մեջ լողալու, յերակներումնս յեռացող ալրունը թափելով շվերս սաստիկ բարկությունից հանգստացնելու խիտ կարիք էյի զգում: Վորովհետև յերեկվա տեսածներս յերբեք չեմ կարող մոռանալ: Այժմ սրտումս գեսլի սպիտակ թըշնամին ունեցած ատելությունը պտտժի բոցերի յեր փոխվել: Յերեկվա հարձակումից հետո ակամատես յեղա թշնամու կողմից կատարված մի դադանություն: — Սրանից 10 որ առաջ գրել

վերցրած մեր յերեք ընկերներէն յերեկ վերա-  
դարձրին: Յես չկարողացա նրանց տեսնել:  
Զգիտեմ վոնց գրեմ: Թշնամին այդ ընկերների  
վտաքերը պայտել եր ձիու նման, գլուխները մե-  
խել, իսկ ճակատների վրա շիկացած յերկաթով  
զրոշմել եր «Բոլշեիկ» բառը:

Զինմագն ու կարաթելը վերջին խոսքերից  
սարսափահար յեղած՝ խոր հառաչեցին, իսկ Նա-  
դիրը սաստիկ զայրուլթից կրճտացրեց ա-  
տամները:

Ասլանը շարունակեց՝

... «Այս բոլորը տեսնելուց հետո ուզում  
եի առանց հրամանատարի հրամանին սպասելու  
վեր կենալ, հարձակվել և մինչև մեռնելը կըռ-  
վել, վրեժ լուծել...»

«Շատ չսպասեցի: Հանկարծ լավեց հրամա-  
նատարի «վտաքի յելեք...» ձայնը: Բոլորս միմար-  
դու նման վտաքի յելանք: Կրակի ու գնդակ-  
ների տարափի տակ առաջանում ելինք... Մի  
քանի ընկերներս ընկան, մնացին: Նրանք սպան  
ված ելին»:

Փոքրիկ սենյակում սիրել եր խոր լուռ-  
թյուն: Ասլան անցած որերի արյունոտ հիշ-  
դությունների այս պատմական բաշագործու-  
թյունները կատարում եր առանձին վոզևորու-

թյամբ, իսկ սամուլարը ներզայնակ ձայնով յե-  
ռում, քլթքլթում եր:

... «Այստեղ միշտ մեզ հետ ե լինում շի-  
կաներ, կապտաշյա, կարմրագեմ և արևի տաքու-  
թյունից սևացած մի ուսու կին: Գթության  
քույր ե: Յերքեր չեմ տեսել, վոր նա մեզանից  
լեռ մնա: Շարունակ դեղերով, վիքակապերով  
լեցուն մի մեծ ու սև պայուսակ վզից քաշ  
արած՝ հեռեռում ե մեզ: 4—5 վիրավորների  
վերքերը կապելուց հետո, կրկին վազում ե մեր  
հեռեից: Տղամարդուց ավելի կարիճ ե: Կհավա-  
տա՞ք, վոր յես նրան տեսել եմ ծանր վիրավոր-  
վածին շալակած փոխչելիս: Ամեն անգամ, յերք  
նա հեռեռում ե ինձ, հավատում եմ, վոր չպիտի  
մեռնեմ... Վորքան կարիճ ու բարեսիրտ կին ե  
նա»:

Այդ միջոցին, Նադրի շրթունքներից, հա-  
կամայից դուրս թռավ «Ա, դոչադ կնիկ» խոսքը  
վոր ծիծաղացրեց բոլորին: Ունկնդիրները լուրջ  
կերպարանք մտացան: Ասլանը շարունակեց՝  
... «Թոչում եյի թոչունի նման: Վտաքերիս  
տակ ընկած վիրավորներին ու մեռածներին  
կոխկրտում, վայր ընկնում և նորից կանգնում  
եյի: Թշնամին մեխի նման ցցվել, մնացել եր:  
Մեր և թշնամու միջև 200 քայլ եր մնացել: Զորս  
կողմը ծուխ ու փոշին կանգնած ելին պատի

նման: Հրամանատարը ձի նստած մտտեցավ ինձ: Չեռքին սուր՝ նա թռչում էր բազելի նման: Ծխի միջից նկատեցի ուսադիրներով մի սպալի վոր մի փոքրիկ բլրակի յետևը թաղն լած՝ ուզում էր նշան բռնել մեր հրամանատարին: Գրն դակը բացվեց ու հրամանատարը, այդ սիրելի ընկերը, բազելի նման թափահարելով իր թևերը՝ ձիուց ցած գլորվեց...

«Գժվածի պես ելի: Չգիտեցի թե ինչ անեմ:—Վերադառնամ ընկած հրամանատարին վերցնեմ, թե առաջ վազեմ ու նրան սպանողից վրեժ լուծեմ: Հանկարծ այդ գթության քրոջը տեսա հրամանատարի գլխի վերևը կանգնած:—Հրամանատարս ել չի մեռնի, —ասացի: Հիմա փնտրում եմ այդ ուսադիրներով սպային: Նրան դտա բլրակից հինգ քալ հեռավորության վրա, սուրը քաշած՝ ուզում էր ընկերոջը սպանել: Առանց սպասելու չոքեցի և մի գնդակ արձակեցի: Սպան ձեռքը կրճքին դնելով մի ըոպե որորվեց ու վայր ընկավ:

«Վրեժս առել ելի: Ուզում եյի առաջանալ Դեռ փոքրի չկանգնած՝ հանկարծ ուսիս վրա զգացի մի ծանր հարված և ուշաթափ դրության մեջ ընկա թթենու ծառի տակ»:

Հտոդներից մեկը «Ո՞Փ» արեց: Չավակի ցավից մորմոքող Չինմազի հառաչանքն էր:

... «Աչքերս բաց արեցի ու ինձ տեսա այն արջիկ հիվանդանոցում: Առաջին անգամ աչքիս դիպան ակնոցավոր, սպիտակ գլխով ու նիհարահեմ բժիշկն ու Քրոնտոն՝ աշխատող գթության քուլը: Սաստիկ արյունահոսությունից ուշաթափված ելի: Նրանք սպասում էին իմ սթափվելուն:

— «Ել մի վախենա, չես մեռնի, — ասաց այդ զոհող գթության քուլը, իմ սթափվելուց ու րախացած՝ ժպտում ելին նրա աչքերը:

— Չեմ վախենում, — ասացի յես, — չեթե վերքս մահացու չել լինի, քո ձեռքերում կըլավանա...»: Յերկուսսել ծիծաղեցինք: Ծիծաղում էր և բժիշկը... Բաց նա ինչո՞ւ չեր ծիծաղում, չե՞ վոր նախ լեզուն չեր հասկանում...  
... «Նամակս գրում եմ գթության քրոջ թուլլավությամբ: Բարևիր մորս: Վիրավորվելուս մասին նրան վոչինչ չասես:

«Շատ եմ ցանկանում աեսնել կարաթելին: Յեթե նա այստեղ լիներ, գթության քուլըն այնքան նեղություն չպիտի բաշեր»:

ԹՈ ԱՍԼԱՆ

Կարաթելի աչքերից արցունքի լերկու կաթիլներ գլորվեցին, մեկն իր մեջ պարունակում էր քրոջ՝ զեպի վիրավոր յեղբայրը տածած ան-

հուն վիշտն ու ցավակցութիւնը, իսկ մյուսը լեղբոր կողմից իրեն տեսնելու ցանկութիւնից առաջացած սրտի թեթևութիւնը:

— Յես այս նամակը չպիտի կարդայի, վարդապետ, ինչպես տեսնում եմ, բավական լացացրեց ձեզ: Հիմա լսեցեք, կարդում եմ մի ուրիշը: Գրել եմ հուլիսի 27-ին, հիվանդանոցում յեղած ժամանակ, նշանակում ե՛ր պետ չեմ մեռել, — ասաց Ասլանը ծիծաղելով և շարունակեց:

— «Սիրելի հայրիկ, այսօր ինձ ավելի լավ եմ գտում: Առավոտյան շատ կանուխ բժիշկն ու գթութիւն քուրը ներս մտան և հիվանդներին նայելուց հետո մտեցան ինձ, վերքս բաց արին: Բացի լեղունգի չափ մի սև բծից, վոչինչ չեք մնացել:

— Կավ նշան ե, — ասաց գթութիւն քուրը սովորական ժպիտով. — քաղաքացիական կռիւններից հիշատակ թող մնա քիչ:

«Բժիշկից հարցրի թե, յերբ պետք է դուրս գամ հիվանդանոցից: Նա խոստացավ ինձ յերկու օրից հետո ազատել:

«Քուրն» ել տեսնելով վոր նեղվում եմ, խոստացավ ինձ այսօր տանել հիվանդանոցից հետո, այգիների մեջ աեղավորել: Ո՛հ, վորքան բարի ու սրտացավ ե նա: Հենց այսօր իմացա, վոր նրա անունն Աննա Իվանովնա լե:

«Քուր Աննան այսօր խոսեց իմ մասին: Սեր վերջին հորձակումից հետո, թշնամու շարդված ու պարսկած բանակը նահանջել էր դեպի քաղաքը, վորը գրավելու համար, մերձաքայսօր վերջնական հորձակման են անցել: Հեղից լուծ եմ թնդանութների ձայները: Զայրացած նայում եմ կապված ձեռքիս: Ինչու հիմա լե չպիտի մասնակցելի այդ վերջին կռիւններին: Քուր Աննան նկատելով իմ շղախացած դրութիւնը՝ քաջաւերում եր ինձ, ասելով՝ «լավանալուց հետո ելի կոնաս Ֆրոնտ: Հեղափոխութիւնն իր անելիքները չի վերջացրել, դեռ մեր առաջ շատ հազթութիւններ ու հաջողութիւններ կան»: Նա ինձ հետ խոսում եր հեղափոխութիւնից և կարծիր գվարդիականների կատարած քաջագործութիւններից:

Մասնակցել եր նա մի շարք կռիւնների:

— Քուր ունե՞ս, — հարցրեց նա.

— Այո, ունեմ... խոսք եմ տալիս նրան գրթութիւն քուր գրել տալ, — ասացի:

— Χοροίω, — ասաց Աննա Իվանովնան ծիծաղելով:

Ասլանը վերջացնելով նամակի ընթերցումը՝ կանգ առավ ու խոր հառաջելով նայեց նամակին և ապա կարթելին:

— Հիմի, քույրս, իմացանք քո պարտականութիւնը:

Կարաթելը ծիծաղեց: Իրեն տրված հարցը նա ամբասն ել լավ չհասկացավ:

— Հասկացանք, — ասաց Ասլանը, — ուզում ես գթության քույր դառնալ:

— Չե՛ վոր հիմա պատերազմ չկա, — ասաց Կարաթելը ծիծաղելով:

— Հիմա չկա, բայց պետք է պատրաստվես գալիք պատերազմի համար:

Չինմազը, մի նոր լուր իմանալու պես, ասաց կնճռոտած դեմքով՝

— Ելի պատերազմ կա՞:

— Մի վախենա, դեռ չկա, բայց ո՞վ գիտե, մեր թշնամիները շատ հանգիստ պիտի թողնեն մեզ:

— Յես գնում եմ, — ասաց Կարաթելը, — գթության քույր լինելուց չեմ խուսափում:

Նաղիրը պապիրոսը քաշելով, ուրախ-ուրախ լսում եր յերկուսի խոսակցութիւնը: Իսկ Ասլանը, տեղից վեր կենալով հարցրեց քրոջը՝

— Վաղը կգաս ինձ հետ «Կարմիր Մահիկ»-ի խմբակում գրվելու:

— Կգամ, կգամ, — պատասխանեց Կարաթելը:

Քույր ու յեղբայր նայեցին իրենց ծնողներին:

Մերոնսիններն առանձին հիացմունքով իրենց դավակներին յերկանք-յերկանք դիտելուց հետո՝ նայեցին իրար:

Տան մեջ տիբեց կարճ լուսթյուն: Այդ լուսթյունը լսանգարեց Նաղիրի ավելի ազդեցիկ ու կարուկ ձայնը:

Նա ստում եր՝

— Թող Կարաթելը գնա . . . Կարմիր բանակի տոնին, վորպէս նվեր, յիս ել մի գթության քույր եմ ուղարկում:

## ՅԵՐԲ ՍԵՌԵԼՆԵՐԸ ՊԱՐՈՒՄ ԵՆ

Ելեք տրաքարշի կայարանին մտիկ դրոսավայրի ծայրում, ահացիալի ծառերի տակ նըստած ելին յերկու հոգի, վորոնք ձեռներն ունեւին տետրակների մի-մի կապոց: Առաջինը կարճահասակ եր և գլուխը խուզած: Չեռքն առնելով իր բուխարական սև կաշի փափախը՝ շարունակեց խոսակցութիւնը, վորը ընդհատել ելին վարժապետանոցի աշակերտները մի քանի լոպե առաջ:

— Ինչո՞ւ մենք, վոր մեր շրջանի ամենազլխավորներն ելինք համարվում, այժմ այս վի-

ճակում նացիներ, — ասաց նա սրտի խոր հատա-  
չանքով:

Յերկրորդը, չերկարահասակ, բնավորու-  
թյամբ համեստ և թխադեմ ընկերը, վեր մինչև  
այդ դիտում եր «Ազգերնեյթի» շենքի աշտարա-  
կի վրա բարձրացող կիսալուսինը, աչքերը դարձ-  
րեց խոսակցի ելեկտրական լույսի նման փայլ-  
փրրոդ աչքերին և ասաց.

— Փաթաթվիր փալատով, բայց զնա ուրիշ  
ների հետ: Այսօր բերաններից կաթի հոտ փչող  
չերեխաները — յերեկվա մեր աշակերտները —  
մասսային մոտիկ կանգնած լինելու շնորհիվ  
մեծ հաջողութուններ են ձեռք բերել:

Առաջինը շղայնանանում եր.

— Ձեն հասկանում, հոգիս, չեն հասկա-  
նում: Ի՞նչ բան է արվեալը, չգիտեն: Դրա հա-  
մար էլ այդ չերեխաների խզմզածները, նրանց  
անպետք ու փտած գործերը զնահատում են...  
Ի՞նչ են գրում չերիտասարդները — մանգաղ մուրճ  
գութան, գոթձարան և այլն, և այլն... Սրանք  
չեն նրանց գրածները, այս գողացված հինգ  
բառերից, չոր ու անիմաստ խոսքերից բաղկա-  
ցած չեն դրանց նյութերը...

Յերկրորդն ավելի սառնարյուն եր. Հաս-  
կանալով ընկերոջ շղայնության պատճառը

սկսեց ծխել ու, գլանակի ծուխը դեպի վեր  
բարձրացնելով՝

— Մենք ել այդպես պետք է գրենք, —  
ասաց նա ցածր ձայնով: Քո «...» աշխատու-  
թյունը, այո, պետք է ասեմ, բավական ուժեղ  
եր, բայց արժանացնով մասսայի ուշադրությանն  
ու համակրանքին: Վնչ: Վորովհետև չերկրի հիմ-  
քը կազմող հասարակության տակավին չզարգա-  
ցած ախորժակն այլևս չի կարող մարտել այդ-  
քան ծանր սնունդ:

Վերջինին կարծիքով, խորհրդային հասա-  
րակության հիմքը կազմող պրոլետարիատը վնչ  
թե չի ընդունում ին գրողները իրենց լողիտան,  
այլ անկարող է հասկանալ և ընդունել: Նա ա-  
ւում եր.

— Մեր գրվածքների նյութերն այժմյան  
հասարակության (պրոլետարիատի) մոտ ընդու-  
նելութուն չեն դանում, վորովհետև այդ նյու-  
թերը բարձր են ներկա հասարակության հաս-  
կացողութունից: Իրենալիզմի հասկացողութուն-  
ներով լեցուն գործերը՝ արդի հասարակության  
համար՝ չերեխաների աչք ու հոնք ծռելու, ար-  
համարհելու չափ ծիծաղելի յեն թվում: Այժմ  
ամեն մի սև բանվոր փնտրում է վնչ թե նման  
ցնդաբանութունները, այլ իրական կյանքը  
դրսևորող կենսական գործեր:

Առաջինը—Մեմօուհ Նեջդեթը՝ իսկուհն հասկացավ, թե ընկերոջ այդ լերկար ճառն ինչով է վերջանալու: Նա բնազդաբար զգայ, վոր խոսակիցը՝ Հասան Շաքին, հետևյալ հարցը պիտի տար

— Մարքսից տեղեկություն ունի՞ս, մատերիալիզմից մի բան հասկանում ես, Լենինին և Պլեխանովին կարդացել ես...

Սակայն պարոն Մեմօուհ Նեջդեթն այս բարբի մասին վնչինչ չգիտեր: Նրա կարծիքով նուրբ արվեստով գրողի մաքի արտաերություններն ընթերցողներին համար որենք պեաք է լինեն, իսկ դրողը վորև սկզբունքի տեր լինելու կարիք չունի: Իսկ յեթե իր այդ մտքերը մի քիչ էլ խուրդա աներ, դուրս է գալիս, վոր մարդկությունն ու կյանքը բազկացած են կանանցից և գեղեցկությունից, իսկ պաշտոնական սերը՝ բոլոր զգացումների ու իղձերի գերազանսելին: Նույնիսկ նա իր մի շարք գրվածքներով հրավիրում էր ընթերցողներին լերկրպագել կանանց գեղեցկությանն ու սիրուն, վորոնք «աստվածացած» էին այդ գրվածքներում: Յեւ վ հետո, նախքան ընկերոջ վերոհիշյալ հարցերին պատասխանելը, ասաց.

— Ամեն մեկը մարքոսիստ չի կարող լինել և լինելու կել պարտական չէ:

— Ուրեմն դու և յես ներկա հասարակությունից մեր գրական գործերի համար հետևորդներ չպիտի կարողանանք ճարել,— պատասխանեց ընկերն իր նախկին սառնարյունությունից: Եւ

Մովեզբեքին կանգնած ռազմանավի զանգը 11-ը խփեց: Թնդանոթի հերթապահներին փոխելու ազգանշանը տվող այս զոդանջով մեր լերկակայապաշտ Մեմօուհ Նեջդեթը վերհիշեց անցյալում գրած իր հետևյալ մի աշխատությունը.

— «Մեռնում ե մի գեղեցիկ որիորդի ցանկացած մերձավորը—լերիասարգ մի անձնավորություն, վորի հուղարկավորության համար յեկեղեցու զանգակները զոդանջում են տեսնուր...»

... Ա՛խ, այս բանաստեղծները... սիրո և խանդի խորխորատներում, հազարավոր լերիասարգներին տեսակ-տեսակ վողբերգական մահով սպանել, վոչնչացնել ցանկացող բանաստեղծները...»:

\* \* \*

7—8 գիշերվա լուսինը «Գերեզմանոց» կոչված լեռան դադաթին մոտենալու և ապա թագնվելու վրա լեր: Մեմօուհ Նեջդեթի աչքին ամեն ինչ մեռածի պես լերկաց: Բուլվարում

դբոսնոյ, զանազան զուլնի շորեր հագած հար-  
յուրավոր մարդիկ նրան թվացին իր մի ուրիշ  
զրվածքում նկարագրված «մեռելներ»-ը: Ծովի  
մյուս լեզերքում զանվոշ էլեքտրոկայանի պա-  
տահաններէց ցոլացող և աչք չլացնող լույսերը  
սատանայի աչքերի նման բոցավառվում էլին  
ամեն կողմ:

Հասան Շաքին վեր կենալով՝

Գիշերն անցնում ե, չգնանք, - ասաց  
ընկերոջը: Ծովեզերքի խելացնոր տեսարանի և  
անցյալի հիշողութունների մեջ խորասուզված՝  
Մեմդուն Նեջդեթին դուր չեկավ ընկերոջ ասա-  
ջարկը: Սակայն, չկարողանալով դիմանալ շրջա-  
պատի՝ իրենից ավելի տիրոջ կամքին, ինքն էլ  
վեր կացավ:

Ընկերները բուլվարից դուրս գալուց հետո  
բաժանվեցին իրարից:

Այդ իրիկուն Մեմդուն Նեջդեթը հողնած  
եր հոգեպես և ֆիզիքապես՝ Նա ասանց շորե-  
րը հանելու պատրաստվեց բնել:

Զարդարված փոքրիկ սենյակը լեցուն էր  
հին նկարիչների զանազան նկարներով: Այդ գի-  
շերն աչքին դեպավ թախտի դիմացի պատից  
քաշ արած մի լուսանկար, փորտեղ տեսավ իրեն  
շրջապատված մի խումբ ուսուցիչ-ուսնիկներով,  
աշակերտուհիներով: Տաս տարի առաջ, բուր-

ժուազիայի տիրապետութան ժամանակ ձեռք  
բերած հաջողութունների մարմնացումն լեղող  
այդ նկարը դիտելիս վարքան լեռնանիկ և ու-  
րախ պցաց իրեն: Ո՛հ, անցած որեր, անցած  
կանք... տարիներով ամբողջ էլությամբ ժողո-  
վրդի համար աշխատող նշանավոր բանաստեղծը,  
Մեմդուն Նեջդեթը, այժմ ի՛նչ որի լե ընկել...  
Իր գրական գործերը, մեկ մեկ, պրոլետարական  
գրական ասպարիզից չքացան, ավելի ճիշտն աս-  
ած՝ խոր գերեզմանում թաղվեցին:

Այժմ բանաստեղծի լեռնակայության առաջ  
պատկերացավ մի սե, բայց տակավին չփոշիա-  
ցած գերեզման, վորի հինգ հարկանի տան չափ  
բարձրութուն ունեցող դիտարի վրա, նեղքե-  
վից մինչև վերև, կարգով քանդակված էլին իր  
լեռիկերի անունները: Իսկ պիեաներում հիշատակ-  
ված հերոսների կմախքացած գեմքերը դիտում  
էլին բանաստեղծին ու, ցուցադրելով իրենց  
սպիտակ առամները, ճիծաղում նրա վրա:

Ա՛խ, Մեմդուն, Մեմդուն, կար ժամանակ,  
լեբը քո լեռիկերը շոյում էլին իդեալիստների հո-  
գիները, թուրանցիների աչքին դուրանի պես  
նրանք սուրբ էլին լեռում, փոսիկապաշտների  
աշխարհակալ ախորժակներին սնունդ էլին մա-  
տակարարում: Իսկ այժմ, այժմ այն վճր ձեռքը  
քեզ սե հողին հանձնեց:



Յեզ այսպես՝ սրտի խորքից բղտող անվերջ հառաչանքները հաջորդում էլին իրար: Մեմդուհը չէր կարողանում բնել: Հանկարծ սարսափահար ցատկեց անկողնի միջից ու ձեռքը սեղանին խփելով՝

— Յես մեծ բանաստեղծ եմ, մեծ ել կմնամ,—ասաց նա:— Ի՞նչու, միթե յես չեմ կարող լերգել այսորվա վերգը:

Վերցրեց գրիչն ու սկսեց մըտտել թղթի միջանի թերթիկներ:

«Ածխահանքի բանվորները»:

Շատ լավ նյութ ե: Բայց վերնագիրը կոշ շարունակութունը՝ վոչ:

Իսկի յեղև է նա ածխահանքերում: Տեսել է այդ վայրերը: Այդ առթիվ մի բան սովորել է:

Մի ուրիշ նոր վերնագիր:

«Ան արյուն»:

Սա ավելի հաջող է: Բայց զակազ է դուրս գալիս: Մեծ հակասութուններ կան գրչի հազ մըղածների և սրտի ու մտքի արտադրութունների միջև: Տողերն ու ուրիշներն ու սնհամ:

Վերջապես գրեց հիսուն տողանոց մի բան: Բայց ի՞նչ դժվարութիամբ: Վորովհետև արձակից չափածոյի անցնելու հանգամանքն էլ մեծ արվելք էր հանդիսանում: Մինչև բանաստեղծության վերջին տողն ավարտելն անվերջ սրբում

եր ճակատից հեղեղի նման վազող քրտինքը: Հոգնած էր նա:

Առավոտյան շուտ՝ կենտրոնական լրագրի խմբագրին հանձնեց իր նոր բանաստեղծութունը: Նա կարծում էր, վոր իրենից ավելի խմբագիրը պիտի ուրախանար: Նույնիսկ սպասում էր, վոր խմբագրից պիտի լսեր հետևյալ խոսքերը. «Վերջապես Պ. Մեմդուհն սկսեց մեր պրոլետարոսների ուղեկիցը դառնալ. լավ չէ»: Բայց ցավոք սրտի, այդ խոսքերը չլսեց խմբագրից:

Հենց նույն օրվա լրագրում լույս տեսավ Մեմդուհի այդ բանաստեղծութունը: Իսկ միջանի օրից հետո լույս տեսան մեր «Նոր ուղեկցի» յերեք ուրիշ բանաստեղծութունները: Այլևս նա հավատացած էր, վոր «մեծ բանաստեղծ էր» և «մեծ» ել կմնա:

Բայց, ավանգ... վեցերորդ օրը յերիտասարդների կողմից հրատարակվող լրագրի գրական բաժնում լույս տեսավ «Յերբ մեռելները պարում են «վերնագրով քննադատական մի հողված վորը մի ուժեղ հարված իջեցրեց նորից յերիտասարդանալ ցանկացող Մեմդուհի ցնորքներով լեցուն գանգի վրա: Հողվածագիրը քննադատում էր Մեմդուհի լրագրի վերջին համարներում լույս տեսած բանաստեղծութունները թե՛ գաղափարի և թե՛ տեխնիկայի տեսակետից, անվանելով այդ-

պիսիները հին գաղափարախոսութեանը դանա-  
զին սրտով հրածեշտ տվողի գործեր, վորոնք  
գրվում են միմիայն «նորանալու» և 5-6 դու-  
րուշ\*) հոնարար կորգելու ցանկութեամբ:

Մեմդուհը զգվանքով և ջղայնացած կարգաց  
անհայտ հեղինակի այդ քննադատականը: Նրա ու-  
շաղղութեանը գրավեց հոգվածի ներքեի սև գրե-  
րով գրված հետևյալ հայտարարութեանը:

«Ուրբաթ որը, Մտալինի անվան աշուճում  
կայանայու լե պրոլետ-գրող Ն.Ն.Ք-ի «Մեմդուհն  
սրվեստադէտ ե, արդե՞ք» զեկուցումը:

Այս հայտարարութեանը հին բանաստեղծին  
զժվեցնելու շափ բարկացրեց: Նա, վոր մի ժա-  
մանակ ձեռք եր առել նորահաս բանաստեղծ-  
ներին ու նրանց անվանում «կաթնաբերան յերե-  
խաներ» այսօր «գու արվեստագետ Հես» ասելով  
քննադատվում ե:

Աչքերը մի անօրոշ կետի վրա սեեռած,  
քնածի նման, Մեմդուհը կանգնեց սեղանի առաջ:  
Շուտով սթափվեց ու շուրջը գոնվող հասարա-  
կութեան վրա թափեց յուրահասուկ հայհոյանք-  
ների տարափը:

Ուրիշ ինչ պիտի աներ: Մի ժամանակի  
թյուրքիայում լույս տեսած ամսագրերում, Ար-

\*) Ղոթրուշ կամ պիսապ (թրք. դրամ) նախադասարար  
մյան 8 կոպեկը:

դյուլ-Հազգ, Համիդ և Ռիզա-Թեյֆիզ կեղծ ա-  
նուններով գրված սուր քննադատութեաներին  
արժանացող հեղծ բանաստեղծին այժմ ել պրո-  
լետ-գրողներն են մտրակում:

Մեմդուհը նոր իմացավ, վոր փասց դործե-  
լին հաճախորդ կարող են լինել միմիայն գրա-  
կանութեանից անտեղչակները, վորոշ սկզբումք  
չունեցող բախկալ-չախկալները:

Ծուլ-ձոնի վոաքի լեյալ: Վերցրեց իր լեյ-  
կերի հաստ մասցանը (վորի մեջ կային և «ժա-  
մանակին սպասող» արիշ անախդ աշխատու-  
թյուններ) ու, հոգնած աչքերով սկսեց դիտել  
նրա մեջ յեղած թղթերը: Այժմ, կարծես, մատ-  
յանի առդերի վրա շարված բառերն ու առոները  
պար ելին գալիս նրա աչքի առաջ. — «ստորները»  
«դիվանարներ», «ագասները», «եշեր» և «աչ-  
քերը», «կուլքեր» ելին կարգացվում:

Իսկան ամուր թրփկացրեց ու գուրս լեյալ:  
Ժամը 12-ն ե: Լուսավոր մի գիշեր: Մեմ-  
դուհ Նեջդեթը գնաց դեմ ու դեմ ծովափը: Արդ  
որը բուլվարում թափվել ելին սովորականից ա-  
վելի շատ զբոսնողներ, վորոնք ճնշվում ելին  
ամառվա հեղձուցիչ ողից: Մեմդուհը բարձրացավ  
բուլվարի կենտրոնում գոնվող Բեսեդկայի վրա  
ու սկսեց դիտել խումբ-խումբ զբոսնող հասա-  
րակութեանը:

— Ո՞վ դուք, իմ յերկասիրութիւններ չհասկացողներ, մեծ բանաստեղծիս չգնահատողներ... մըթմըրթաց ինքն իրեն ու կամաց քայլերով մտեցաւ ծովափին:

Ծովը թեթև ալեկոծվում էր: Նավերից ու փարոսներից ցանցնվող լույսերը պլպլում ելին ծովի կապույտ մակերևութի վրա ու ջրի թեթև կոհակներին զրկախառնվելով՝ իրենց լեռնից թողնում ելին զանազան գլուներով բեկբեկված գծեր ու հետքեր:

Կասպից ծովի յերեսը շրջապատող կապույտ և ջինջ հարավային յերկնակամարի խորքերը քաշված փայլուն բիբերը խաչտում ելին...

Մեմդուհը հանկարծ հուզվեց: Զեռքին գարնված սև կազմով մատյանը դժվարությամբ յերկու կտոր արեց ու ձգեց ծովը:

— Ա՛, Մեմդուհ, դու յես, եղ ինչ ես անում, դժվեցիր, — լավո՞ւ ձայնը չկարողացաւ կամանցնել նրա այդ քայլը:

Այդ Հասան-Շաքին ձայնն էր:

Թեթև քամուց տարուբերվող սպիտակ թղթի կտորները փռվեցին ջրի յերեսը:

— Այդ ինչ արիր, այդ ինչ թղթեր են, կրկին անգամ հարցրեց Հասան-Շաքին:

— Յերկերսեն: Ծովը ձգեցի նրանց, — պա-

տասխանեց Մեմդուհը, անկողնից նոր դուրս յեկած հիվանդի անջոյով:

— Ա՛Ֆ, դու, ինչ արիր այդ թանկարժեք զործերը, վորոնք ապագայում մեր հարստութիւնը պիտի կազմելին. — կրկնեց Հասան-Շաքին ավելի կտրուկ ու ազգու տոնով, վորը զգաստացրեց Մեմդուհին և կտորեց վերջինիս թույլ ու աննորմալ կամքը:

Մեմդուհը հանեց գլխի փափախը, ժակեթն ու իրեն ձգեց ծովը:

Գծվածի նման էր Հասան-Շաքին, ինչ անելը մոռացել էր:

— Խեղդվեց... ոգնեցեք... — սկսեց կանչել խեղդված ձայնով:

Խուճախ-խուճախ, դեպի ծովեզրն շտապող բազմութիւնը, ահաբեկված, հարցեր էր տեղացնում Հասան-Շաքիի գլխին: Իսկ Մեմդուհը, ծովի յերեսից հավաքած թղթերով մոտեցել էր արդեն ծովափի պառնեջին ու աշխատում էր դուրս գալ:

Մարդկանց ոգնությամբ Մեմդուհը դուրս յեկավ ցամաք. անխոս ու գլխիկոր գնում էր դեպի ելեկտրոքարշի կայարանը, զեանի վրա թողնելով իր վրայից քամվող ջրի կաթիլների հետքերը:

Մի ժամանակ իրեն յերկրի ձեռք բանաս-

տեղծը» համարող այս անձի ներկա տեսքը վորքան խղճալի ու նվաստացուցիչ էր...

Իսկ Հասան-Շաքին, վոր հետևում էր ընկերոջը, ամաչեց հարցնել և բաց անել իր վերջերս՝ նա ուղեց արտասանել իրեն ել պատկանող «վորքան ծիծաղելի բան է, յերբ մեռելները պարում են» խոսքերը, վորոնք, սակայն, մինչև շրթնաքներին ծայրը չհասած՝ խեղդվեցին դառն ժպիտների մեջ:

#### ԿԱՀՐԱՄՄՆԻ ՌՈՄԱՆԸ

Մեջտեղից բարակ տախտակով կտրված լախն սենյակում, քաղաքացիական կռիվներից մնացած ավերածության սրտաճմլիկ հետքերը դեռ աչքի ելին զարնում: Յեթե չլինեյին պատերին կայքբրած քարանդակները, գանազան բովանդակութամբ պակասները, իրենց այժմեականութունը կորցրած լողունները, անպարման պիտի չերեպիին ձեփերի թափվածութունը, թրծած աղյուսները մերկութունն ու մի շարք տեղերում գնդակներից գոյացած հետքերը:

Մենյակի վերևի կողմը բուխարին էր կառվում: Մեջտեղը, լրագրերով ծածկված սեղանի վրա լեռում էր հին, սակայն մաքուր սամովարը:

Բուխարում վառվող բոցերի լույսը խառնվելով սամովարից դեպի առաստաղը բարձրացող շողու ալիքների հետ՝ մի կարմիր սյուն էր կազմում:

Սեղանի շուրջը հասած ելին շորս հոգի: Սրանցից—սև գանգրահեր, խոշոր և փայլուն աչքերով, լախն գիմագծեր ունեցող կահրամանը սեղանի վրա դրեց շրթնաքներից դեռ նոր հեռացրած թեյի բաժակն ու խոր հառաչելով սասց:

— Ախ, Սալման, ամեն անգամ քո այս սունը տեսնելիս՝ չեմ կարող չհիշել այն ծանր տարիների անքան սոսկալի և մահասարսուտ արհավիրքները...

Սալմանը, նման խոսքեր մի անգամ լսել էր կահրամանից: Առանց դրանց ել, նախկին քաղաքացիական կռիվներից Առաջացած մի շարք փուլ լեկած, ավերակ դարձած տեղերը կենդանի վիաներ ելին այդ սոսձների: Բայց կահրամանի խոսքը վոր արհավիրքների մասին էր:

Սալմանը մի քիչ մտածելուց հետո, հարցրեց:

— Ի՞նչ արհավիրքների մասին է ձեռ խոսքը: Ապստամբության որե՞րն էր ակնարկում:

— Ապստամբության որերը, այո, ապստամբության որերը ..

— Այո, տան մեջ ի՞նչ է պատահել:

Կահրամանն իր փայլուն աչքերն ուղղեց բոցավառվող բուխարուն, մի քանի վարկյան լոեց և, հանկարծակի, լերեսը դարձնելով դեպի ընկերները՝ լերկար պատմութիւն անելու ձեով սկսեց.

20 թվին, այս քաղաքում ծագած սոցա-տամբուլթիանը ծանոթ եք, կարծեմ: Յեվ, լիթե չեմ սխալվում, Սալմանն ել այդ ժամանակ քաղաքում եր: Այդպես չե, Սալման:

— Վոչ, վոչ, — ընդմիջեց Սալմանը, — լես, դիչեր ժամանակ, հեղկոմի հետ միասին, դուրս լեկա քաղաքից և ուղղակի գնացի կայարանն ու անտեղից ել՝ 32-րդ դիվիզիայի բանակատեղին:

— Այո, այո... Լսով հիշեցի... ճիշտ ե, — ասաց Կահրամանն ու շարունակեց.

— Դուք ինձ, չորս հոգու հետ միասին, թողեցիք քաղաքում: Յեվ հետո, լերը բանակն ապատմբելով, մտավ քաղաքը, ինձ ու այդ չորս ընկերներին հանձնեցիք այդ տան պաշտպանութիւնը: Հիշում եմ, վոնց վոր հիմա դիվիզիայի հրամանատարն ինձ այստեղ նշանակեցիս ասաց, վոչ վոքի չթողնեք այս տունը մտի և այստեղից ել վոչվոքի չթողնեք, վոր դուրս գնա: Մինչև վերջին շունչը պիտի պաշտպանեք այս տունը: Գիտեք, ինչո՞ւ համար: Վորովհետև այս տունը

բարձր է քաղաքի մյուս տներին, ուստի և հեշտութեամբ կարելի լեր այստեղից դիտել քաղաքը և պաշտպանել կամուրջը պաշտեցման վտանգից: Բացի դրանից, հրամանատարը խոստացավ մեզ, մեկ լերկու ժամից հետո ոգնութիւն ուղարկել:

Մեզ հանձնված մի զնդացիբով, լես ու չորս ընկերներս կարող ելինք լավ կրակել թե կամուրջը և թե հրապարակը:

Ընկերներիցս մեկը — բարակ, նիհար, գեղաչյա, փայլուն ու սև մազերով, առողջամիա մի կոմլերիտուհի լեր: Անունը՝ Սիրանուշ:

Ախ, Սիրանուշ, Սիրանուշ: Յես նրա պես աղջիկ չեյի տեսել: Նա մինչև վերջին շունչը սպասեց զնդացրի մտո: Բայց լես բուն նյութից շեղվեցի, չե:

Այո: Ասացի, վոր այս տան պաշտպանութիւնը հանձնեցին ինձ: Սա ուղղակի մահ եր: Վորովհետև քաղաքը մտնող մեր զորամասերը մի ժամից հետո լես քաշվեցին: Մեկ ել, ով գիտե, լերը պիտի մտնելին քաղաքը: Բայց, համենայն դեպս, լես այդ հրամանը պիտի կատարելի: Պիտի մնալի այս տանը:

Իմացել եյի, վոր տան տերը, լինելով քաղաքի ամենամեծ ու ազդեցիկ բեյերից մեկը, հեղափոխութիւնն ըսկվելուն պես, իր մեծ տղա-

ի հետ փախել եր. տանը թողել եր միայն  
կնոջը, տաս ասրեկան սղալին ու սպասուհուն

Մենք յերկու որ մնացինք այստեղ: Այդ յեր-  
կու որվա ընթացքում հարկ չեղավ մեզ խոսելու  
վնչ խոսնմի և վոչ ել ծառայողների հետ: Նրանք  
վորքան ել յերկուդի մեջ ելին, բայց և աջնպես  
իրենց պահում ելին, շատ լուրջ և զգուշ, հույս  
ունենալով, վոր, իբր թե, այս կռիվները պիտի  
վերջանային հակահեղափոխականների հաղթու-  
թյամբ, վորից հետո պիտի պատրաստվեյին իրենց  
վրեժը լուծել մեզանից:

Յերկուորդ որը քաղաքում բավական լուրջ  
ընդհարումներ ելին տեղի ունենում: Յերբեմն  
մեր զորամասերն ելին հաղթում, յերբեմն ել՝  
ապստամբներինը: Յեվ այդ բանը լավ ելին զգում:  
Յերը ապստամբները հաղթում ելին, մեր աղ-  
բած տան վրա տեղացող գնդակներին հաշիվ ու  
վերջ չկար: Իսկ յերը մերոնք ելին առաջանում,  
յես ու ընկերներս մի քիչ ազատ շունչ ելինք  
քաշում, վորովհետև մեզ հասնում ելին պատա-  
հական գնդակներ:

Կահրամանը մի քիչ կանգ առավ: Դուրսը  
փշում եր ձմռան ցրտաշունչ քամին, վոր ձյու-  
նի փոքրիկ, սառած մասնիկներով ուժրակոծում  
եր տան պատահանները:

Կետրվա մոտիկ եր: Քաղաքում կես ժամ-

վա չափ լուսթյուն տիրեց: Լուսթյուն եմ ստում  
չնխալվեք: Այդ գես կարելի չեք անվանել միայն  
այն ժամանակ, յերը ամեն կողմից լավող հազա-  
րավոր համազարկերը մի քիչ նոսրացան, թնդա-  
նոթների ձայները բոլորովին կտրվեցին:

Յես անմիջապես հասկացա, վոր յերկու կող-  
մերն ել հարձակման են պատրաստվում: Յեվ  
ասածս ճիշտ դուրս յեկավ. կես ժամից հետո,  
չորս կողմը վողողվեց կլակով և գնդակների տա-  
րափով, ձայներից ամբողջ շենքը պրրոզում եր:  
Հարյուրավոր գնդակներ դալիս, շեշտակի ընկ-  
նում ելին այս տան կարին, կաշում ելին պա-  
տերին: Իսկ յես, տան յերբորդ հարկից դեպի  
հյուսիս նայող պատահանից—յերկու հողու հետ  
միտաին—դիտում ելի հրապարակը, ու արհեստից  
վոչվաքի չելին թողնում վոր կամքի կողմն  
անցնի:

Այդ միջոցին բացվեց դուռն ու ներս մտավ  
ամուտիրուհու ծառան: Նա առաջվա պես լուռ  
չեք: Յես այդ բանն անմիջապես նկատեցի:

— Ի՞նչ կա: Ի՞նչու յեկար այստեղ, — ասա-  
ցի նրան ու ստիպեցի, վոր ցած գնա, վորդես-  
զի գնդակ չդիպչի իրեն:

— Սանումն ուզում ե ձեզ հետ խոսել. —  
ասաց նա, ու չք չվարձնելով իմ ասածին:

— Ի՞նչ խոսելու ժամանակ ե հիմա... Այ-

Երբ փուլ է գալիս: Յես այստեղից չեմ կարող հեռանալ...

— Շատ հեռու չի: Հարեան սենյակումն ե: Մի շատ կարևոր գործի մասին ուզում ե ձեզ հետ խոսել:

— Կարևոր գործ: Զարմանալի բան... Շատ լավ, գնանք տեսնենք ի՞նչ կարևոր գործ ե:

— Իսկ դուք գգնու լեղեք, — ասացի ընկերներին ու գնացի հարեան սենյակը:

Յես այդ խանութին մոտիկից լեզրեք չեյի տեսել: Մոտավորապես 30 տարեկան, գեղեցիկ հասակով, առողջ կազմվածքով, խոշոր ու սև աչքերով մի կին եր նա: Յերկար ու սև ծամերը յերկու հուսկեն արած՝ ձգել եր աջ ու ձախ ուսերին, վորտեղից՝ յերկարել, հասել ելին դուրս ցցված կրծքի վրա: Գլխին կապել եր սպիտակ մետաքսյա շարֆ: Նա դարձարված եր:

Ինձ տեսնելիս մոտեցավ անկունում զրված կահավորակին և բավական լուրջ կերպով նստելով՝

— Զերդ բարձրություն, — ասաց նա, — կարելի չե ձեզ հետ մի քիչ խոսել:

— Յես հիմա զբաղված եմ: Իսկ յեթե կարճ պիտի խոսեք, պատրաստ եմ լսել:

Մանուկի փոքրիկ շրթունքների վրա յերևաց թեթև ու կարճ մի ժպիտ: Նա մատներով խա-

ղում եր փափուկ ծամերի ծայրերի հետ: Չուղի կանգնելով՝ մոտեցավ ինձ, շեշտովի նայեց աչքերիս մեջ և նախկինից ավելի թեթև, բաց նենդ ժպիտով՝

— Ի՞նչ կոպիտն եք, — ասաց, — չեք մտածում, վոր ձեր առաջը կին ե կանգնած:

Յես յերբեք դիրքս չփոխեցի:

Մինչ կահրաման իրա ստույգ մոտ թելի մեջ մուրարա յեր գցում, ընկերները լարված ու շարունակյալ հետևում ելին նրա բոլոր շարժումներին, շտապում ելին շուտով լսել ընդհատված պատմությունը: Շուրջը տիրել եր խոր, հետաքրքրական լուրջուն: Բախարու ճարձատյունի ձայնը խառնվելով սամբարի քլթքլթոցի հետ՝ ծածկում եր հետաքրքրությունից չկշտացող սրտերի ձայները:

— Յես իմ դիրքս բոլորովին չփոխեցի — Շնուարեք, խնդրեմ, — ասացի նրան, — ի՞նչ եք ուզում, ասացեք կարճ ու կտրուկ:

— Ո՛հ, վորքան վախկոտ եք, ասված իմ, — ասաց նա մի քիչ յերերուն, բայց արհամարհական ժպիտով:

— Յեթե այդպես ե, յես այլևս չեմ կարող սպասել: Գնում եմ:

Յեվ յերբ քայլերս ուղղեցի դեպի դուռը, հան-

կարծ ձախ ձեռքս դտա նրա փափուկ մատների  
արանքում: Յես դարձա:

Թնդանոթների և հրացանների ձայներից, կար-  
ծես, թնդում եր յերկինքը: Կրակը գնալով՝ հեա-  
զհետե, սաստկանում և դրուժյան լրջությունն  
եր վորոշում:

Ձեռքս մի կերպ ազատեցի նրանից:

— Գնում եմ, ի՞նչ ունեք ասելու:

Կրկին անգամ պինդ բռնեց նա ձեռքս ու ա-  
սաց՝

— Ինձ թույլ կտանք:

— Ի՞նչ:

— Ուզում եմ գնալ դուրս, ազգականներին  
մտա:

— Չի կարելի: Ինձ պատվիրված ե վոչ վոքի  
բաց չթողնել այստեղից:

Յեվ յերբ ուզում ելի դուռը բաց անել, նա  
իր յերկու մերկ, մտտա, փափուկ ու բուրավեա  
թևերով գրկեց վիզս: Նախապես՝ կասկածեցի,  
վոր նա ուզում ե ինձ գինաթափ անել: Ուզեցի  
խփել: Բայց փոխեցի մատդրութունս: Յերեսս  
դարձրի նրան: Հակառակ իմ բոլոր շանքերի,  
չկարողացա վիզս ազատել նրա ձեռքերի միջից:

— Սիրելիս: Լավ տղա: Թող ինձ գնամ ու  
վերադառնամ: Յես քոնը կլինեմ:

Նրա այդ կեղծավոր ու «քաղցր» լեզուն զըզ-

վանք եր պատճառում ինձ: Մյուս կողմից՝ աշ-  
խատում ելի ոճիքս սզատել նրանից:

Այդ միջոցին չիմացա թե դուռն ինչպես բաց-  
վեց, ու Սիրանուշը յերկնքից իջածի պես կան-  
գնեց սուաջս: Նա էր սպառնալից աչքերով դի-  
տեց նախ խանութին և ապա, ինձ: Աշխատելով  
ծածկել իր բարկությունը՝ ասաց.

— Կահրաման, կարծում եմ, հետո լել կարող  
եք իրար սիրել: Այժմ դրությունը լուրջ ե: Լավ  
չի՞ լինի, վոր վերադառնաք ձեր տեղը:

Կարծես մի պղինձ լիքը յեռացած շուր 19բին  
գլխիս: Չնայած վոր չես մեղավոր չեի, դերքս  
չեի լքել, դրանում չեի կասկածում: Բայց այդ  
կոմսոմոլկալի ներկայությամբ ինձ այնքան ստո-  
բացած զգացի, վոր հիմա լել այդ բանը հիշելիս  
ամաչում եմ:

Պանուժը, խոր զզվանքով Սիրանուշին դի-  
տելուց հետո՝ ձեռք քաշեց ինձնից ու մտավ յեր-  
րորդ սենյակը:

Իսկ չես Սիրանուշի կասկածը փարատելու  
համար, ասացի՝

— Հավատան, Սիրո, նա ազրուկի նման կպել  
եր ոճիքիս: Ուզում եր ինձ խաբել, վորպե-  
սզի թույլ տալի իրեն դուրս գնալ... Յես նրան  
սուաջին անգամն եմ տեսնում... Բայց շատ ա-  
նամոթն եր:



— Այժմ, ներեղութիւն ինդրելու ժամանակ  
չէ: Ինչո՞ք մեր պահակաանդին... Ամենից առաջ  
հարկավոր է պարտաճանաչ լինել, — ասաց Սի-  
րանուշը անտարբեր կերպով, ու յերկուսով միա-  
սին գնացինք գնդացրի գանձած տեղը:

Թշնամու մի կարևոր գործաձայն գնդակնե-  
րով կոծում էր այս տունը: Տեղացող գնդակնե-  
րից անկարելի յեր ման գալ, Սիրանուշին քա-  
շելով ինձ մոտ — հողով լցված պարկերի լեակը  
— սկսեցի կրակել: Հրապարակում գանձած թըշ-  
նամու 200 հոգուն փախցրի: Հետո, նախկին տեղս  
քաշվելու հետևանքով, հարկ յեղով բաժանվել  
Սիրուշից:

Մի ուրիշ ընկերոջ հետ գնդակներ արձակե-  
լով պաշտպանում ենք կամուրջը: Յերկու բոպե  
չեր անցել, յերբ Սիրանուշի սենյակից լսեցի նախ՝  
սոսկալի և ապա՝ աղաղակող մի ձայն: Սրտաճաբ  
յեղաւ: — Հավատա, նրան խիեցին, — ասացի ու խ-  
կույն անցա նրա սենյակը:

Դուրսը, ցրտաշունչ քամին, հեռախոսի թե-  
լերին դիպչելով՝ վռնում էր վերավոր և բողո-  
քող անասունի նման:

Կահրամանը զայրուլթից փոխեց իր ձայնը.  
կես բոպեյի չափ սպասելուց հետո շարունակեց.

— Կողքի սենյակը մտնելիս, հանդիպեցի Սի-  
րուշին, վոր ուզում էր դուռը բաց անել: Նրա

յերեսի դուրը ձյունի նման սպիտակել էր, լուրջ  
ու դեղձեցիկ դեմքի վրա նկատվում էին մահվան  
նշանները: Տեսա, վոր ձախ կողքից կայցրած մատ-  
ների արանքից հոսում էր կարմիր արյունը, վոր  
սպիտակ չթից կարած շորերի ծալրերից կաթում  
էր գեանի վրա: Դա նրա արյունն էր: Մնա՞րջա-  
պես սեղմեցի կրծքիս վրա: Սաստիկ ցավից չեմ  
կարող խոսել, նվվում էր:

— Չե՞մ ուզում... — ասաց Սիրանուշը կցկտուր  
խոսքերով... Մեռնո՞ւմ եմ:

Նա մեռնում էր, բայց ելի շարունակեց՝

— Անցիր գնդացրի գլուխը: Հարկավոր է  
պաշտպանել հրապարակը... Ուշադրութիւնդ մի  
տեղ կենարոնացրու... Կարճես, մերոնք հարձա-  
կման են պատրաստվում... Հավատա, վոր մենք  
պիտի հաղթենք... Ինձ... Ինձ...

Այլևս չկարողացավ խոսել: Բայց դեմքի վրա  
նկատվում էր հույսի ժպիտ:

Ուզեցի նրան համոզել, վոր լես հավատարիմ  
եմ իր զործին:

— Մենք, — ասացի, — պիտի հաղթենք: Մին-  
չև վերջին շունչս չպիտի հեռանամ գնդացրից:  
Հավատա:

Նա մի անգամ ևս ժպտաց, և ապա խոշորակ  
ձայնով ասաց՝

— Յես հավատում եմ:

Մի բուսելից հետո արդեն նա ծանրացել էր գրկումս:

Մի քանուշը մեռել էր: Յերկար, յերկար նայում էյի նրա գունատված յերեսին: Աչքերի մեջ շրթունքների վրա կար անշնչելի, հուստառու, լուռ ու անկեղծ մի ժպիտ, վոր վնչ ալ ինչ էր, յեթե վոչ հեղափոխութան հաղթանակին հավատացած և իր հավատարիմ ընկերոջ գրկում մեռած մի կոմիերիսուհու ժպիտ:

Այն, նա մեռած էր:

Կահրամանի աչքերը թրջվել էին: Նրա ձայնի մեջ կար վիշտ և թախիծ: Չորս ընկերներն իրար ելին նայում ապշահար: Բոլորն էլ գգում էյին նույն վիշտն ու թախիծը:

— Ռոմանը գեռ չի վերջացել... վերջը մտիկ արեք, հանկարծ սկսեց Կահրամանն ընդհատված պատմութունը: — Կոմիերիսուհու ու ժգնութեամբ շարունակվում էին Յերբորդ սենյակից լավեց մի հանկարծակի շփեկոց, վորը կրկնվեց մի քանի անգամ: Կասկածեցի:

Այդ սենյակից կտուրը բարձրանալու համար դրված էր մի աստիճան, վորով հեշտութեամբ կարելի էր բարձրանալ հարևանի տան կտուրն ու այնտեղից անցնել փողոց: Յես, նախապես զգալով այդ բանը, կտուրի այդ դուռը փակել էյի մի մեծ կողպեքով:

Անվիջտակես անցա յերբորդ սենյակը: Ուշադրութունս դարձրի մի բանի վրա: Սև հագուստով մի մարդ աշխատում էր կտարել դռան կողպեքը: Նա չիմացավ իմ ներս մտնելը, ավելի ծիշտն առած, սաստիկ ազմուկից չսեց վտարերիս ձայնը: Չեռքին գտնված յերկար յերկաթի ծալքով կտարեց կողպեքն ու դուռը բաց արեց:

Մի քիչ մտածելուց հետո, հրացանն ուղղեցի նրան:

Կանգնիր, սով ես — կանչեցի:

Առանց ուշադրութուն դարձնելու, նա շտապեց դուրս գալ դռնից:

— Ո՞վ ես դու, սպասիր, — կրկին կանչեցի

Նա արդեն գրսուցն էր: Մի գնդակ արձակեցի. յերկրորդն էր... վորից հետո այդ մարդը աստիճաններից գլորվելով-գլորվելով ընկավ սենյակը: Վագեցի, ուղեցի տեսնել թե սով է: Յերբ նրան շուռ ավի կռնակի վրա, գարմացած ձայնի: Ո՞վ լինի, լավ էր:

Ունկնդիրների աչքերը հեռաբջրութունից էլ ավելի լաշն-լաշն բացվել էին: Մամովարն աչքն չէր յեռում: Նախկին ազմուկը հանդարտել էր: Բուխարու բոցը մարել, միայն կրակն էր պեծկլումում:

— Իմ սոջն, գեանի վրա, փովել էր սղամարդու շորեր հագած տանտիրուհին — Սանուամը:

Նա ամուր սուհամա սեղմել եր ատամները սաացած վերքի ցավից չէր գանգատւում: Գրնդակը մտկ եր նրա կոնակը և թիկնուկը անցել, գնացել էր:

— Գուք ուր ելիք գնում: Աւղում ելիք փախչել, հարցրի յես:

Նա լուռ եր: Նրա աչքերի մեջ զգվանք եր փայլում:

Աւղեցի վերքը փաթաթել: Ձթողեց և բացի դրանից, դառն ժպտաց: Քիչ հետո նրա խոշոր ու սև աչքերը փակվեցին: Այլևս նրա գեր ու փափուկ կուրծքը չէր բարակւում:

Նա մեռել էր:

— Կահրամանը վերջացրեց իր ուսմանը:

Քամին հանդարտել էր: Աքլորները կանչում էլին: Ընկերների ուշադրութունը կենտրոնացած եր մի կետի վրա: Նրանք խորատուզվել էին խոր մտածմունքների մեջ:

— Փամանակն է, գնանք, — ասաց կահրամանը վոտքի կանգնելով, և ապա Սարմանին դառնալով:

— Ծնորհակալ ենք, վոր մեզ թելով հյուրասիրեցիք, — ասաց ու սեղմեց նրա ձեռքը:

Ծերունի հրյան, վոտքերին միքիչ զոռ սալուց հետո, շալակը դրեց ճանապարհի լեզրին, մի մեծ քարի վրա: Նա ուզեց մեջքը ուղղել, բեռան ծանրութունից ցավոյ թիկունքի և վոտնաշարի վոսկորները հանդստացնել, բայց իզուր: Վորովհետև 45 տարվա ընթացքում այս ծանր բեռան տակ ծովոյ կոնակի վոսկորները սեփական ուժով ուղղելը հնարավոր չէր: Ճիշտ վոր՝ «Սաղասավորին միայն գերեզմանը կուղղի»:

Չմեռը ցրտից, իսկ ամառան արևի տաքութունից պաշտպանելու համար վզին փաթաթած կարմիր չթի կտորը բաց անելով՝ ձակասն ու վեղը սրբեց:

Չնայած անարև և խոնավ աշնան որվան՝ նա քրանած էր:

Լալն խճուղու ձախ կողմի հողամասերը հերկված էլին, իսկ աջ կողմի հողամասի վրա շարժվում եր արակտորը: Ամեն կողմ մարդիկ աշխատում էլին:

Ծերունի հրյան արակտորին չէր նայում: Նրա գորշ ու թավ հոնքերի տակ առկայծող աչքերն ուղղված էլին արակտոր քշողի վրա: Քրտան և ութ գարուններ ապրած այս արակտո-

ընտրել փայլուն աչքերով, չերկար ու բարակ  
քթով մի չերխաասարդ եր: վոր արակտորի դեկլը  
ձեռքերի մեջ պտտեցնելով ուրախ ուրախ ստալ  
եր նայում:

Նա զբաղված էր և մտածկոտ:

— Ռաֆայել, այ Ռաֆայել... կանչեց ձե-  
րունի ճամբորդը խուստ ձախով:

Հը. հայրիկ դու լե՛ս, — պատասխանեց չերի-  
տասարդ արակտորիստը: — Այս ցրտին ուրիշ  
գնում բեռնավորված:

— Այստեղ արի Ռաֆայել, մի քիչ խոսենք:

— Այստեղ խոսելու ժամանակ չունեմ, ա-  
սաց Ռաֆայելն ու, ցույց տալով սակավին չհեղ-  
կված լախ ու ընդարձակ հողերը, շարունակեց:

— Այստեղ «մինչև իրիկուն» այս տեղերը  
պիտի վարեմ, վերջացնեմ:

— Աստված ուժ տա, — ավելացրեց ձերու-  
նին: Արի, քեզ համար լուրից պատրաստած հաց  
եմ բերել: Մայրդ ուղարկեց:

Ռաֆայելը, թեև դժգոհ հրավերից, բայց  
հոր սիրտը չկտորելու համար կանգնեցրեց ար-  
րակտորը և խոնավ ածուների միջով գնաց հոլ  
մտ:

— Իզուր նեղութուն ես կրել, հայրիկ, մեզ  
համար ամեն որ ուտելիք ուղարկում են, — ասաց  
Ռաֆայելը:

— Մայրդ ուղարկեց, վերջի, քեզ վաղուց  
չե՛ս ետել, սիրտը նեղվում ե:

Ի՞նչ լուր ունես... տուն, տեղն սնվանա են  
արդյոք:

— Փառք ասածու, ի՞նչ պետք է լինի վոր...

— Քույրս ի՞նչպես է, կարդում է, թե չե:

Այո, կարդում է: Միայն... միայն նա այս  
որերս էլ չպիտի կարողանա կրգալ, — պատաս-  
խանեց հայրը:

Ինչո՞ւ չպետի կարգալ, — հարցրեց Ռաֆայելը  
դժգոհ ձայնով: Կարելի չէ հիվանդ է: Յեթե  
հիվանդ է, դամ նրան տանեմ բժշկի:

— Փառք ասածու, հիվանդ չե:

— Բա ի՞նչ կա, ինչո՞ւ չպետք կարգալ:

Ծերունի հրջան գդալով, վոր հայտնում  
լուրը տղային դուր չեկավ, ուտի, նախ՝ հանեց  
դիտի խոշոր, մոթալ փափախը և խուզած գլուխը  
չերկար ժամանակ բերելուց հետո՝

— Հենց ենպես, չեկել էլի այս լուրը հաղոր-  
վելու: Առ տեսնեմ այս լուրտո հացերը, — ասաց  
նա ու սպիտակ, կեղտոտ կտորի մեջ փաթա-  
թած տաք հացերը Ռաֆայելին չերկարացնելով  
շարունակեց:

— Սառալին մարդու ավինք: Ուրիշ ճար  
չկար: Ծառ չեկան — գնացին, վերջապես խոսք  
ավինք:

Հոր այս վերջին խոսքերը, կարծես, Ռաֆայելի գլխին մի ծանր հարված էր ջեղրելու բերած հացերը չվերցրեց նա: Ուզեց պոռայ բռունցքով ջարդել դիմացը կանգնածի վոսկորները, դուրս ցցված ու մազոտ դեմքը, բայց վերջի վերջին զսպելով՝ ճակատը արտրեց և մեղձախոյով ասաց.

— Ինչո՞ւ այդքան շտապեցիք: Այլվան դուռով ելին տանո՞ւմ:

— Բարի գործն ուշացնելը լավ չէ: Իրենք ել վատ մարդիկ չեն, հացով են: Տղան ել ժողովուրդի ու աշխատող է, քաղաքում ճոթեղենի խանութ ունի: Առևտուրն էլ, հիմակ ու հիմա վատ չեն: Ծերունի Աշուրը հույս ուներ, վոր իր արտաբերությունը կկարողանար համոզել աղային, նրան համաձայնեցնել կատարված փաստի հետ:

Ռաֆայելը գլուխը թափ տվեց: Բարեկամ թյունից կրճատացնում էր ատամները:

— Նրա ճոթեղենի խանութն էլ, առևտուրն էլ, լեղած-չեղածն էլ գլխին թող դաչի, — հանկարծ պոռաց Ռաֆայելը: Յես համաձայն չեմ: Վոր քուլրս թողնի իր ուսումն ու բազազ — մազազի հետ ամուսնանա: Իրա համար էր, վոր ինձ գործից հանեցիր, — Ասաց Ռաֆայելն քայլերն ուղղեց դեպի արակատորը:

— Ռաֆայել, այ Ռաֆայել, Ծերունի

լերեսը չեն թռնի, աստված մարդու գլխին քար կգցի, աչքերը կբռնացնի: Ռաֆայել, այ Ռաֆայել, — կանչեց ծերունի հայրը:

— Ժամանակ չունեմ, — ասաց Ռաֆայելն ու բարձրացավ արակատորի վրա:

Ծերունու խուլոտ ձախը խեղդվեց պողպատյա ձիու խրխնջոցների մեջ:

Վորդու հասցելին զգվանքներ տեղացնող ծերունի Աշուրը քիչ հետո շալակեց իր ծանր բեռն ու շտապեց հասնել բազարին, վոր շալակը մի անգամ էր տեղի ունենում:

Ռաֆայելը շարունակ դիտում էր հորը, վոր բեռան ծանրությունից հազիվ-հազ շարժվում էր: Նա խորասուզվեց մտքերի ծովի մեջ: Նա խղճում էր հորը:

Ծերունու վոսկորները քամող այս բեռը անցած շրջանի զգվելի հիշատակն էր: Իսկ նոր շրջանը, վոր աշխատում է բոլորին ազատել նման ծանր բեռներից, տակավին չէր կարողացել ծերունի հրյայի շալակից դեմ շարտել այս բեռը: Ծերունին ինքն էլ չէր ուզում այդ բեռից ազատվել: Յեթե լծկան անասունների համար դժվար է ազատվել վատ սովորություններից, այնպես էլ դժվար է որակյան հազար անգամ սուտ խոսելով իրենց ապրուստն առևտրից ձեռք բերող մարդկանցն ազատվել, բաժանվել

այս փեշակից: Նմաններին միայն շրջապատ  
ելիսուղ ձեռքը կկարողանար սեղմել և մեջ ա  
ղից վերացնել:

Ռաֆայելն այդ ողբ մինչև ընթրիք աշխատե  
տեց: Այնքան ել գոհ չէր այդ որվա աշխատանք  
քից, փորձեալ շարունակ քրոջ մասին մտածե  
լով՝ չէր կարողացել իրեն հանձնարարված  
զամասը նույն որում վերջացնել: Միտից ողբ  
քարից հաղթող դուրս գալու համար՝ նա սիր  
ձեռք եր փնտրում:

Ընթրիքի ժամանակն եր: Արևը, վերջապատ  
սին հատուկ գաղջ ճառագայթներով, շոյում էր  
շրջապատը: Կոլխոզի աշխատավորները, ողբով  
լով իրիկվա զով լեղանակից՝ չարտախի առաջ  
հավաքվելու փոխարեն, նստել էյին մոտավոր  
աղբուրի գլխին, կանաչազարդ բլրակի վրա  
կանաչ իրենց անութների տակ հաց, սոխ  
պանիր, իսկ ձեռքերին փոքրիկ պղինձներ բլր  
նած՝ շաապում էյին գեպի աղբուրը: Բոլորն  
ուրախ տրամադրությամբ հավաքվել էյին  
զանի շուրջը:

— Ո՛ւր ե: Կարծես, ընկերներից  
չկա,—ասաց Գյուլբալան և սկսեց աչքից  
կացնել նստողներին:

— Հա՛, Ռաֆայելը չկա... Նա ո՛ւր  
վազուց է, ինչ նա տրտկարը բերել է

ին: Յերկուսս ել միասին մեքենաները մաքրե  
րիք ու դուրս լեկանք: Գնանք կանչենք,  
ասաց Գյուլբալան և ձեռքերը բերնին մոտեց  
նելով կանչեց:

— Հե՛յ, Ռաֆայել...

— Հո՛ս ո՛... Այստե՛ղ եմ, այստե՛ղ:

— Արի՛, արի՛... ընթրելու ժամանակն անց  
նում ե...

— Մենք քեզ չենք կարող սպասել, — ձայն  
ավին մյուսները:

— Դուք ընթրեցեք: Յես չեմ ուզում  
ընթրել:

Գյուլբալան դիմելով ընկերներին՝

— Հավատա, փոր նա լուրտ բազարջով  
փորը պնդացրած կլինի: Քիչ առաջ տեսա, հոր  
նեա միասին ճանապարհի չեզրին կանդնած՝  
դուրս եր անում,—ասաց և նորից սկսեց  
կանչել:

— Ա՛յ անխիղճ, խնացել եմ, փորդ պնդաց  
րել ես: Վնաս չունի, քո բաժինն ել չես կու  
տեմ... հա՛... հա՛... հա՛...

Յերիտասարդ Գյուլբալան նոր եր վերջա  
պել Բագվի Մեխանիկական դործարանի կուր  
սերն ու չեկել եր Կոլխոզում աշխատելու՝ փոր  
պես տրտկատրիտ: Նա իր խելոք, ճարտար և  
մշտաբախ բնավորությամբ վաչելում եր բոլոր

ընկերների սերն ու համակրածքը: Յերեսուն տարին լրացրած այս յերիտասարդը դաստիարակված էր հաշվետար Սարգսի խնամքի տակ գյուղական խորհրդում մեծ համարում ունեւր:

Ռաֆայելն առվի ափին նստած՝ դիտում էր հանդարտ ու մեղմ հոսող առվի ջրին: Նա մտադրող էր իրենով և իր ներքին աշխարհով: Հարկավոր էր Սառային կարգացնել, դեպի նոր կյանք քաշել: Սա նրա պարտականութունն էր:

## II.

Անցած որերը յեկան, կանգնեցին Ռաֆայելի աչքի առաջ: 5—10 ըոպելի չափ վերադարձրեց իր տասը տարվա անցկացրած կյանքը:

Ռաֆայելն այն ժամանակ հազիվ 12 տարեկան լինե՞ր՝ թխա դեմ, կարտառ ու առույգ մի պատանի: Ըստ նրա հոր կարծիքի, Ռաֆայելի լավ աշխատելու, առևտրով զբաղվելու ժամանակն արդեն յեկել, հասել էր:

Ռաֆայելը հիշեց, թե ինչպես ինքն, առաջին անգամ, շալալին առավ ու գնաց քաղաք:

Առավոտ շուտ արեխներն ամրացնելով հոր հետ միասին գնում էր քաղաք: Առևտուր անելով՝ նա փող պիտի վաստակեր և, վերջապես, շատացրած զբամազլիսով քաղաքի մանրա-

վաճառների հրապարակում կրպակի տեք պիտի դառնար:

Չնայած վոր ճանապարհը յերկար և ցեխոտ էր, բայց Ռաֆայելն այդ որը չհոգնեց: Բաղաքի բոլոր փողոցները շրջելով՝ կանչում էր նա:

— Ասե՛ղ, զլե՛ի լաշակ, կարմիր նե՛րկ, քըր-շան \*): առնո՞՞ղ...

Ռաֆայելն այդ որը շատ սուտ խոսեց: Բայց այդ ստեղծեց մեկն ավելի հետաքրքրական և խելով էր:

Փողոցով անցնելիս, կարմիր վարտիկավոր, մետաքսյա լաշակով յերիտասարդ մի թուրք կին դուխը դոնից դուրս հանելով՝ հարցրեց.

— Մանրավաճառ, ո՞յ մանրավաճառ, քըր-շան ունե՞ս:

— Ամենալավը, խանում, ամենալավը... իսկական Մոսկվայի ապրանք,— պատասխանեց Ռաֆայելն ու, առվը բաց անելով՝ վերցրեց մի պուդրա և սկսեց յուրահասուկ ձևով գովել:

— Այս քըրշանից վո՛չ մի տեղ չի ճարվում: Յերեկ թիֆլիսից փոստով եմ ստացել: Հապա մի հոտ քաշի՛ր տես, մանիշակի հոտ է

\*) կարմրագույն հոտավետ փողի, վորը՝ թուրք կանայք քսում են իրենց յերեսները:

գալիս: Վալլահ, խաննում, կրոն, հավատքը վեր-  
նա, վոր ամենից լավն է:

— Ի՞նչ արժի:

— Բուրբուզին աժան, մանեթ ու կեռ:

— Դրանից լավը չունենա, միքիչ թանկ  
գինը, հարցրեց թուրք կինը:

— Վան, ինչո՞ւ չունեն, խաննում, պատու  
խանեց Ռաֆայելը և հատը մի ուրբուզով առավ  
«Ռալլե» պուզուց մի առաջ ցույց առավ խա-  
նումին՝ սաաց:

— Տես, որա մասին խոսելու կարիք չկա-  
վոր 5 մանեթ էլ սաա գեռ քիչ է: Խալլ  
(գուռ) ֆրանսական ազրանք է... պա՞հ  
պա՞հ... պա՞հ... դրուսա վոր կարմիր վա՞րդ  
մեխանկ է...

կինը պուզրային հավանել էր:

— Գի՞նը, — հարցրեց նա:

— Քեզ յերեք մանեթով կտամ: Բայց կտա  
հավատքը գիտենա, վոր այդ պուզուց  
հարևանին չորս մանեթով էմ ծախել:

— Չե՛, թանգ է: Յերեկու մանեթ կտամ:

— Լավ, յերկու մանեթ 4 արասի առա՞յն:

Յերկար-բարակ սակարկելուց հետո, Ռա-  
ֆայելը պուզրան ծախեց յերկու ուրբուզով:  
Նրա առաջին հաջողութունն էր:

Իրիկունն Ռաֆայելը հոր հետ միասին քաղ-

վանսարայում նստած՝ հաշիվ էր առլիս: Առան-  
ձին ինքնաբավականությամբ նա խոսում էր  
այդ որվա ձեռք բերած հաջողության և կարի-  
ճության մասին:

Բայց մյուս առավոտ հոր հետ միասին  
պոտեկու ժամանակ, Ռաֆայելն ականատես չե-  
ղավ նրա կողմից կատարվող մի ախպիսի «դո-  
շաղության», վորից սահալված չեղավ խոսա-  
վանել, վոր ինքը գեռ ախքան էլ սրամիտ  
առևտրական չէ: Հայրը պուզու փոխարեն  
ստամի փոշին յերեք մանեթով ծախեց մի հա-  
ճախորդի վրա:

Առևտուրը, իր հերթին, շարունակվում էր:

Ռաֆայելը հաճախ հորից ջոկ էր ման գա-  
լիս փոզոցները: Հայրը սրերի մեծ մասն անց-  
կացնում էր գյուղերում և շաբաթական բազար-  
ներում:

Առևտրից ստացած ոգուտը վորքան էլ շատ  
լիներ, ծախսն էլ, իր հերթին, քիչ չեր:

— Առանց ծախսեր անելու այտեղ բազար

բացանել, առևտուր անել չի կարելի, — ստում էր  
լսատուլ Քերբելա Գյուլուշունը:

Ծերունի Աշուրը հասկանում էր այդ խոս-  
քերի նշանակությունը: Հարկավոր էր լսատուլ  
Քերբելա Գյուլուշունի բխերի տակիցն անցնել,  
բի՞նք քաղցրացնել...



Այս ուղղակի տուրքերը և շաբաթվա մեկ մեկ-յերկու անգամ տված տուգանքներն ու դանդաղան ծախսերը նրա դրամագլխի վրա թանգ էլին նստում: Բայց ինչ պետք է անել: Առևտուրը քաղցր փեշակ է...

Ռաֆայելը հոգնում, չղաջնանում էր:

Մի որ, ճաշարանի գուան տաջիկ անցնելու ժամանակ, խորովածի հոտը զրդոնեց Ռաֆայելի ախորժակը: Շատ սոքված էր: Ճաշարանի դիմացը գտնվող ծառին հենվելով՝ նա սկսեց ստուգել քսակում չեղած մանր փողերը (Ռաֆայելը խոշոր փողերը կարում էր վերաբերել յերեսի և աստառի միջև, նա այդ բանը հորիցն էր սովորել):

Մտավ ճաշարը և խորոված խնդրեց: Ճաշարանում յեղողները Ռաֆայելի վրա նայում էին ուրիշ աչքով, նրան դողի տեղ էլին դնում և, թերևս, չէին ուզում, վոր «Ջնուգի աղան մուսուլմանները տմանները կեղտոտի»:

Ռաֆայելը, սոված գալլի նման, սկսեց ուտել: Յեվ յերբ յերրորդ պատառը բերանն էր տանում, ծերունի Աշուրը ներս մտավ: Տղայի ճաշարան գնալու մասին նա իմացել էր ծանոթ Սիմոնից: Յեկել էր աղալին զգուշացնելու:

Ռաֆայելը, հորը տեսնելուն պես, վախից էլ չկարողացավ ճաշել:

Հայրը կամաց քայլերով մոտեցավ Ռաֆայելին և ասաց՝

— Վեր կաց, հարամզադա:

Ռաֆայելը կողքին դրած շալակը վերցրեց և սուս ու փուս, հոր հետ միասին, խանութից դուրս յեկավ:

Ճանապարհին հայրը վորդուն հանդիմանելով ասում էր.

— Բուրբուլին խարաբ ես չեղել... Ուրիշները պատրաստած կերակուրն ուտելու համար դիտես աստված ինչ կանի քեզ... դու մեղանչել ես ասածու և նրա կողմից դրված պատվիրանների դեմ: Գնա տուն, աղոթք արա, թերևս աստված քեզ ների:

Լուռ էր փոքրիկ Ռաֆայելը: Նա դողում էր իր գործած «մեղքերի» համար: Տուն չեկավ, շալակը մի կողմ դրեց և չոզած՝ սկսեց արտասուկալեց աչքերով աղոթել աստծուն, վոր իր մեղքերին թողութուն տա:

Ահա այդ աղոթքների և արցունքների օրերից անցել էր տասը տարի:

Ռաֆայելն այժմ առվի ափին նստած՝ իր ախուր անցյալն էր մտաբերում և դառն ու արհամարհական ծիծաղում:

Ամուսն մութ և տաք մի լերեկո, Ռաֆայելն  
ու իր հայրը քաղաքի մոտակա գյուղերից մե-  
կում իրար հանդիպելով՝ միասին վերադառնում  
եյին քաղաք:

Ճանապարհն այնքան ել լերկար ու հոգնեց-  
նող չէր, մանավանդ վոր ապրանքները ծա-  
խել, շալակները թեթևացրել էին: Ճանապար-  
հին նրանք վոչ վոքի չէին հանդիպում:

Չնայած ձերութեանը, հրչա Աշուրը արագ  
արագ քայլում և ստիպում էր Ռաֆայելին, վոր  
նա չէլ արագացնի քայլերը:

Ռաֆայելը չիմանալով հոր այդքան արագ  
քայլելու պատճառը՝ հարցրեց.

— Հայրիկ, ինչո՞ւ յես այդքան վառագում:

— Լավ կլինի, վոր շուտ հասնենք տունս:

պատասխանեց հայրը.— Ինչ վեղար պատճառով  
վոր մենք այսօր գյուղում այդքան ուշացանք,  
Բեկ շատ սպասեցի, բայց չեկար: Միշտ մութի  
չկլիած, տանը լինելը լավ ե:

— Գիշերվա ճամբորդութունը լավ ե,  
հայրիկ,— ավելացրեց Ռաֆայելը. — թե դով ե և  
թե մոծակներ չկան, կազակներին ել չենք հան-  
դիպի:

Յեթե մութ շլիններ և ճանապարհի վրա  
չզանվելին, Աշուրն անպայման պիտի ծիծաղել  
ուղալի միամտութեան վրա: Սակայն բախարսը՝

վեց մի թեթև ժպիտով և աղալի ափանջին  
վստիսալով՝ ասաց.

Գիշեր ժամանակ ճանապարհները լեր-  
կուղալի լեն, մարդկանց թախանում և նուշխակ  
սպանում են: Յեթե այս ճանապարհները լեր-  
կուղալի չեյ շլինեն, հրչաների համար միշտ ել  
վտանգավոր են:

Հոր այս վերջին խոսքերից Ռաֆայելի  
մարմինը սկսեց ուռի նման դողալ: Այլևս ուժ  
չունեք քայլելու: Վախի և սոսթի ազդեցութեան  
տակ մի քանի քալ ևս տոնելուց հետո, նա  
ասաց.

— Հայրիկ, լես հոգնեցի:

— Սպասիր, վորդի, կամուրջն անցնենք,  
Չաղացի մոտ կգնենք շալակներս ու կհանդըս-  
տանանք:

Մինչև կամուրջը լերկու հարյուր քալ եր  
մնացել, ուստի հնարավոր եր միքիչ ել գնալ:  
Յեթե Ռաֆայելն առաջուց հասկացած լինեք  
կամրջի անունը և այն, թե ինչո՞ւ հայրն ուղ-  
ում եր, վոր անպայման Չաղացի մոտ հանդըս-  
տանան, լեղապատառ կլինեք:

Ամեն տեղ հայանի լեր դարձյալ կանլը  
բոլորուն (Արլունտո կամուրջ): Ռաֆայելն այդ  
հետո իմացավ:

Յերբ հայրն ու վորդին նոր եյին մոտեցել

կամուրջին, դիմացի փոսից լավեց մի ձախ  
լերկուսն ել մեխի նման գամված մնացին:

- Կանգնեցեք, ով եք դուք:
- Ճամբորդ եմք, ցավդ տանեմ:
- Ի՞նչ եք տանում:
- Մանրավաճառ եմք:
- Շալակներդ դրեք գետին:
- Մեզ հեբը (հավատք) վկա, վոչինչ չունենեմ:
- Մի շարժվեք:
- Լավ...

Փոսի միջից դեպի ճամբորդներն ուղղվեց  
լերկու սրածայր բան, վերոնք նման էյին հրե  
ցանի փողերի: Ռաֆայելի բերնի թուղը չորաց  
եր: Հենվել եր կամրջի քարե պատնեղին  
դողում եր: Տեսավ թե ինչպես նրանցից մեկ  
բանել եր հոր ոճիքիցն ու փայտով ծեծում էր  
իսկ մյուսը կոկորդից բռնած՝ ուզում եր խեղդ

- Փողերը հանիր.
- Վալլահ չկա:
- Իսկ յերկրորդը, Ռաֆայելին բռնած՝ ապա  
ինա ապտակում եր:
- Փողերը հանիր, —ասում եր նա ապա  
նական տոնով:

Ռաֆայելը կյանքը փրկելու համար ավելի  
համարեց դիմադրել:

- Սպասիր, տամ, —ասաց և արխալու

հանելով՝ քանդեց աստառը, քրտնքից պաշտպա-  
նելու համար կարած մոմաշորի միջից հանեց  
փողերն ու հանձնեց նրան:

— Այ դու կեղտո՛ւ... տես, փողերն մւր  
են պահում, ասաց ավազակն ու Ռաֆայելին  
փայտի մի հարված իջեցրեց:

Ռաֆայելը նոր իմացավ, վոր նրանց ձեռ-  
քին հրացանի փոխարեն փայտ է լեղել: Իսկ  
թե առաջուց ել իմացած լինեք, ի՞նչ պետք է  
անեք վոր...

Ծերունի Աշուրը շեր ուզում փողերը հա-  
նելու նա խնդրում, ազաչում եր. և ինչքան խրն-  
դրում, աֆնքան ել ծեծվում եր: Վերջապես, ա-  
վազակները նրանից ել փողերն առան ու ան-  
հետացան:

Հալը ու վորդի լուռ ու մունջ շարունակեցին  
հանապարհը: Ծերունի Աշուրը շարունակ թքում  
եր ու հետն ել ծանր տնքում: Զրադացի դռանը  
հանելուն պես, նա սկսեց սիրտ առնել ու կան-  
չել:

— Մեզ թալանեցին... Բռնեցեք զուեքը...  
Վա՛յ... Վա՛յ...

Զրադացյալաները լսելով այդ հարաջրոցը՝  
լուրս թափվեցին և յերկուսին ել ներս տարան:  
Ռաֆայելը լամպի աղոտ լույսի տակ նկա-

տելով հոր կարմիր այրուհով ներկված մորուքը սկսեց դողալ:

Աշուրը կորցրել էր իր լերկու սաամը:

Թալանված «վաճառականները» բազաք հասնելուն պես ուղիղ գնացին պրիստավի վարչատեղին (գլխավորխանա), և դռանն սպասող դարբազալոյից թուղատվության ստանալուց հետո մասն պրիստավի մոտ:

Պրիստավը, տեսնելով լերեան արյունով ներկված հրչալին, հարցրեց ծիծաղելով.

— Այս ի՞նչ է պատահել, լերեադ ու աչքերդ ի՞նչ լավ են ներկել:

— Ցավդ տանեմ, բեկ,— խնդրեց Աշուրը, մեզ կողոպտել են, ծեծել և լեղած շեղաճներս տանելով մեր տունը քանդել են:

— Կողոպտել են,— հարցրեց պրիստավը, հոնքերն իրար խառնելով,— մի՞ վերտեղ:

— «Կանլը կամուրջի մոտ, ցավդ տանեմ: Ես պես ել դուրս ու ցավը կլնի: Բավական չէ՛ վոր մեզ սոխի նման պրոկեցին, դեռ լերկու սաամներս ել հրացանի կոթով սվին, շարդեցին... Մի լերեխալին տես, վննց է դողում... Ազատ Բաժայել, խոսի՛ր... մարմինդ ցուլց տուր, թող տեսնի, վննց է սևացել ու սկի նման ուռել...»

Պրիստավը կանգնեց և, Աշուրի ծնոտը բռունցքով տըմբաղմբացնելով, պոռաց.

— Մնա ես ասում, շան վորդի... Մնա ես ասում, իմ գոնված վայրում գողություն չի կարող պատահել:

— Բեկ... Մի՛թե լես սուտ եմ ասում... քեզ նման բեկի և թագավորի պատկերի առաջ կարելի՞ լես սուտ ասել... Վալլան, բեկ, կրոնն ու հավատը վեա, վոր լերկու հոգի «Կանլը կամուրջի» մոտ հանկարծ մեր առաջը կարեցին և, հրացաններն ուղղելով դեպի մեզ, ասացին. «Կանգնեցե՛ք թե չե՛ ձեր ուղեղները կփշրենք...»: Յեթե մի բուպե ել փողերն ուշ հանձնելինք, հիմա մեր դիակները գետնին փռած կգտնելիք: Հն, ասացի, «Պրիստավ Ռուստամին խաբար կտամ», բայց նրանք ուշադրություն չդարձրին: Նրանք վննց ասածուց և վննց ել պրիստավից են վախենում:

— Մնա ես ասում,— ասաց պրիստավը ջղախառն, — իմ պաշտոնավարած տեղերի աճունք մի խալտառակի: Այս տեղերը գողություն չի կարող պատահել: Տեսնես ի՞նչ հարածադություն ես արել, վոր քիթ ու պոռնեզդ ներկել են: Ձեզ — ջհուղներիդ դեռ եզ ել քիչ է:

— Բեկ, բն մենք մեր ցավերն ո՞ւմ լուց լինենք:

— Գնա, կորի: Ուզում ես, վոր նոտացնեմ

քեզ: Ադա, Քերրելայ Գյուլուշ, արի, ես հարամ-  
դադաներին դուրս արա...

Բեխերը յերկար ու կախ ընկած դարադա-  
վուր յեկավ և Աշուրի վզից բռնելով՝ մեջքին մի  
քացի տվեց ու սենյակից դուրս արավ:

Սաստիկ վախից Ռաֆայելի լերեսի գուլնը  
սփրանել, ձուկնի պես եր դառել: Ինչ ավագակ-  
ների հարվածներից ստացած ցավը չմոռացած՝  
դարադավոյից ել մի աստակ կերավ:

Հալը ու վորդի տխուր ու հուսահատ, վերա-  
դարձան տուն:

Ռաֆայելը հոր ձեռքերին շուր լցնելու  
ժամանակ տեսնելով նրա արյունոտ լերեսը՝  
ասաց.

— Հայրիկ, արի մենք այս առևտրից ձեռք  
քաշենք, գլուզ գնանք:

— Հիմարի ադս, գնում ես գլուզն ի՞նչ  
անես, սոված սատկես, ասաց հայրը բարկանա-  
լով:

— Ինչո՞ւ սատկենք, վար ու ցոնք կանենք,  
կապրենք Ձեռ տեսնո՞ւմ, վոր հարևան գլուզացի-  
ները հողագործութեամբ են պարագում:

— Նրանք հող ունեն, իսկ մենք ո՞ւր ցա-  
նենք, տանը...

— Մենք ինչո՞ւ հող չունենք, — հարցրեց  
Ռաֆայելը:

— Վորովհետև չկա, չեն տվել:

— Ինչո՞ւ:

Տղայի այս վերջին հարցին, Աշուրը բավա-  
կան խիստ պատասխանեց.

— Այդ քո գործը չի: Այդ խոսքերն ասու-  
ղին գցում են պրիստավի պադվալը և, բացի  
դրանից, մինչև մեռնելեու աստիճան կձեծեն:

Ռաֆայելը հոգնած եր: Նա վոչինչ չկա-  
րողացավ ուտել, փաթաթվեց անկողնու փոխա-  
բեն գործավող փալասի մեջ և պառկեց:

Նա մտածում եր.

— Ինչո՞ւ չպետք է մենք ել հողագործու-  
թյուն անենք: Ինչո՞ւ հող չունենք: Ինչո՞ւ բոլորն  
ել մեզ ճնշում են: Կառավարությունն ու նրա  
պաշտոնյաներն ինչո՞ւ համար մեր ցավերը չեն  
լսում:

Նրա տկար ու մանկական ուղեղն այդ  
հարցերին չկարողացավ պատասխանել:

— Ասե՛ղ, զնդասե՛ղ, կարմիր ներկ, քրըշան  
առնո՞՞ղ...

Տարիներից ի վեր լսվում եր այս ձայնը  
փողոցներում:

Խոսքերը նույն խոսքերն էլին, փողոցները՝ նույն  
փողոցները: Բայց ժամանակն ու շրջապատը

փոխվել ելին: Եւ վոչ «գարադավոյ կար, վոչ պլիտա-  
տավ և վոչ ել «կանալը կամուրջի ավազակները: Բոլորն ել չքացել, սոռացվել ելին: Դուքս եր  
լեկել մի նոր բառ—Սպեկուլյանս:

Սպեկուլյանս, այսինքն՝ ստախոս, ան-  
խիղճ, մարդկանց պլտկող, ականջ կտրող մարդ:  
Ռաֆայելն ու իր հայրն ել մտել ելին նման  
մարդկանց շարքերը:

Ռաֆայելն արդեն 17 տարեկան եր: Հաճախ՝  
բեռը շալակին՝ փողոցներով, հրապարակներով  
անցնելիս՝ նրան զիմավորում ելին իր տարիքն  
ունեցող մարդկանց խմբերը, վորոնք ծիծաղում,  
ուրախանում և զանազան լերգեր ելին լերգում,  
կարմիր դրոշակները ձեռքներին՝ պտտում և լեր-  
բեմն ել միտեղ հավաքվելով՝ նորանոր զրույցներ  
ելին անում:

Աժմ Ռաֆայելի սրտում մի նոր ցանկու-  
թյուն և դլտում ել մի ուրիշ միտք եր ծագել:  
Իր պատանեկական բնագոյից մղված՝ նա ուզում  
եր լսել այդ զրույցները խառնվել այդ ուրախ  
խմբերին:

Մի ուր, քաղաքի խրճիթ-ընթերցարանի առ-  
ջևից անցնելիս, Ռաֆայել տեսավ այնտեղ լերի-  
տասարդների մի խմբակ: Մոտեցավ դռան, վախ-

կուտ նախածքով ներսը դիտելուց հետո շալակը  
դրեց գետին և կանգնեց դռան մեջտեղը: Նա  
չդիտեր, թե վորտեղ ե կանգնած, միայն հետա-  
քըրքըվում եր նրանցով:

— Այտեղ չի կարելի կանգնել: Գաղտնի  
ժողով ե: վոչ կոմսոմոլիստները թող դուքս  
զան,— ձախ ավեց մեկը ներսից:

Ռաֆայելը շեր ուզում գնալ: Վախկոտ,  
բայց հարգանքով լի ժպիտով ասաց.

— Այ հողիս, լես ուզում եմ մնալ, հենց  
այտեղ կկանգնեմ դռան առաջ:

— Ձի լինի, սիրելիս, դու առևտրական ես,  
գնա առևտուրդ արա: Այտեղ միայն կոմսո-  
մոլները կարող են մասնակցել:

— Ի՞նչ կլինի, մի բոսլե լենթադրենք, վոր  
լես ել մի կոմսոմոլ եմ: Մի՞թե հրյաներին չի  
կարելի կոմսոմոլի մեջ մտնել...

— Հրյաներին թողնում են, իսկ առևտրա-  
կաններին — վոչ:

Այդ բանից վշտացած՝ Ռաֆայելը վերցրեց  
իր շալակն ու ախտեղից հեռացավ:

Չնայած վոր մինչև իրիկուն դեռ լերեք  
ժամ ել մնացել եր, բայց Ռաֆայելը ել չուզեց  
ման դալ. նա ուղիղ գնաց տուն:

Այս անգամ նա մեծ պահանջ եր զգում: մը-  
տածեց լերկար-բարակ, — մինչև լեբը ինքն ել

մարդկանց շարքի մեջ չպիտի մտնի... Ախ՛ լերբ պետք է այս «առևտրական» բառը դեն շարտեր և մարդ դառնար...

Մի որ Ռաֆայելը, շարակով հինգ գյուղ պլատելուց հետո՝ շատ հոգնած էր: Մրեր մալը մասնելու մոտ էր, լերբ նա հորը գտավ մեծ գյուղի հրապարակում:

Հայրը, ձեռքում գտնված թաշկինակը հաճախորդին ցույց տալով՝ ասում էր.

— Կրոն, հավատը գիտենա, վոր 12 ուրբուռ մալ է լեղել իմ վրա:

— Ձե, ջանմ, թանգ է, 10 ու. կտամ:

— Տղաս մեռնի, թե 12 ու. առնված չէ:

Առաջին անգամը չէր, վոր Աշուրն իր սըղայի արևովն էր լերգվում, նրան մեռցնում: Ռաֆայելը ծնված որից, հոր ձեռքին— փող վաստակելու համար— առևտրի դրամապլուխ էր դարձել:

Ռաֆայելն առաջ նման խոտքերին կարևորություն չէր տալիս: Բայց այս անգամ, լերբ տեսավ, վոր հայրը յերեք ուրբուռով դնած ասըրանքը 12 ու. ծախելու համար իր արևովն էր լերգվում, իրեն մեռցնում, էլ չհամբերեց: Վազեց հոր առաջը և նրա ձեռքից թաշկինակը խլելով՝ արորեց և դեն շարտեց: Ասլա կատա-

դած կատվի նման ասամները կրճտացնելով՝ պոռաց.

— Հարիկ, ինչո՞ւ յես սուտ խոսում: Ինչո՞ւ որական հագար անգամ գուր տեղը մեռցնում ես ինձ: Յերեկ գու այս թաշկինակը 7 ուրբուռով շառամ:

Աշուրը տղայի այդ կերպ վարվելուց վոչինչ չհասկացավ: Մի լսովե զարմացած նախեց նրա աչքերին: Կասկածում էր, թե զժվել է:

— Ինչո՞ւ յես նախում աչքերիս,— ասաց Ռաֆայելը և բռունցքը ցույց տալով՝ շարունակեց.

— Մի վախենա, չեմ զժվել, միայն քո այդ վարմունքից զգվում եմ:

— Թո՛ւհ, հարամզադա, կորի այստեղից, հիմար, պիղծ:

— Գանի ծերանում ես, այնքան խելքդ կորցնում ես,— ասաց Ռաֆայելը,— Դո՞ւ պետք է մեռնես, յես չեմ ուզում: Յե՞վ ապա բեռն իջեցնելով՝ զցեց վոտքերի տակ, ասելով— «Ա՛ն, ա՛ն այս բեռը զլխիդ տուր, յես զնում եմ, մարդ դառնալ եմ ուզում:

Ռաֆայելը թողեց, հեռացավ:

Մի ժամից հետո, յերբ Աշուրը իր և տղայի բեռները հավաքած՝ սուն էր վերադառնում, Ռաֆայելին այնտեղ չգտավ:

Ռաֆայելը հենց նույն իրիկունը ասլրանքատար զնացքով մեկնեց Բագու:

Առաջին անգամ նրան զիմափորեցին մրոտած դեմքերով հին և կտրտած շորեր հագած անապատան լերեխաները:

Ցուրտ, հողմաշունչ մի լերեկո լեր: կասպից ծովը վրնջում էր կասաղած ձիու նման:

Ռաֆայելը փողոցները ման գալուց հոգնած էր: Նրան հարկավոր էր մի տեղ գտնել գիշերելու համար: Բայց փորտեղ: Շատ ման լեկավ: Այդ անծանոթ և աղմկալից քաղաքը նրան շատ սառն ընդունեց:

Վերջապես, հեռու փողոցներից մեկում, կլիբ պատրաստելու համար դրված պղինձները (ոջախը) գրավեց նրա ուշադրութունը:—«Այստեղ քամին չի դիպչում»—ասաց նա ու մոտեցավ այդ բուրակին:

— Ե՛յ, ան կողմն անցիր: Այլտեղ գրադված է,—լավեց մի ձայն:

Ռաֆայելն սկզբում վախենալով՝ յետ քաշվեց: Ոջախին ուշադրութամբ մտիկ տալուց հետո, սև փոշիների միջից փալուղ աչքերը նրան ավելի ևս վախեցրին:

— Հե՛լ... ի՛նչ էս կանգնել: Ներս անցիր...

Շատ տաք է... հենց նոր են հանգցրել, —նորից լավեց առաջին ձայնը:

— Տեղ կտո՞ք ինձ,—հարցրեց Ռաֆայելը:

— Ե՛հ, շան ձագ: Կարծում ես, թե մեր պապից մնացած տո՛ւնն է, վոր հրավիրենք: Իհարկե կտանք: Համեցե՞ք վերև...

Այս ձայնը Ռաֆայելին շատ անկեղծ թվաց: Համարձակ մտավ պղնձի տակ և նկատեց աչտեղ վնչ թե մեկ, այլ չորս հոգի իրեն տարեկից և ավելի փոքր լերեխաներ

Առաջինն ասում էր՝

— Ծանոթ, կարծես նոր մարդ ես: Վորտեղից ես յեկել:

— Շատ հեռուններից,—պատասխանեց Ռաֆայելը:

— Հա՛... Շատ լավ: Սոված չե՞ս:

— Կարծես մի քիչ սոված եմ:

— Ա՛ռ, ան զխավիր, ձուկ է, շատ համեղ ձուկ, պատաժից եմ թոցրել:

— Շատ ապրես: հաց չկա՞:

— Հա՛ց... Ա՛յ մարդ, հացն ի՛նչես անում...:

Հենց այնպես հուպ տուր, թող զնա: Համեղ ձուկ է:

Ռաֆայելը փոշու մեջ կիսալեփ յեղած ձուկը կտոր-կտոր անելով՝ սկսեց ուտել:



Կողքին նստածը նրա վզակոթին տալով  
ասաց.

— Հիմա ոտան, տեսնեմ, ծանոթ, պապիրոս  
սից-բանից ի՞նչ ունես:

— Յես չեմ ծխում, պատասխանեց Ռաֆայելը:

Ի՞նչ, անպետք քուռակ, բա պապիրոս ել  
վոր չունես, ել ինչացո՞ւ լես: Ապա դառնալով  
ընկերոջը՝

— Ե՛ր, Չեպիշ:

— Հը՛մ մ՛մ... — պատասխանեց մի ուրիշն  
կողմից:

— Պապիրոսը մի դեպը գցի՛ր

— Չունեմ...

— Ա՛յ փչանա՛ս դու: Բա ետոր իսկի պապի-  
րոս չես թոցրե՛լ:

Այլևս վո՛չ մի խոսք: Կենդանիների այդ մութ  
գերեզմանոցում տիրեց խոր լուռություն:

Նոր հյուրը վազուց եր, ինչ ձուկը կերել  
քնել եր:

Ռաֆայելը, ըստ իր վաղեմի սովորություն  
ամեն առավոտ քնից զարթնելուն պես իր շա-  
լակն աչքի լեք անցկացնում: Բայց նա իրեն  
գտավ մի ուրիշ աշխարհում: Անմիջապես վերհի-  
նեց հորից բաժանվելու որից մինչև այս մութ «գե-  
րեզմանոցում» ձուկ ուտելու բոպեն անցկացրած

Կամանակաշրջանը: Այժմ շալակից վոչինչ չեր  
նացել: Այժմ նա տեսնում եր, բացի իրենից նաև  
որս հողի մրադեմ, կարտած շորեր հագած լերե-  
նաներ, վորոնք քնից զարթնելով մկան ծակից  
ուրս գալու նման մեկ առ մեկ դուրս են սո-  
րում ողախից:

Քամին հանդարտել եր: Աշնան դաղջ սրեր  
տաքացնում եր քաղաքի սալարկված փողոցները:  
Ռաֆայելը ողախի դռան առաջ կանգնած՝  
որս կողմն եր նայում, ուր գնալը չեր լմա-  
նում:

Յերելսաներից ամենամեծը մոտեցավ նրան  
ձեռքը նրա ուսին ամուր խփելով ասաց՝

— Ե՛ր, գալիս վորդի, ի՞նչ ես հորթի նման  
կանգնել և դես ու դեն ես մտիկ անում... Տունը  
նայ՛ Նշան արա, վոր իրիկունը տեղը չմոռանաս:  
Ինձ մտիկ արա՛, ուզում ես ինձ հետ ընկիրա-  
լար... Տեսնում եմ, վոր ուշիմ մարդ ես լերե-  
նում...

Ռաֆայելը գեմը կանգնածին վոտքից մինչև  
կուրս լավ դնեց: Սա 17-18 տարեկան, անս-  
թով, սրաքիթ, շիկահեր և կապտաչյա մի սղա  
լեր խոսելիս այնպիսի լուրջ դեմք եր ստանում,  
որ լերքեք համապատասխան չեր նրա կարտած  
որերին և կարճ ու կոլոս հասակին:  
Նա շարունակեց.

— Հը՛, ինչո՞ւ չես պատասխանում... Ուզում ես ինձ հետ ընկերանալ: Խի՛ի, դա,—ասաց նա և իր մրտաած ու ուժեղ ձեռքը յերկարացրեց Ռաֆայելին:

— Հա՛յ կլինենք, հա՛նա...

— Հա՛յ կլինենք, հա՛նա... նման սոնով կըլինես դիմացինը... Ի՞նչ ես կնկա նման խոսում: մարդ լեզիր: Ինչ, գնանք,—ասաց նա և ազատանալով դեպի ընկերները՝ ավելացրեց.

— Մարդը գետ նոր ե... Ինձ հետ պետք է ման դա: Իսկ յերեկոյան բոլորս միասին ավտակ... Ե՛յ, ծուռ քիթ, այսոր պետք է շատ լըլիք, նոր հյուրին հարգելու համար հացկերուլ պիտի սարքենք:

Ծուռ քիթը նիհար, յերկարավիզ և առաջինից ավելի քիչ տարիք ունեցող մի յերեխա յեր նրա շարվարի ձախ կողմի մասը՝ ծնկից ցած չկար: Շապկի փոխարեն մեջքին գցած հին մեշոկի տակից նրա վողնաշարի վոսկորները համրվում ելին: Յերկար ու բարակ քիթը գեպի աջ կողմը ծռած՝ մանգաղի ձև եր ստացել: Զնայած նիհարությանը, նա բոլորից ել լավ և առողջ կազմվածք ուներ:

Ծուռ քիթը յերեսն ուղղելով ուրիշ յերկր ընկերներին՝

— Հո՛ի, մարդ—ասաց և ընկերների հետ միասին անհեռացավ:

Այդ յերկուն յերեկվա նման ցուրտ չեր: Ընկերները բուլվարի ազատ մի անկյուն քաշված՝ կրակ ելին վառում:

Հայն ու առատ սեղանի վրա կալին չորացրած ձուկ, հաց, մրգեղեն, կալին սև հաց և նույն լակ՝ բուլկիներ:

— Սպասեցեք,—հանկարծ ձայն տվեց կարճահասակ և գեր ընկերը, վորին «Սարի բողկ» անուն ելին տալիս մյուսները:

Ընկերները լսեցին:

«Սարի բողկը» նոր և զազանի մի լուր հարգելու համար՝ զուխը յերկարացնելով՝ ասաց.

— Իմացել եք ինչ կա:

— Ի՞նչ.—հարցրին ընկերները:

— Հա՛յ... Հա՛յ... Գործերը խորաբ են: Բանբերիզադները խմբերով շրջում են քաղաքն ու մարդ են վնարում:

Այս խոսքի վրա առաջինը Ծուռ քիթը ծիծաղեց.

— Մարդ,—հարցրեց նա զարմացած—վո՞նց թե մարդ: Այս քաղաքում ել մարդ չկա...

«Լյուլեչին»-ը, վոր մինչև այդ ժամանակ նրատած ասանձ եր ուտում, ընկերով խոսքն ընդհատելով՝ ասաց.

— Բա ես մարդիքն ի՞նչ են, մեղրադդձւմ են։  
Ընկերները սրան ել «Լյուլեյին» ելին՝ ան-  
վանել նրա համար, վոր նա արևածաղկի ցո-  
ղունի պես ծոված՝ բլթից շարունակ ջուր եր  
կաթում։

«Ծուռ քիթը», «Լյուլեյին»-ի գլխին բամփե-  
լով ասաց՝

— Ե՛հ անխելք... Յեթե նրանք ել մարդ  
լինելին, հիմա նրանք ել մեզ նման պղնձի տակ  
կընելին։

«Սարի Բողկը» իսկույն ծիծաղեց և ապա  
լուրջ կերպարանք ստանալով՝ ասաց.

— Հենց այդ է, վոր բանվորական բրիգադ-  
ները մարդ փնտրելու պատրվակի տակ մեզ են  
փնտրում

— Մեզ... վոր ի՞նչ անեն... խոմ թթու չը-  
պիտի դնեն

— Թթու չեն դնի, բայց տան մեջ կպա-  
հեն։

Ընկերների գլխին կարծես սառը ջուր լցրին։  
Մի քանի բուլե վոչ մեկը չեր խոսում։ Բոլորն  
ել ընկան խոր մտածմունքի մեջ։

Վերջապես «Սարի բողկն» ընդհատեց լուռ-  
թյունը, ասելով՝

— Աշխատեցեք ձեռք չընկնել, թե չե՛ կը-  
տանեն, զավոդներում կաշխատեցնեն։

Ռաֆայելի սրտում կարծես հուլի մի նը-  
շույլ ծագեց։

— Թո՛ղ աշխատեցնեն, խոմ անոթի չեն  
թողնի, — ասաց նա։

— Անոթի չեն թողնի, բայց կաշխատեցնեն։

— Վնաս չունի։ Թող ինձ բռնեն և գործի  
ուղարկեն, — ավելացրեց Ռաֆայելը։

Յերեք օրից հետո, Ռաֆայելն ու «Սարի  
բողկն» աղբանքակաշարանում, սարի նման իրար  
վրա դարսված կարտոֆիլի սլորկերը քանդելու  
ժամանակ բռնվեցին բանբրիգադային խմբակի  
կողմից, վոր նշանակված եր անապատտանու-  
թյան դեմ կովոյ հանձնաժողովի կողմից։

Ռաֆայելն առանց շարժվելու հանձնվեց,  
իսկ «Սարի բողկը», ցանցում ընկած վալըրինի  
կատվի նման, աշխատում եր իրեն ազատել, բայց  
անողոււա։

Կես ժամից հետո նրանց ուղարկեցին նա-  
խապես պատրաստված շրջանային կայանը, վոր-  
տեղ նրանց դիմավորեցին մի շարք իրենց նման  
ցնցոտիներ հազած լեբեխաներ։

Չերբակալվածներին մի շաքաթ պահելուց,  
հետո առանձին-առանձին խմբերի բաժանելով,  
ուղարկեցին այս ու այն կողմը։

Ռաֆայելն ու «Սարի բողկը» ուղարկվեցին՝  
ելեքարոնկայանի տրամադրութեան տակ:

Գործարանի կյանքն աշխուժացրել էր Ռաֆայելին: Նա ամեն բանի մեջ խառնվել, ամեն բան սովորել էր ուզում: Վեց ամսվա մեջ սովորեց կարդալ և գրել: Գործարանի վարպետներից Սերգեյ անունով մի հայ տեսնելով Ռաֆայելի ուշիմութունն ու աշխատելու ընդունակութիւնը՝ նրան վերցրեց իր մոտ: Վեց ամիս հետո Ռաֆայելին ուղարկեցին տրակտորիստների կուրսերը սովորելու:

Ռաֆայելն այս կուրսերը ևս հաջողութեամբ ավարտելուց հետո, առանց սպասելու, վերադարձավ և մտավ իրենց գյուղի կազմակերպված կոլխոզը:

Ռաֆայելն առաջին օրը գնաց իրենց տուն: Ամենից շատ ուզում էր փոքրիկ քրոջը—Սառային տեսնել, փորձ արդեն մեծացել, գեղեցիկ աղջիկ էր դարձել:

Ծերունի Աշուրը Ռաֆայելին մի գավակի նման չընդունեց, իսկ մայրն ու Սառան ուրախութիւնից լաց լեզան:

— Հայրիկ, շալակս կապիր, առափոռոյան գնում եմ քաղաք մանրուքներ ծախելու, — ասաց Ռաֆայելը ծիծաղելով:

Հայրն զգալով, փոքր Ռաֆայելը արհամարհա-

ն տոնով և խոսում, բիւ տակից մըթմըթաց:  
Սկի մայրը հավատարով նրա ասածին՝

— Հայրդ ծերացել է, — ասաց նա, — նրան կոխող և հարկավոր: Սրանից հետո դու պետք է ման գաս և առևտուր անես:

Ռաֆայելը ծիծաղեց ու տնից հեռացավ: Կոմսոմոլիստ Ռաֆայելն առևտրական Աշուրին ել՝ չէր ուզում ճանաչել: Ամիսներով տուն չէր գնում: Յերբեմն գնում էր միայն սառային տեսնելու:

Յերեք ամսից հետո Սառային ուղարկեց քաղաք սովորելու: Այժմ մի տարի լե, ինչ նա սովորում է դպրոցում:

Հիմա յերբ Ռաֆայելը մտածում է քրոջը քաղաքից դուրս բերելու և մարդու տալու մասին, ուզում է հորը խեղդել կտոր-կտոր անել:

#### IV

Կոլխոզի աշխատավորներն ընթրեցին և ամեն մեկը մի կողմ քաշվելով՝ սկսեց հանգստանալ:

Գյուլ բալան անհանդիստ էր: Մտածում էր շարունակ Ռաֆայելի ընթրիքին չմասնակցելու մասին: Ուստի վեր կացավ և գնաց Ռաֆայելի մոտ:

Ռաֆայելը, խորասուզված լինելով մտքովի մեջ, Գյուլբալայի գալը չնկատեց:

— Ելի ի՞նչ ե պատահել, վոր այդքան տածում ես,—հարցրեց Գյուլ բալան: Յեթե նա վերն ընկզմովի են ծովում, ասա մեզ, գնանք քացի յեւ մենք սանք:

Ռաֆայելը լուռ եր: Գյուլբալայն շարունակեց.

— Դրուսա, ի՞նչ ե պատահել: Կարելի անից մի բան ես լսել: Գուցե մի դժբաղդ թյուն ե պատահել:

— Մեծ դժբաղդություն,—հառաչեց Փայելը և բարկությունից թրջվող աչքերն խառեց թագցնել ընկերոջից:

— Ի՞նչ ե յեղել, գուցե հարկավոր կլինի նել քեզ:

— Ա՛խ, Գյուլբալա, յես ել չեմ կարող հորս հետ յուր գնալ: Նրա ձեռքից գլուխս նելով փախա, բայց նա ինձանից ձեռք չի շում:

— Ի՞նչ կա...

— Ել ի՞նչ պետքե լինի: Ուզում ե քո...

— Սառային դպրոցից հանի ու մարդու տան ել գնա, վոր ասեմ կգարմանս,—Առևտրափ...

ձիշտ վոր խնդիրը լուրջ ե,—ասաց Գյուլբալա շարժելով:

Ռաֆայելը ընկերներն ել լռեցին:

Ռաֆայելը, — ասաց Գյուլբալայն ընդհատիրող լուրթյունը,—տեսնում ես առվակի տեղն ընկած այն կոճղը: Նա, կարծես, մ ե կանգնեցնել ջրի հոսանքը, սակայն այդ ջրի հոսանքից, մաշվում, փշանում ե, և մի հետո հանկարծ կդա մի ուժեղ հեղեղ և առաջն առնելով՝ ով դիտե վարտեղ կքշի:

— Դու մտածել ես հորդ սպանել, բայց դա քալ կլինի քո կողմից: Հարկավոր ե քրոջդ ես ու հեռանաս, չպետքե սպասես, վոր որդե ձեռքերի մեջ մաշվի, փշանա: Մորդ լաորդ հարայ—հրոցին մտիկ չպետք ե տաս, մը:

Սառայան շուտ, Ռաֆայելը ձի նստած, ինքն ուր տունը: Սառան, յեղբորը տեսնելիս, թաթից վզովն, ուզում եր համբուրել:

— Դեն քաշվի, մի համբուրի,—ասաց Ռաֆայելը:

— Ինչո՞ւ, Ռաֆայել: Յես յերբեք քեզ այսքան լացած չելի տեսել,—ասաց բուլբն ու յեա...

Ռաֆայելն իր ձեռքերը քրոջ ուսին դնելով՝

իերկար, իերկար նախեց նրա աչքերին և ապա սաց՝

— Հախր, Սառա, կամ հորդ, կամ ինձ հետ

— Այդ ի՞նչ ես ասում, Ռաֆայել, — հարցրեց Սառան:

— Այն, վոր կամ ինձ հետ պիտի դաս, հորդ մոտ մնալով՝ առևտրական Չուսնուզի դալի կինը պիտի դառնաս, դպրոցը թողնելու հորդ նման, կույր պիտի մնաս:

Սառայի աչքերը լցվեցին արցունքով: նախ՝ մորը և ապա՝ Ռաֆայելի աչքերին լուց հետո փաթաթվեց վերջինիս վզովը ու ասաց՝

— Յես քեզ հետ կգամ, Ռաֆայել ջան:

— Ուրեմն ընկիր առաջս Տնից վո՛չ մի բան հարկավոր չես վերցնել: Հիմա կհասնենք քաղաք և այնտեղից ել՝ կոլխոզ: Քեզ հարկ չեղածները քաղաքից կառնենք:

Մայրը, վոր մինչ այդ սուս ու փուս կանգնած էր, հանկարծ վազեց առաջն ու ասաց՝

— Չի՛ լինի: Սառան վո՛չ մի անգ չպիտի գնաս:

— Պիտի գնա, ասում եմ, վերջացավ:

— Յես կխեղդեմ ինձ, արյուն կթափեմ կաթն ձեզ հալալ չեմ անի:

Ռաֆայելն ու Սառան դուրս լեւան: Ռաֆայելը քրոջն առավ ձիու գավակը: Մայրը

մից բռնած՝ չեր թողնում: Ռաֆայելը ձին պանդակեց, և քույր ու լեղբայր, ուշադրունքով չդարձնելով մոր թափած արցունքներին, ավելի թարթում հեռացան:

Արևը սոճիների հետևը թափնվելու վրա լեր: Բախտալին փոքրիկ քաղաքի փողոցները լուռ և անարկ ելին:

Ռաֆայելն ու Սառան բազարից անհրաժեշտները վերցրած՝ դնում ելին կոլխոզ:

Չին Ֆրֆուացիներով սլանում էր քառու նման: Քաղաքի ծայրամասի փողոցներից մեկը հաս-

ին՝ Ռաֆայելն սկսեց մտրակել ձիուն, վոր լեղի արագ թռչի: Մոտիկ փողոցից լավող հոգ-

ած, նվաղած ձայնը խեղդվում էր ձիու ամբակ-

րի և մտրակի ձայների մեջ և հեռագհեռ հե-

անում, խորանում էր: Ասեղ, սապան, գնդասեղ, պարսկական լեղ...

Ծերունի Աշուրի ձայնն էր:

«ՍԱՐԸ ՔՅՈՅՆԵՔ»

(Դեղին ռապիկ)

Հանգստյան տան բոլոր ծառայողներն ու հյուրերը նրան «սարը—խալան» անունն էյին տալիս իսկ նրա խկական անունը Սարը—Քյոյնեք է լեղել: Յես այդ հետո իմացա:

Չնայած տարիքին, նա շատ քաղցրալեզու և կատակասեր էր: Արտաքին տեսքից յերեվում էր, վոր նրա մեջ կյանքից գոհ, պայքարից հաղթող գուրս գալու մի աշխուժութուն կար, մինչդեռ նրա հետ ծանոթանալու ժամանակ նա հիսուն տարեկան էր:

Հակառակ այս ըլլորին, Սարը—խալան բավական ջղային և յերբեմն էլ շատ մտածկոտ էր յերեվում: Յեվ ինձ հետաքրքրողն էլ հենց այդ հանգամանքն էր: Ուզում էի կարգալ նրա կյանքի եջերը: Այդ բանն ինքն էլ էր գգում և ամենից շատ ինձ էր մոտիկանում:

Մեր ծանոթութւյան յերկրորդ շաբթում կամ տարված մի դեպք ոգնեց ինձ, վոր յես իմ այդ ցանկութւյունն իրականացնեմ:

Մի որ, Սարը—խալան ձուտ լեկավ 15—20 տարեկան, սլարգ հագնված և գեղեցիկ մի աղջիկ խալան ինձ նրա հետ ծանոթացնելիս ասաց.

—Աղջիկս Սելիմեն է, ծանոթացեք:

Յեվ յերբ մի քիչ զրույց անելուց հետո աղջիկը հեռացավ մեզանից, Սարը—խալան կիսով չքի վիշտ և միաժամանակ ուրախութուն արտահայտող մի հայացք գցեց իմ վրա և ասաց.

—Ախ, յեթե գիտենայիք, թե ինչպիսի՞ դժվարութւյամբ, ինչպիսի՞ ծանր որերումն է: մեծացրել նրան...

\* \* \*

Սեպտեմբերյան պարզ ու հասակ մի գիշեր, Սարը խալայի հետ միասին նստած ելինք այգու մի անկյունում: այդ որը նա կարող էր հանգստանալ, վորովհետև որվա բոլոր կարգադրութւյուններն արել, վերջացրել էր:

—Ախ, յեթե գիտենայիք, յես նրան ի՞նչ դժվարութւյամբ եմ մեծացրել:

Նրա յերկրորդ անգամ կրկնած այս խոսքերն, իմ ցանկացած գրքի առաջին և վլսավոր էջերն էլին:

—Կյանքի ճանապարհները վորքան դժվար են, ասաց նա դողդոջուն և ափելի կերկերական տոնով:

Չգիտեմ ինչնու, յես էլ մի ծանրութւյուն, մի վիշտ էլի գգում... տանն և հինգ որվա ընթացքում ինձ մի յերիտասարդ աղջկա նման վտուվուռն և անվիշտ յերևացող այս կինը այժմ ին-

չիւ իր ալիխաան ծամերով, կնճոտած դեմքով  
ու պղտոր աչերով թույլ և վշտահար եր յերևում:  
գուցե նրա աչքերը թրջված ելին:

Յերկուսս ել նաչում եյինը դեպի յերկինքը,  
հեռու հորիզոնը:

Մերթ ընդ մերթ, արագութեամբ վայր ըն-  
կնող աապերը, ժաղամտող սրի նման, պատում  
ելին յերկնքի կապտագույն կուրծքը: Չորս կող-  
մը լուռ եր: վերջապես յես խղեցի՝ այդ լուռ-  
թլուռը:

— Մարը — խալա, կարելի չե՞ գուք սիրով, տան-  
ջանքով և յերջանկութեամբ լեցուն մի անցյալ  
ունեք, — հարեցի յես:

Նա գեռ լուռ եր: գուցե նա իր յերկար ան-  
ցյալի պատմութիւնն սկսելու համար մի սկիզբ  
եր վնտրում:

— Այտեղ, հանգստյան տանը, Մարը — խալա  
կուչվող այս պառափն իր մորից այսպես չճնվեց:  
Յես ել յերիտասարդ եմ յեղել և յերիտասար-  
գութեան հատուկ սեր ու գիպվածներ եմ ունե-  
ցել: Յես ել իմ սիրելին եմ ունեցել, սիրել,  
սիրվել եմ:

Թայան, բռնված շունչը հավաքելու համար,  
մի քիչ կանգ առավ: հետո ասաց՝

— Վերջապես ամուսնացանք...

— Բն, Ձեր ամուսինը՝ — հարցրի լես:

— Մեռավ: սպանեցին:

Այս վեջին բառերն արտասանելիս, նրա աչ-  
քերում հորդ արտասուքով խառն գայրուլթի և  
վրեժի կայծեր կային: վերջապես, նա կարողացավ  
գտնել իր կյանքի պատմութեան նախաբանը:

— Մնվել եմ Ս. դրբեջան՝ կուր գետի վրա զբա-  
նըվող գլուղերից մեկում, մի ջրաղացպանի ընտա-  
նիքում: տասն և հինգ տարեկան հասակից, վոչ  
թե միաջն մեր գյուղում, այլ և հարեան գյուղե-  
րում անգամ խոսվում եր իմ գեղեցկութեան մա-  
սին: Նույնիսկ այն ժամանակվա աշուղներից մեկն  
իմ գեղեցկութեան մասին, Մահալ բեկի զբվանում-  
մի յերգ ե յերգել...

Մարը — խալան, այդ յերգը վերհիշելու հա-  
մար, մի փոքր մտածեց և ապա դեմքը կնճո-  
տելով՝ ասաց, — հն, հիշեցի: —

«Մարը անուն, սեվ ծամերով սի գեղեցիկ կին,  
Ասուղների լեզվին դաստան ե յեղել:

Իսկ նրան սեղծող արարիչն ել՝

Գեղեցկութեանն և զարմացել»...

— Հիմա՛ չեմ ամաչում և բոլորն ել քեզ կը-  
պատմեմ, — շարունակեց Մարը խալան: Մահալ-  
բեկի տղան և գյուղապետի լեղբարը, ամեն  
իրկնապարհին ձիերի վրա նստած՝ անցնում ելին  
մեր ջրաղացի մոտից: մի բանի անգամ զնալ —  
գալուց հետո, նրանց այդ ճամբորդութիւնից



իմացա, վոր մի պատրվակով կանգնում ելին ջրադացի դռան առաջ ու ինձ տեսնելու համար լեղնիկ փնտրող վորսորդի պես այս ու աքն կողմն ելին ման ածում իրենց աչքերը:

Յեա, պիտի ասեմ, վոր այն ժամանակ շատ խորամանկ և ուշիմ ելի, նրանց աչքին չեյի լերևում: Յեվ յեթե լերեվայի ել, ծածկում ելի յե-երսս և միտան աչքերս ելի բաց թողնում: գիտե-լի նաչի, վոր նրանցից և վոչ մեկը չեք ուզում ինձ հետ ամուսնանալ: այդ ժամանակ բեկերը ույաներից աղջիկ չելին ուզում: Բայց սրանք, ինձ մի ժամ ձեռք գցելու համար վոչինչ չելին ինայում:

Մարը—խալան իր լերիտասարդ կյանքի պատ-մության եջերը թերթելիս, ավելի քան աշխու-ժանում եր:

—Մի որ ել, մեր և բեկի տղայի միջև մի ընդ-հարում տեղի ունեցալ: Յեա քոն ավին ցո-րեն ելի փուել և, թռչուններից պաշտպանելու համար հսկում ելի: Արևը մայր մանելու մոտ եր, յերբ հոնկարժ լսեցի ձիու խրինջոց: Յեա դար-ձա, տեսա, վոր բեկի տղան եր: ամբողջ մարմ-նովս գողում ելի, նա իր կրքայից աչքերը ուղ-ղելով ինձ:

—Մարը— քոյնեք, զոնախ ուզում ես, — ասաց և սպիտակացրեց ատամները:

Ուզեցի փախչել: Յեվ յերբ ուզեցա անցնել մո-տակա ցանկապատից, նա անմիջապես ձիուց ցած թռալ ու բռնեց ինձ: Ինձ համբուրել ցան-կացող նրա շրթունքներն այնքան մոտիկ ելին, վոր հեշտությամբ անցան ձեռքս: սկսեցի ձմուել, տրորել:

Իբար հետ կուվելով իրար հրելով, մենք հա-սել ելինք արդեն քոն ավին գտնված ապա-նոսներին: Զգիտեմ ինչպես լեղալ վոր բեկի տը-ղայի ոճիքը ձեռքիցս ազատվեց ու նա դրմփալով ընկալ ջրի մեջ և թփրտում եր ջրի մեջ ընկած հավի ձաղի նման:

Իսկ յես ժայռի վրայից բռունցքով սպառ-նում ելի, լեղուս ցուլց տալով բարկացնում նրան:

Այս դեպքից լալ խրատված բեկի տղային ել չտեսա, վոր մեր ջրադացի դոնից անցներ:

Գյուղում իմ յետեկից ընկած լերիտասարդ-ներից և վոչ մեկին չեյի սիրում: նրանցից մե-կը հպարտ եր, միուսը՝ վախկոտ, յերբորդը՝ քըժ-նոդ: Ամենից շատ քծնում եր գլուղի խանութ-պանի տղան, վոր մի քանի անգամ ուզեց ինձ հոտավետ ոճառ, կարմիր թաշկինակ և մետաքս շապիկ նվիրել, բայց յես նրան հաշոյեցի:

ամենից շատ սիրում ելի գլուղի նախրա-պանին, վոր այդ ժամանակ 20-25 տարեկան,

յերկարահասակ, սե ու խոշոր աչքերով, լուրջ նայվածքի տեր մի յերիտասարդ էր:

Մի որ լեռ այդ յերիտասարդին տեսա հարսանիքում մեկի հետ գոտեմարտում էր: Իրենից ուժեղ մի մարդու հետ մեկ յեկու ըսպե կըպչելուց հետո՝ նրան կատիի ձագի նման խողացրեց իր ձեռքերի մեջ:

Նրան աղպես տեսա և հավանեցի:

Փամացույցն 9 տփեց: Այգու հեռու մի անկյունից դեռ լսվում էին յերաժշտութեան ձայները: աղամարդկանց և կանանց խառն ձայներից լսվող՝

«Տղա ունեցողն իսկի դարդ չունի...» խոսքերին պատասխանում էին մի խումբ կանանց ախուր ձայները՝

«բայց աղջիկներն դարդերն ալելի շատ են...»:

Մարը-խալան, տեսնելով, վոր լեռ ուշադրութեամբ լսում եմ իրեն, շարունակեց.

— Մի ամսից հետո, նախրապանի հետ ամուսնացանք: Բացի 60 տարեկան մի ծեր մորից, ել վոչ վոք չունեիր նա: Գյուղի յեղրին ունեք փոքրիկ մի խրճիթ, առաջը՝ մի բանջարանոց:

Մի ամսում այդ ավերակի նմանվող տունն իմ այս ձեռքերով այնքան շենացրի, այնքան դեղեցկացրի, վոր հարեան բոլոր աղջիկներն ու հարսները հիացան: Իսկ յերբ գարունը բացվեց

տան առջևիվի բանջարանոցում ամեն տեսակի բույսեր ցանեցի:

Մի սր, յերբ ամուսինս պատրաստվում էր Գնալ քաղաքի բազարը, ասաց, վոր դիշերը մնալու լե այնտեղ: Անն այստեղից ել սկսվեցին կյանքիս ամենածանր ու վողբերգական դեպքերը: —

Ամուսինս գնաց: Սկեսուրս հազցրեց ինձ և ուշ ժամանակից հետո տարավ ինձ շրջանում «հրաշագործութեամբ» ու «հնարագիտութեամբ» հայտնի Շեխ հաջի Մեհմեդ Բարալի տունը:

Շեխը բավական դեր, չալ ու տափակ, կլոր մորուքով, կապույտ և կարմրաչա մի դագան էր: Զգիտեմ ինչն, նրա սեխակը մանեղիս սկըսեցի դողալ: Սկեսուրս հրամանով համբուրեցի նրա մազոս և մոտ ձեռքը: Իսկ նա ձախ ձեռքով իմ պարանոցը շոյում և դողում էր: սիրտս այնքան եր նեղվում, վոր ամբողջ մարմինս ըրրտինքով պատած էր:

Վերջապես Շեխը խոսեց.

— Բարձրախն ասաված յերբեք իր ծառաներին չի հուսահատեցնում: Սախան, ծառաների և աստծու միջև խոսելու, նրանց դատքերը պատմելու համար միջոցներ կան, և այդ միջոցներն են աստծու հավատացալ ծառաները — ուկիմաներն (գիտուները) ու շեյխերը:

Սկեսուրս, այդ դժբախտ կինը, աղաչելով ասում

եր. «Ո՞վ շելիս, չես քեզանից մը արու թագնիկ եմ խնդրում, դու գիտես»:

— Թո՛ւ ել կլինի, արդյունք ել... Այդ առաժու բարի կամքից և նրա ծառայի հավասարից ե կախված,—ասումներ շելին ու շոյում ծամերս: Յե՛վ ապա զիմացի դուռը ցույց տալով՝ տաաց.

— գնա՛ ե՛ն սենյակը:

Նայեցի սկեսորոջս յերեսին: Նրա նայվածքները, կարծես, ասում էին՝ «Գնա՛, մի սպասիր: Հնազանդվիր շելիս հրամանին...»:

ասանց մտածելու դուռը բաց արի: Գեղեցիկ զարդարված մի սեյնակ եր: Անմիջապես դուռը փակեցին և չես մնացի այդ կիսախավար սենյակում:

Սաստիկ հուզմունքից, Սարը — Խալայի ձայնը դողում եր, կարծես հենց այդ միջոցին ել աղբում եր անցկացրած կյանքի սոսկալի բույները: Նա շարունակեց.

— Մինչև իրիկուն մենակ մնացի այդ սենյակում: Փոքրիկ պատուհաններից ներս թափանցող լույսը հետեզհետե պակասեց և սեյնակը ծածկվեց գերեզմանալին խավարով: Վերջապես դուռը դռա, ուղում ելի փախչել, ազատվել այդ սեղից, բայց ավանդ... հաստ կաղնափայտից շինված դուռը դրսից փակեցին: Ուղում ելի սուռալ, ճշալ դուռը կտարել, բայց կարելի չէր ..

Փիչ հետո, դռան լեակից լավեց մի վտանաձայն Դուռը գարնվեց: Դռնից յերեկաց լամպի լույսը և 15-16 տարեկան մի աղջիկ, վոր ներս մտավ: Ապա՝ մի ուրիշը: Սրա լել ձեռքին կար դեղնագուն և փոքրիկ մի պղինձ: յերկու աղջիկն ել սուս ու փուս բերածները դրեցին գետին: Յե՛վ յերբ ուղեցին դուրս գնալ, չես անցա առաջին անգամ յեկողի առաջն ու խնդրեցի՝

— Յես գնում եմ:

Նա ինձ հրեց և դուրս յելավ: Յրկունս ել գնացին: հարձակվեցի դռան վրա, բայց ելի փակ եր: Նայեցի սենյակի չորս կողմը: Զարդարված սենյակ, հատակին թանկագին մի գորգ, իսկ միքիչ վերևը դրված եր մետաքսա անկողնով ծածկված մի թախտ:

Շատ շանցած, դուռը բացվեց և յերեսաց շելիս սալտակ մորուքը: Նա հագած եր մետաքսա շերտավոր կտորից կարած զիշերանոցը, գլխին ծածկած եր վոսկեգուն վարդերով նաշխած թավշա արախչին, վորի տակից յերևում եր նրա յերկձալ վիզն ու կուրծքը:

Թևերը կտորած թռչնի պես սեղմվել ելի պատին և դողում ելի:

— Գիտե՛մ, այսոր սոված ես մնացել տաաց Շեխը և կամաց կամաց մոտեցավ ինձ: — վնաս չունի: Ասածու համար մի որ սնտթի մնա-

ցարի վարձքը շատ և: Իսկ հիմա Շեյխ բարա-  
վիդ հետ միասին ընթրիք կանես:

Յես քարացել մնացել ելի: Իսկ նա ինձ ան-  
քան մոտ էր, վոր դեր ու հաստ ձեռք կրճըրիս էր  
զիպչում, ամբողջ մարմնով փշաքաղվում ելի:  
Գլուխս քարը արած՝ նայում ելի նա բռնեց զը-  
լուխս և վեր բարձրացնելով՝ ասաց.

— Ինչո՞ւ չես խոսում, ամաչում ևս. իսկի  
չեյի Բարալիցն ել կամաչինս Ասա, տեսնեմ, տղա  
չես ուզում, թե՞ աղջիկ, և սպա ծիծաղելով ա-  
վելացրեց՝

— Իհարկե՞ տղա... խոստանում եմ քեզ  
Շահ — զագելի նման մի տղա տար:

Ծիծաղելիս այնքան խարդախ, այնքան կեղ-  
տոտ ու վատ մի կերպարանք էր ստանում նա...

Հանկարծ նա վերցրեց ինձ ու քաշեց թախ-  
տի վրա: Յես ինձ կորցրի...

Միան առաջադաս, ուշաթափված ելի թե՞  
քնած, չգիտեմ, յերբ զարթնեցի, սկեռուրջս դատ  
ինձ մոտ: Այդ գժբախար գլխիս լեկած փորձան-  
քից անգեկություն չուներ: Նա ուրախացավ, վոր  
չես արդեն զարթնել ևմ: համբուրից յերեսներս  
և ասաց՝

— Աչքդ լուս, աղջիկս, Շեյխ Բարան խոտր  
տվեց, վոր շուտով մի տղա կունենաս:

Յես նրա աչքերի մեջ նկատեցի ուրախու-

թյան և հուշի նշաներ, սրտումս գեպի այդ խեղձ  
ու միամիտ կինն զգում ելի թե՞ գութ. և թե  
դզվանք: Բացվել ելին աչքերս, ամեն ինչ հաս-  
կացել ելի: Վնչ ասածուն, վոչ կրոնին ու կրոնա-  
վորներին վնչ ել ասածու. խրովիրակներին չեյի  
հավատում:

Այդ միջոցին յերևացին շեյխի ստամալուկան  
աչքերը: Մոտենալով իմ պռակած թախտին՝ ու  
բախ ու ժպտաղեմ ասաց՝

— Իմ աղթքի շնորհիվ, այս գիշեր շատ  
հանդիսա և քաղցր քնել ելիր: Յեթե սկեսուրդ  
չգար, չպիտի զարթնեիր: Յես այս գիշեր քնեցի  
մի առանձին նպատակով: Քնիս մեջ մի առան-  
ձին ներշնչումով զգացի, վոր դու մի արու դավակ  
պիտի ունենաս, — ասաց շեյխն ու ձեռքում լեղած  
դուրանի թերթերով հողմահարեց յերեսս: Յեթե  
ուշժ ունենայի, հենց այդ ժամանակ դուրանը  
կխփելի այդ հրեշի գլխին:

Սկետորջս հետ տուն վերադառնալիս, ամու-  
սնուս տեսա ճանապարհին: Նա լեկել էր տուն,  
մեզ այնտեղ չէր գտել, հարևաններից իմացել  
էր, վոր այդ գիշեր զնացել էինք շեյխի տուն:  
Ամուսնուս աչքերը արնակալել էլին: Ինձ տեսնե-  
լիս ձեռքերը գրեց ուսերիս և ուշի ուշով նայեց  
աչքերիս մեջ: Չգիտեմ, թե՞ նա ինչ էր վնարում:  
Յես այլևս չկարողացա նայել նրա յերեսին, չոգե-

ցի և գրկեցի վաքերը: Թի ինչ անացի, ինչ խնդրեցի — չեմ հիշում: Միայն մի ժամից հետո ինձ տեսա մեր տանը, մեծ գրուց ու դարձազարի մեջ:

Ինձ պատահելու տեղից նա ուղիղ գնացել էր մզիթը և շեյխին, հենց աղոթելիս, դաշտունով սպանել և գնացել — հանձնվել էր գյուղպետին:

\* \* \*

— Յերեք տարի վորբեայրի մնացի: Բոլոր գյուղացիներին անեծքին, նախատինքին արժանացա: Նույնիսկ փոքրիկ լերեխաները մասնացուց անելով ինձ՝ ասում էլին:

— Տեսեք, շեյխի սպանության պատճառը սա լե:

Որբերով, շաբաթներով անից դուրս չեյի գնում, խեղճ սկեսուրս սրա-նրա դուռը վողորմության խնդրելով՝ բերում — պահում էր ինձ, վորովհետև ինձ վոչ վոր, վնչ մի տեղ գործ չեյին տալիս:

Յերբորդ տարին սկեսուրս մեռավ, մնացի մենակ: Վախենալով, վոր գիշերները կարող են հարձակվել տան վրա՝ գիշերներն անքուն եյի լուսացնում: Շատ անգամ էլ, տեղս թագցնելու համար, մտում էլի՝ Քոի ափին չեղեզնուաներում կամ ալգիներում: Իսկ հաճախ մեկ լերիու սրով գնում էլի հարևան գյուղերը, հարուստների տներում աշխատում և վերագառնում մեր գյուղը: Մի որ

ել գործ ճարելու հուշով, գնացի քաղաք, բայց յերկար-բարակ ման գալուց, գործ չգտնելուց հետո, նորից վերագարձա գյուղ:

Սկեսուրջս մեռնելուց վեց ամիս հետո մեր գյուղը յեկավ յերիսասարդ մի ուսուցիչ: Գտներ էր տալիս նա մեր տան մտիկ գալրոցում և այնտեղ էլ գիշերում էր:

Առավոտները, չերբ գալրոցի աշակերտները յերգում եյին, լես տան պատուհանից լսում և հաճախ յերգերի ազդեցության տակ լաց եյի լինում: Յեռ և ուսուցիչը շատ պարզ ձևով ծանոթացանք իրար հետ: Լվանում էլի նրա ճերմակեղենները և վարձատրվում:

Մի անգամ ճերմակեղենն ինձ հանձնելիս ասաց.

— Ափսոս, վոր անգրագետ ես, լավ կլիներ, յեթե գրագետ դառնայիր:

— Ինչն, .....

— Գրագետ լինելն ինչլիս ե պետք: Կարծես ուզում էր նա ուսիցը մի ծանր բեռ վար իջեցնել: հանկարծ ձեռս բռնեց և գողգողալով ասաց.

— Սարը-Քյոխեք, գալիս եմ ինձ մտո. .

Մի շաբաթից հետո մենք ամուսնացանք: Նրա հետ անցկացրած որիբը յերբեք չեմ կարող

մութանայ: Նա ինձ ազատեց անգրագիտութիւնից,  
կարճ ժամանակից հետո դրում, կարդում ելի:  
Յես մոռացել եի կյանքիս բոլոր դասնություն-  
ները: Աշնանը նորից վերագածքանք գլուզ: Նրա  
հետ միասին շեմացրած ոջախի քաղցրությունն  
այն եր, վոր յես ել մասնակցում եյի նրա դպրո-  
ցական արխատանքներին, ուղղում եյի նոր գրել  
ոկտոզ աշակերտների տետրակները:

Բայց այս բազմավոր սրերը լերկար չտե-  
վեցին:

Մի որ, բեկի սղան ձի նստած անցնում  
եր մեր դասն առջևից: Ուսանողական շորեր  
եր հազած: Մշակն ուղարկեց մեր անից ջուր  
ուզելու. մշակը ջուրը տարավ և լետ դարձավ,  
բերելով իր հետ մի նամակ: Կարդացի: Նա  
դրում եր. «Էքեզ սիրում եմ, ուզում եմ տանել»:  
Մի քանի սրից հետո ստացա մի ուրիշ նամակ,  
վոր գրված եր ավելի սպառնական: Յես այս  
բոլորը ծածկում եյի իմ ամուսնուց:

Վերջապես՝ նորից մնացի անտեր...

Սարը-խալան մի բողե լոեց, կարմիր լա-  
շակով սրբում եր արցունքները: Այն, նա լաց եր  
լինում, բոլորից ուրախ և ժպտուն: Սարը խալան  
լաց եր լինում:

Գյուղը վերադառնալուց 20 որ հետո,  
շարունակեց Սարը-խալան, — մի առավոտ ու-

սուցչի դիակը գտան քոի ավին, ժայտերի մեջ:  
Առաջուց խեղդել և հետո կտոր-կտոր եյին ա-  
րել նրան:

Յեվ այսպես՝ բեկի սղան ինձանից վրեժ  
լուծեց:

— Հետո ինչ լեղավ, մարդասպանը, չը-  
պատժվեց, — հարցրի յես:

— Իհ, կարծես ամեն բանից բխաբար  
լինեք, ինչ պեղեք լինեք: Հալըը հարուստ, անվա-  
նի մարդ եր, կառավարական պաշտոնյաներին  
կաշառեց գործերը դրստեց:

Իսկ յես և փոքրիկ Սելիմեն անտեր մնա-  
ցինք: Սիլիմեն հոր սպանվելուց լերկու աժիս  
հետո ծնվեց:

Յես այլևս դյուզում չեյի կարող մնալ: Տե-  
ղափոխվեցի քաղաք և սրա-նրա տանն աշխա-  
տեցի:

\* \*  
\*

Համաշխարհային պատերազմի պատճառով,  
ապրելը շատ դժվար եր:

Մի որ ծախեցի ինչ վոր ունեյի և յեկա  
Բագու: Շատ ման գալուց հետո, վերջա-  
պես... Տեղավորվեցի ծխախոտի գործարանում:

Հոկտեմբերյան հեղափոխութունը փոխել  
եր բոլոր գործերը:

Հեղափոխութեան յերկրորդ ուրը, մայիսի 1-ին, բոլոր բանվորներն ու կարմիր բանակա-  
յինները ցույցի ելին յելեւ: Այժմյան «26»-ի ան-  
վան հրապարակում կատարված զորահանդիսում  
յես ել կայի: Հանկարծակի մի յերևույթ սառե-  
ցրեց, կանգնեցրեց ինձ: Զորահանդեսից անցնող  
հեծեղազորքերի մեջ տեսա Գյուլբալային: Անշուշտ  
կհիշեք այս անունը: — Սա իմ առաջին ամուսինն  
եր:

— Գուլբալան, — կանչեցի հանկարծ: Նա չորս  
կողմը նայում, իրեն կանչողին եր փնտրում:  
Յես ձեռքի նշանով կանչեցի: Նա ինձ տեսնե-  
լուն պես, նախ՝ զարմացած և հետո ճանաչելով՝

— Սարը-քոյնեկ, — պուռաց նա և ձիուց ցած  
իջնելով՝ վզով փաթաթվեց, — Ո՛հ, Սարը-քոյնեք  
վնդ իս գու, — ասաց և միջանի անգամ համբու-  
րեց ինձ:

Ժողովուրդը զարմացած մեզ եր նայում: Յես  
թե լաց եյի լինում և թե ծիծաղում, իսկ աղ-  
ջիկս — Սելիմեն շվարած նայում եր մեզ:

Քսան տարվա բաժանումից հետո մենք նորից  
միացանք:

Գյուլբալան յեկավ մեր տունը: Յեղելու-  
թյունը պատմեցի նրան մանրամասնորեն. նա  
Սելիմեյին ընդունեց իբրև իր աղջական:

վերջացան քաղաքցիական կռիվները:

Գյուլբալան զինվորական ծառայութունից  
ազաղատված՝ աշխատում եր նավթահանքերում:  
Իսկ յես, վորպես գրագետ, նշանակվեցի հանգըս-  
տյան տան վարիչ:

Հոգնել եր Սարը-խալան: Վտաքի յեխելով,  
ասաց նա.

— Գիշերն անցնում ե, գնանք: Քեզ անհան-  
գըստացրի:

Ողը պարզ եր և խաղաղ: Աստղերը փայ-  
լում, պսպղում լինե:

Յերեք ժամ տևող այս խոսակցութունը,  
Սարը-քոյնեքի պատմութունը հնարավոր եր  
գետեղել 3-4 եջից բաղկացած մի գրքուկում,  
վոր, կարծես, գրված, պատրաստ վիճակում  
գնում եր ինձ հետ միասին:



Ց Ա Ն Կ

|   | Եջ  |
|---|-----|
| 1. Կաշառվածք . . . . .                      | 3   |
| 2. Յերեք շրջանների կենդանի արևիվը . . . . . | 39  |
| 3. Նշանածի աչքերը . . . . .                 | 58  |
| 4. Կարաթել . . . . .                        | 71  |
| 5. Յերբ մեռելները պարում են . . . . .       | 87  |
| 6. Կահրամանի ոտմանը . . . . .               | 100 |
| 7. Ռաֆայել . . . . .                        | 115 |
| 8. «Սարը քյոյնեք» (դեղին շապիկ) . . . . .   | 154 |



«Ազգային գրադարան»



NL0382971



73.802

ԳԻՆԸ 60 ԿՈՊ. (5<sup>1</sup>/<sub>4</sub> մ.)

907



Գ. ՆԱՅԱՐԼԻ  
Ր Ա Տ Տ Կ Ա Յ Ի

Госиздат ССР Армении  
Эривань — 1981